# ԵԿԵՂԵՑՈՒ ԾՆՈՒՆԴԸ ԵՎ ՏԱՐԱԾՈՒՄԸ

## 10 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՌՆԱՐԿ

**ՄԱՍ II**

**19-36 դասեր**

ԵՐԵՎԱՆ-2010

ՀՏԴ
ԳՄԴ
Ե

Ե ԵԿԵՂԵՑՈՒ ԾՆՈՒՆԴԸ ԵՎ ՏԱՐԱԾՈՒՄԸ: 10 տարեկան երեխաների քրիստոնեական ուսուցման ձեռնարկ: Մաս II, 19-36 դասեր / Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին. - Եր.: 2010թ.-128էջ:

ԳՄԴ

ISBN

© World Vision, 2010
© Wordirect, 2010

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ Բ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԵՒ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅԱՑՆՈՂ՝ **ԱՐԺ. ՏԵՐ ՊԱՐՈՒՅՐ ՔԱՀԱՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ **WORLD VISION**
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

World Vision Armenia

ԵՎ **WORDIRECT** ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ՆԿԱՐԻՉ՝ **ԼԵՎՈՆ ՋԱՔՅԱՆ**

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ՝ **ՅՈՒԼՅԱՆԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ԳԼՈՒԽ 6

Զորացած Սուրբ Հոգով . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 7

19. Ենեասի բժշկումը և Տաբիթայի հարությունը . . . . . . . . . . . . . . . . 9

20. Եկեղեցու տարածումը . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 15

21. Պողոսը դարձի է բերում շատերին Փիլիպպեում . . . . . . . . . . . 21

22. Առաքելական ուղղորությունններ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 27

ԳԼՈՒԽ 7

Դեպի աշխարհի չորս ծագերը . . . . . . . . . . . . . . . . 33

23. Կորնթոսի եկեղեցու հիմնադրումը . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 35

24. Եկեղեցին Եփեսոսում . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 41

25. Պողոսի ճառը Եփեսոսի երեցներին . . . . . . . . . . . . . . . . . . 47

26. Պողոսը Երուսաղեմում հանդիպում է իր բարեկամ
իսրայելացիներին . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 53

ԳԼՈՒԽ 8

Սուրբ Հոգին առաջնորդում է Եկեղեցին
դեպի ճշմարտություն . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 59

27. Հիսուսը պատկերն է աներևույթ Հոր . . . . . . . . . . . . . . . . . . . . . 61

28. Համախոհ լինենք Հիսուս Քրիստոսով . . . . . . . . . . . . . . . . . . . . . 67

29. Ապրենք Աստծո Տանը՝ եկեղեցում . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 73
30. Մենք ընդմիշտ կլինենք Տիրոջ հետ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 79

ԳԼՈՒԽ 9
Հավատարիմ Քրիստոսի ուսմունքին . . . . . . . . . . 85

31. Վերանորոգվենք Հոգով . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 87
32. Խոսքը լսողնե՛ր և կատարողնե՛ր լինենք . . . . . . . . . . . . . . . . . . . 93
33. Քրիստոնեական ապրելակերպի մասին . . . . . . . . . . . . . . . . . . . . 99
34. Ապրենք և առաջնորդվենք Սուրբ Հոգով . . . . . . . . . . . . . . . . . . .105

ԳԼՈՒԽ 10
Առաքյալների գործերը
շարունակվում են մեր Եկեղեցում . . . . . . . . . . . . 111

35. Մենք եկեղեցի ենք գնում և աշխատում միասին . . . . . . . . . . . . 113
36. Մենք հասնում ենք մարդկանց հոգևոր կարիքներին . . . . . . . . . 119

Հավելված . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 125

Աղոթքներ 10 տարեկանների համար . . . . . . . . . . . . . . . . . . . . . 126

ԳԼՈՒԽ 6

# ԶՈՐԱՑԱԾ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՎ



Հիսուս Քրիստոսը խոստացավ, որ միայնակ չպիտի թողնի իր հետևորդներին: Այլ Սուրբ Հոգուն կուղարկի առաջնորդելու նրանց և զորացնելու կատարել այն գործը, որի համար նրանց ուղարկեց ասելով. «Գնացե՛ք, ուրեմն, և բոլոր ժողովուրդներին իմ աշակերտնե՛րը դարձրեք: Մկրտեցե՛ք նրանց Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով: Սովորեցրե՛ք նրանց այն բոլոր պատվիրանները, որ տվեցի ձեզ» (Մտ 28.19-20ա):

Այս գլխում պիտի ուսումնասիրենք Հիսուս Քրիստոսի աշակերտների կատարած գործերը, որոնցով նրանք սկսեցին տարածել Ավետարանը Երուսաղեմից դուրս:



## Ծնողների համար

Այս գլխում ներկայացվում են երիփասարդ Եկեղեցու կյանքում Սուրբ Հոգու ազդեցությամբ կատարված հրաշալի գործերը: Սուրբ Հոգու օգնությամբ և առաջնորդությամբ էր, որ առաքյալները ի զորու եղան Հիսուս Քրիստոսի Փրկության Ավետարանը քարոզել մարդկանց՝ Երուսաղեմի սահմաններից դուրս:

Դասերում պատմվում են տարբեր տեսակի մարդկանց դարձի գալու, բժշկվելու, մահացածին Հիսուս Քրիստոսի անունով հարություն տալու և մարդկանց միջև հաշտություն հաստատելու մասին:

Առաքյալների քարոզչական գործունեությամբ երիփասարդ Եկեղեցու աճումն ու զարգացումը վկայում է Սուրբ Հոգու ներկայության և ներգործության մասին, ինչը խոստացվել էր Հիսուս Քրիստոսի կողմից:

ԴԱՍ 19

# ԵՆԵԱՍԻ ԲԺՇԿՈՒՄԸ ԵՎ ՏԱԲԻԹԱՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ

*«Հիսուսը բժշկում է քեզ. վե՛ր կաց անկողնուցդ»:*

*Հմմտ. Գործք առաքելոց 9.34*

## ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

Երբևէ լսե՞լ ես հետևյալ արտահայտությունը. «Մինչև աչքովս չտեսնեմ, չեմ հավատա»: Երբեմն որևէ բանի հաստատ համոզվելու լավագույն ձևը տեսնելն է:



Օրինակ՝ ասենք, թե դու ապրել ես աշխարհի մի այնպիսի վայրում, որտեղ անապատի նման միշտ տաք է ու շոգ: Քեզ համար անսովոր չէի՞ն լինի փարթամ կանաչ բույսերն ու արևադարձային ծաղիկները: Եթե մեկը փորձեր ասել քեզ, որ աշխարհի մեկ այլ կողմում միշտ ցուրտ է և ջրերի վրա լողում են սառցե մեծ բեկորներ, դու հազիվ թե հավատայիր: Դու նախ կուզեիր սեփական աչքերով տեսնել այդ ամենը:

- *Մտածի՛ր մի բանի մասին, որը պետք է տեսնեիր հավատալու համար: Գրի՛ր դրա մասին կամ նկարի՛ր ներքևում.*

- *Դիշի՛ր մի վայր կամ բան, որի մասին միայն լսել ես և դժվարացել հավատալ, բայց գիտես, որ այն իրականում գոյություն ունի: Գրի՛ր դրա մասին կամ նկարի՛ր, թե այն քո պատկերացմամբ ինչպիսի՞ տեսք կունենար, երբ մեկ օր աչքով տեսնես:*

- *Կարդա՛* ***Աստվածաշնչի պատմությունը*** *և պարզի՛ր, թե ինչպե՞ս Պետրոս առաքյալն օգնեց մարդկանց հավատալ Հիսուս Քրիստոսին՝ ըստ իր տեսածի:*

# ՊԵՏՐՈՍԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

*Հմմտ Գործք առաքելոց 9.32-43*



Պետրոս առաքյալն այս ու այն կողմ էր ճամփորդում՝ այցի գնալով հավատացյալներին: Նա գնում է Լիդդա և հանդիպում նրանցից մի քանիսի հետ:

Ենեաս անունով հավատացյալներից մեկը շատ հիվանդ էր և արդեն ութ տարի պառկած էր իր մահճի մեջ: Պետրոսն նրան ասաց.

-Ենեա՛ս, Տերը՝ Հիսուս Քրիստոսը, բժշկում է քեզ, վե՛ր կաց և դու ի՛նքդ հարդարիր քո անկողինը:

Եվ նա իսկույն վեր կացավ: Երբ Լիդդայի և Սարոնայի բոլոր բնակիչները տեսան նրան և հավատացին Տիրոջը:

Հոպպեում էր Տիրոջ աշակերտներից մի կին՝ Տաբիթա անունով, որ թարգմանաբար կոչվում էր Այծեմնիկ: Նա շատ բարի գործեր էր անում և օգնում էր շատերին:

Երբ Պետրոսը գտնվում էր Լիդդայում, այդ օրերին Այծեմնիկը հիվանդացավ ու մահացավ: Ընկերները լողացրին նրան և դրեցին վերնատանը: Եվ քանի որ Լիդդան մոտիկ էր, աշակերտները Հոպպեից երկու հոգու ուղարկեցին Պետրոսի մոտ, որ անհապաղ իրենց այցելի:

Պետրոսը նրանց հետ գնաց Հոպպե, և աշակերտները նրան փարան վերնատուն, որտեղ դրված էր Այծեմնիկի մարմինը: Կային այրիներ, որ լաց էին լինում: Նրանք Պետրոսին ցույց տվեցին այն զգեստները, որ Այծեմնիկն էր կարել իրենց և այլ կարիքավորների համար:

Պետրոսը բոլորին դուրս հանելով սենյակից՝ ծնրադրեց, աղոթեց և ապա դառնալով մահացած կնոջն ասաց.

-Տաբիթա՛, Տեր Հիսուս Քրիստոսի անունով եմ ասում, վե՛ր կաց:

Տաբիթան բացեց աչքերը և տեսնելով Պետրոսին՝ուղղվեց նստեց: Պետրոսն օգնեց նրան, որ ոտքի կանգնի: Ապա կանչեց հավատացյալներին և այրի կանանց ու ցույց տվեց կենդանացած Այծեմնիկին:






**Բառարան**

**ՍԱՐՈՆԱ՝**

դաշտավայր, որտեղ գտնվում էր Լիդդան:

## Խորհենք պատմության շուրջ

*Քննարկման հարցեր.*

1. Պետրոսն ինչպե՞ս պատրաստվեց՝ Տաբիթայի կյանքի վերադարձնելու համար:
2. Պետրոսն ինչո՞ւ մյուսներին ներս կանչեց սենյակ Տաբիթային հարություն տալուց հետո:

*Աջ կողմի բառացանկից լրացրո՛ւ նախադասությունների դատարկ թողնված տեղերը:*

1. *Այսօրվա պատմության մեջ բժշկված մարդու անունը ______________________ էր:*
2. *Նա ապրում էր ______________________ :*
3. *Տեսնելով նրա հետ պատահածը՝ նրա համաքաղաքացիներից շատերը, և մեկ այլ քաղաքից՝ ______________________, դարձի եկան:*
4. *Հարություն առած կինն ապրում էր ______________________ :*
5. *Նրա անունը եբրայերեն Տաբիթա էր, որը հայերեն թարգմանվում էր ______________________:*

**Բառացանկ՝**

*Այծեմնիկ*

*Լիդդա*

*Հոպպե*

*Ենեաս*

*Սարոնա*

# Սամսոն հյուրասերի աղոթքը Քրիստոսին



1. Մենք Սամսոնի մասին լսել ենք Հին Կտակարանից: Աստվածաշունչը պատմում է մեզ, նա ուժեղ մարդ էր, ով կորցրեց իր ուժը:
2. Բայց Սամսոն անունով մեկ այլ անձ ապրել է շատ դարեր անց, հռոմեական կայսրության օրոք: Դա Հիսուս Քրիստոսից հետո 6-րդ դարն էր:
3. Այս Սամսոնը ծնվել է հռոմեացի հարուստ ընտանիքում: Նա շատ լավ կրթություն է ստացել: Ամենից ավելի նա սիրում էր ուսումնասիրել բժշկությունը և թե ինչպես բուժել հիվանդներին:
4. Սամսոնը նաև քրիստոնյա էր և ուզում էր օգնել մյուս մարդկանց: Չափահաս տարիքում նա տեղափոխվում է Կոստանդնուպոլիս և բնակվում փոքրիկ տնակում՝ առանց այն ճոխությունների ու հարմարավետության, որ ուներ Հռոմում:
5. Սամսոնը շուտով լայն ճանաչում գտավ շնորհիվ իր հյուրասիրության: Նա դրամ, դեղեր, խորհուրդ, մխիթարություն ու հույս էր տալիս ցանկացած մեկին, ով տառապում էր մարմնական կամ հոգեկան ցավերից:
6. Կոստանդնուպոլսի եպիսկոպոսապետի՝ պատրիարքի ականջին է հասնում լուրերը Սամսոնի բարի գործերի մասին՝ հոգուտ կարիքավորների: Նա Սամսոնին քահանա է ձեռնադրում:
7. Դրանից հետո Հուստինիանոս Մեծ կայսրը, ով քրիստոնյա էր, ծանր հիվանդանում է: Բժիշկները կայսեր հիվանդությունը բուժող որևէ ճար չեն կարողանում գտնել:
8. Հուստինիանոսը շատ էր աղոթում: Երազում Տեր Հիսուս Քրիստոսը երևում է նրան և հայտնում, որ Սամսոնը կարող է նրան բուժել:
9. Կայսեր հրամանով Սամսոնը ներկայանում է թագավորական պալատ: Սամսոնն արդեն տարեց մարդ էր: Նա աղոթեց Հիսուս Քրիստոսին, որ կայսրը բուժվի:
10. Սամսոնն իր աղոթքով իսկապես բուժեց կայսրին: Երբ Հուստինիանոսը նրան մեծ գումար առաջարկեց, Սամսոնը շնորհակալություն հայտնեց, սակայն մերժեց որևէ բան վերցնել:
11. Սամսոնն ասաց. «Ո՛վ արքա, ես ունեի ոսկի և ամեն տեսակի հարստություն, բայց ես թողեցի դրանք ի սեր Քրիստոսի, որպեսզի վաստակեմ երկնավոր ու հավիտենական գանձեր»:
12. Կայսրը պնդեց, որ պետք է մի բան անի նրա համար: Սամսոնն աղոթեց Հիսուս Քրիստոսին, որ օգնի իրեն արքայից խնդրելու լավագույնը:
13. Սամսոնն աղոթքի մեջ գտավ պատասխանը: Նա կայսրին խնդրեց մի տուն կառուցել աղքատների համար: Տան կառուցումից հետո երկար տարիներ նա այնտեղ խնամում էր աղքատներին հարազատ զավակների պես:
14. Սամսոնը մահացավ խաղաղության մեջ 530 թ. հունիսին: Նրան կոչեցին «հյուրասեր»՝ շնորհիվ իր ազնվության, բժշկումների, մխիթարության և սիրո, որ ցուցաբերեց շատ ու շատ մարդկանց:

## Աղոթքի խոսքեր

Ահա որոշ աղոթքներ, որ արտասանում ենք եկեղեցում: Դրանք ցույց են տալիս, թե ինչպես ենք ապավինում Հիսուս Քրիստոսի զորությանը բժշկելու մարդկանց և օգնելու նրանց նեղության ու կարիքի մեջ կարևոր որոշումներ կայացնել:

Ծանոթացի՛ր այս աղոթքներին, ապա գրի՛ր քո ինքնուրույն աղոթքը: Գուցե գրես մի աղոթք՝ խնդրելով Հիսուս Քրիստոսի օգնությունը որևէ մեկին, կամ հորինես մի աղոթք կյանքդ հուզող մի իրավիճակի մասին:

*Հա՛յր գթության և Աստվա՛ծ ամենայն մխիթարության, որ մխիթարում ես մեզ մեր ամեն տեսակի նեղության պահերին, լսիր և այժմ Քո ծառաների պաղատանքը՝ ընդունելով մեր աղաչանքները: Քո բարերարությամբ մեզանից հեռո՛ւ վանիր մեզ պատուհասող հանցանքների ցասումը: Ների՛ր և լսի՛ր մեզ, քավի՛ր և թողությո՛ւն տուր մեր մեղքերին, արժանի՛ արա գոհությամբ փառավորելու Քեզ Որդուդ և Սուրբ Հոգուդ հետ. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:*

*(Ճաշու 6-րդ ժամերգություն)*

*Հիշի՛ր, Տե՛ր, Քո պաշտոնյաներին, մեր ծնողներին, ուսուցիչներին, եղբայրներին ու քույրերին, ընկերներին, մեզ կերակրողներին, ուխտավորներին, ճանապարհորդներին, ծերերին, խոստովանողներին, ապաշխարողներին, գերիներին, հիվանդներին, նեղյալներին, իշխաններին, չարագործներին, բարեգործներին, մեր թշնամիներին, ապեւլիներին և բոլոր նրանց, ովքեր պատվիրեցին մեզ հավատով:*

*(Երեկոյան ժամերգություն)*

*Գրի՛ր քո աղոթքը ներքևի տողերին.*

## Մենք աղոթում ենք Հիսուս Քրիստոսի անունով

Վաղ Եկեղեցու ծոցում պահանվել է հետևյալ կարճ աղոթքը, որը քրիստոնյաները սիրում էին հաճախակի արտասանել՝ սրտի զարկերի կամ շնչառության ռիթմով.

***Տե՛ր Հիսուս Քրիստոս, Որդի՛ Աստծո, ողորմի՛ր ինձ՝մեղավորիս:***

Այն մեզ հայտնի «Տեր ողորմեա» աղոթքի թերևս հնագույն տարբերակներից է: Աղոթքը կարելի է ասել ամեն պահի, այլ ոչ թե միայն օրվա հատուկ ժամերի: Այն կարելի է արտասանել քայլելիս, հեծանիվ քշելիս, մեքենայում, սենյակ մաքրելիս, դպրոցում, աշխատելիս, ցերեկը, թե գիշերը:

Սովորի՛ր Հիսուսին ուղղված այս աղոթքը և հաճա՛խ արտասանիր:

Տեր Հիսուս Քրիստոս, Որդի Աստծո,

*Ընթերցի՛ր ներքևի ստուրգրային հղումները և դրանցից յուրաքանչյուրի թիվը գրի՛ր աղոթքին պատշաճող հատվածի գծի վրա:*

***Տե՛ր, Հիսուս Քրիստոս, _______ Որդի՛ Աստծո, _______***

***ողորմի՛ր ինձ՝_______ մեղավորիս: _______***

1. *«Հիսո՛ւս Քրիստոս, որդի՛ Դավթի, ողորմի՛ր ինձ»: (Ղուկաս 18.38)*
2. *«Աստված, ողորմի՛ր ինձ՝ մեղավորիս»: (Ղուկաս 18.13)*
3. *«Դո՛ւ ես Քրիստոսը, կենդանի Աստծո Որդին»: (Մատթեոս 16.16)*

Որդի Աստծո, ողորմիր ինձ՝ մեղավորիս:

Տեր Հիսուս Քրիստոս,

ողորմիր ինձ՝ մեղավորիս:

## ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Այս շաբաթվա դասին աշակերտները սովորեցին Պետրոս առաքյալի՝ մարդուն բժշկելու և մահացած կնոջը հարություն տալու մասին: Սա մի օրինակ է, թե ինչպես առաքյալները հրաշքներ գործելով մարդկանց ցույց տվեցին Հիսուս Քրիստոսի զորությունը (բժշկում, հարություն տալ մահացածին), որոնք մարդիկ կարող էին տեսնել իրենց սեփական աչքերով: Երեխաները ծանոթացան նաև բժշկելու, մխիթարելու և օգնելու որոշ աղոթքների, որոնք Եկեղեցին մատուցում է Հիսուս Քրիստոսին՝ հանուն բոլոր մարդկանց: Այս աղոթքները ցույց են տալիս, թե ինչպես մենք, որպես քրիստոնյաներ, ապավինում ենք Հիսուս Քրիստոսի անունը կանչելու զորությանը՝ ինչպես առաքյալներն արեցին և ինչպես Պետրոսը կապարեց Տաբիթա անունով կնոջը մահացածներից հարություն տալով:

Ընտանիքով ջանացե՛ք հաճախ արտասանել հիշյալ աղոթքը: Քաջալերե՛ք միմյանց աղոթել, երբ մենակ եք լինում: Իբրև ընտանեկան մեկ այլ վարժություն՝ կազմե՛ք մարդկանց անվանացանկ, որոնց համար պիտի աղոթե՛ք: Մեկ այլ անձի անունը կարելի է տեղադրել աղոթքի «ինձ՝ մեղավորիս» բառերի փոխարեն:

Վարժվե՛ք հավաքվել՝ միասին աղոթելու ընտանիքի յուրաքանչյուր անդամի, անվանացանկի մարդկանց և յուրաքանչյուրդ առանձնաբար ձեզ համար:

ԴԱՍ 20

# ԵԿԵՂԵՑՈՒ ՏԱՐԱԾՈՒՄԸ

*«Եվ առաջին անգամ Անտիոքում էր, որ Քրիստոսի հետևորդները կոչվեցին քրիստոնյա»:*

*Գործք առաքելոց 11.26*

## ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

Երբևէ եղե՞լ ես այլ երկրում: Ոմանք մեկնում են արտագնա աշխատանքի: Ուրիշներ այցելում են իրենց հարազատներին ու բարեկամներին: Իսկ ոմանք էլ գնում են նոր երկրներ, որովհետև պարզապես սիրում են ճամփորդել և «տեսնել աշխարհը»:

Եթե մեկնեիր մի նոր երկիր, ի՞նչ կծրագրեիր անել տեղ հասնելուց հետո: Նշո՛ւմ կատարիր ցանկագրված գործողությունների սկզբում, որ կուզեիր անել: Կարող ես, ըստ ցանկության, ավելացումներ կատարել ցանկում:

___ Սովորել տվյալ երկրի լեզվով բարևել, ասել ցտեսություն և շնորհակալություն:

___ Շատ նկարվել:

___ Նախկինում երբեք չկերած խորտիկներ համտեսել:

___ Քայլել կամ արշավել երկրի տեսարժան վայրերում:

___ Ծանոթանալ ու շփվել տեղացիների հետ:

___ Հաճախել սպորտային կամ համերգային միջոցառման:

___ Հուշանվերներ գնել:

___ Ավտոբուս նստել և գնալ ուզածդ տեղը:

___ ______________________________________________

___ ______________________________________________











*Կարդա՛ **Աստվածաշնչի պատմությունը**՝ պարզելու, թե ինչպես աշակերտները գնացին նոր երկրներ քարոզելու և ուսուցանելու համար:*

# ՊՈՂՈՍՆ ՈՒ ԲԱՌՆԱԲԱՍԸ ՔԱՐՈԶՈՒՄ ԵՆ ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ

*Հմմտ Գործք առաքելոց 11.19-26, 12.25-13.12*



Մենք գիտենք, թե Ստեփանոս նախասարկավագի մահից հետո որքան մեծ հալածանքներ սկսվեցին քրիստոնյաների դեմ: Սա պատճառ դարձավ, որ հավատացյալները ցիրուցան լինեն տարբեր կողմեր: Շատերը գնացին հեռավոր Փյունիկե, Կիպրոս և Անտիոք: Այս նոր վայրերում նրանք քարոզում էին Աստծո Խոսքը հրեաներին: Իսկ ոմանք, ովքեր Կիպրոսից ու Կյուրենիայից էին, գնացին Անտիոք և այնտեղ քարոզեցին նաև հեթանոսներին: Աստծո զորությունը նրանց հետ էր, և մեծ թվով մարդիկ դարձի եկան:

Բազմաթիվ նորադարձների բարի լուրը հասավ Երուսաղեմի եկեղեցուն: Այստեղից Բառնաբասին ուղարկեցին Անտիոք՝ օգնելու գործին: Երբ նա հասավ Անտիոք և տեսավ, թե ինչպես է Աստծո շնորհը գործում, շատ ուրախացավ: Նա քաջալերում էր հավատացյալներին հավատարիմ մնալու Տիրոջը: Բառնաբասը բարի մարդ էր, լի Սուրբ Հոգով և տոկուն հավատի մեջ: Բառնաբասը գնաց Տարսոն փնտրելու Պողոսին և եկ բերելու Անտիոք: Մի ամբողջ տարի նրանք հանդիպումներ էին ունենում տեղի հավատացյալների հետ՝ ուսուցանելով հավատը: Եվ առաջին անգամ այստեղ՝ Անտիոքում էր, որ Քրիստոսի հետևորդները կոչվեցին «քրիստոնյա»:

Պողոսն ու Բառնաբասը նպաստ տարան Երուսաղեմ, որպեսզի օգնեն մարդկանց դիմադրելու սովը: Ապա վերադարձան Անտիոք՝ իրենց հետ բերելով աշակերտներից մեկին՝ Հովհաննես Մարկոսին: Այսպիսով, Անտիոքի եկեղեցում կային մի քանի մարգարեներ և ուսուցիչներ՝ Պողոսը, Բառնաբասը, Շմավոնը, Ղուկիոսը և Մանայենը, ով Հերովդես արքայի պալատի անդամ էր:

Մինչ բոլոր մարդիկ պաշտում էին Աստծուն աղոթքով և ծոմապահությամբ, Սուրբ Հոգին ասաց.

-Տրամադրեցե՛ք Բառնաբասին և Պողոսին այն գործի համար, որին ես կոչել եմ նրանց:

Այն ժամանակ նրանք ծոմապահությամբ և աղոթքով իրենց ձեռքերը դրեցին Բառնաբասի ու Պողոսի վրա և օրհնելով ուղարկեցին:

Ուստի նրանք, Սուրբ Հոգուց ուղարկված, իջան Սելևկիա և այնտեղից նավով գնացին դեպի Կիպրոս: Սալամինա (Կիպրոսի ամենամեծ քաղաքը) հասնելով՝ նրանք քարոզեցին Աստծո Խոսքը հրեաների ժողովարանում: Հովհաննես Մարկոսն աշխատում էր նրանց հետ: Նրանք ճամփորդեցին ամբողջ կղզով մեկ և եկան Պափոս: Այստեղ նրանք հանդիպեցին մի մոգի՝ սուտ մարգարեի, Բարեհեսու անունով: Նա ապրում էր փոխբդեշխ Սերգիոս Պողոսի հետ: Սա իմաստուն մարդ էր և ուզում էր Պողոսից ու Բառնաբասից լսել Աստծո Խոսքը: Բայց կախարդը, որին Եղիմաս անունն էին տալիս հունարենով, հակառակվեց նրանց և ուզում էր տարհամոզել փոխբդեշխին, որ չհավատա: Պողոսը, Սուրբ Հոգով լցված, ուղիղ նայեց Եղիմասի աչքերի մեջ և ասաց.

-Ո՛վ դու նենգ, խորամա՛նկ մարդ, Սատանայի որդի, արդարությա՛ն թշնամի, չե՛ս դադարելու Տիրոջ ուղիղ ճանապարհները խեղաթյուրելուց: Ահա Տերը հիմա կհարվածի քեզ. դու կույր կլինես և միաժամանակ արևի երես չես տեսնի:

Նույն վայրկյանին Եղիմասի աչքերը մշուշապատվեցին ու խավարեցին: Նա խարխափում էր և փնտրում մեկին, որ իր ձեռքից բռնելով՝ առաջնորդեր իրեն: Փոխբդեշխը, երբ տեսավ պատահածը, հավատաց՝ խորապես ապավորված Տիրոջ ուսուցումից:

## Խորհենք պատմության շուրջ

1. *Ընդգծի՛ր պատմության այն բառերը, որոնք հուշում են, թե ով առաքյալներին ուղարկեց դուրս քարոզելու:*

2. *Ընդգծի՛ր պատմության այն բառերը, որոնք նկարագրում են երկու բաներ, որ առաքյալներն արեցին մյուսների համար:*

### Բառարան

**ԲԴԵՇԽ**

Հռոմեական կայսրությունը բաժանված էր նահանգների ու գավառների: Բդեշխը տվյալ նահանգի կամ գավառի բարձրագույն պաշտոնյան էր:

3. *Կարդա՛ Գրծ 6.6 համարը: Գրի՛ր կամ նկարի՛ր համանում մի դեպք, որ պատահեց այսօրվա դասի պատմության մեջ:*

4. *Կարդա՛ Գրծ 9.8 համարը: Գրի՛ր կամ նկարի՛ր համանում մի դեպք, որ պատահեց այսօրվա դասի պատմության մեջ:*



Անփիոքի եկեղեցին այսօր



Կիպրոսի եկեղեցին այսօր

# Պողոսի և Բառնաբասի առաքելական ճամփորդության հետքերով

*Նշի՛ր հետևյալ վայրերը քարտեզի վրա.*




1. *X նշան դի՛ր այնտեղ, որտեղ հավատացյալներն առաջինը քրիստոնյա կոչվեցին:*
2. *Աստղանիշ դի՛ր Կիպրոսի կղզու ամենամեծ քաղաքի կողքին:*
3. *Շրջագծի՛ր այն քաղաքը, ուր Պողոսն ու Բառնաբասը հասան դեպի Կիպրոս կղզի նավարկելիս (այստեղ նրանք հանդիպեցին Եղիմաս սուտ մարգարեին):*
4. *Վանդակի՛ մեջ առ այն քաղաքը, որի քրիստոնյաներին Բառնաբասն ու Պողոսը նպաստ տարան սովից փրկելու համար:*
5. *Նշի՛ր այն քաղաքը, ուր Բառնաբասը գնաց գտնելու Պողոսին, որպեսզի ետ բերի նրան Անտիոք՝ այնտեղի հավատացյալներին օգնելու համար:*

# Սուրբ Նունե կույսը




Նունեն Վրաստանի լուսավորիչ սուրբն է և հիշատակվում է Նինո անունով:

Նա Հռիփսիմյանց կույսերից մեկն էր, որ հրաշքով փրկվում է նահատակվելուց և Տիրոջ կամքով գնում Վրաստանի մայրաքաղաք Մցխեթի: Իր համեստ կենցաղով նա ներկայանում է իբրև ստրուկների դասակարգի անձ և իր բարեգործություններով շահում է ժողովրդի սերն ու համակրանքը: Նա իր կրոնական ու քարոզչական գործունեությունն սկսում է, երբ մի կին իր անբուժելի հիվանդ որդուն նրա մոտ է բերում՝ խնդրելով, որ նրան դեղ ու դարմանով բուժի: Նունեն ասում է, որ ինքը նյութական դեղ չունի, բայց իր պաշտած Աստծո Որդին՝ Հիսուս Քրիստոսը, այդպիսի հիվանդների վրա շատ բժշկություններ է արել և հավատում է, որ այս փղային ևս կբուժի: Ուստի սկսում է աղոթել, և փոքրիկը իսկապես բուժվում է՝ մեծապես ուրախացնելով մորը և հարազատներին: Լուրը հասնում է Վրաստանի Նանա թագուհուն, որն այդ օրերին ծանր հիվանդ էր: Թագուհուն բերում են Նունեի մոտ, և նա բուժվում է սուրբի աղոթքներով: Թագուհին խորապես երախտապարտ զգալով՝ ուզում է թանկագին նվերներ տալ, սակայն Նունեն մերժում է: Ապա սկսում է քարոզել Ավետարանը վրացիներին՝ հաստատելով, թե ոչ թե ինքը, այլ Քրիստոսը բժշկեց թագուհուն, և թե Հիսուսը պատրաստ է բժշկելու նրա նաև հոգու հիվանդությունները, եթե կամենա քրիստոնյա դառնալ: Թագուհին սիրով համաձայնվում է:

Պալատ վերադառնալուն պես թագավոր ամուսինը՝ Միհրանը, չափազանց ուրախանում է և հրամայում է թանկագին նվերներ ուղարկել Նունեին: Թագուհին հայտնում է, որ այդ կինը նվերներ չի ընդունում, «սակայն մեր շնորհակալությունը հայտնած կլինենք նրան, եթե երկուսս էլ պաշտենք նրա քարոզած Աստծուն, որի զորությամբ ասաց, թե բժշկել է ինձ»: Թագավորն այդ պահին լուրջ չի ընդունում կնոջ առաջարկը: Սակայն մի օր որսի գնալիս իր ընկերների հետ հայտնվում են թանձր մառախուղի մեջ և կորցնում վերադարձի ճանապարհը: Ճարահատ վիճակում հանկարծ միտքն է գալիս թագուհուն ասածները Աստծո մասին: Նա դիմում է Աստծուն և խոստանում հավատալ և հետևել Նրան, եթե ազատվի թանձր մշուշից: Այդ պահին անթափանց մառախուղը միանգամից վերանում է, և ինքը բարեհաջող վերադառնում է պալատ: Կնոջը պատմում է պատահարի մասին, և երկուսով գնում են Նունեի մոտ: Թագավորը խնդրում է, որ իրեն ևս պատմի Աստծո և Նրա Որդի Հիսուս Քրիստոսի մասին: Նունեի քարոզությունը լսելուց հետո թագավորը նույնպես պատրաստակամություն է հայտնում քրիստոնյա դառնալ: Պալատ վերադարձին կանչում է երկրի բոլոր նախարարներին, պատմում իր և իր կնոջ հետ պատահած հրաշքների մասին և հաստատում իր համոզումը, թե Քրիստոսն է ճշմարիտ Աստվածը, և քրիստոնեությունն է ճշմարիտ կրոնը: Նունեի խորհրդով պատգամավորներ են ուղարկվում Հայաստան, Սբ Գրիգոր Լուսավորչի և Տրդատ արքայի մոտ՝ հոգևորականներ խնդրելով մկրտվելու համար: Եվ այսպես մկրտվում են վրաց թագավորը, թագուհին, ամբողջ արքունիքը և հազարավոր ժողովուրդ Կուր գետում: Մցխեթում կառուցվում է վրացական առաջին եկեղեցին: Այս դեպքերից հետո Նունեն շարունակում է իր քարոզչական առաքելությունը երկրի բոլոր կողմերում և ի վերջո խաղաղ մահով վախճանվում 340թ.: Նրա գերեզմանի վրա կառուցվում է փառավոր եկեղեցի, որն այսօր էլ Վրաստանի մեծագույն ուխտավայրերից է:

## Ինչպե՞ս ենք դարձել քրիստոնյա

*Պատասխանի՛ր հետևյալ հարցերին.*

1. Ո՞վ բերեց քրիստոնեական հավատքը մեր երկիր:

_______________________________________________

_______________________________________________

_______________________________________________

2. Ե՞րբ դա տեղի ունեցավ:

_______________________________________________

3. Որո՞նք են մեր երկրի քրիստոնեական պատմության կարևոր դեպքերը:

_______________________________________________

_______________________________________________

_______________________________________________

## ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Այս դասի հայեցակետը Սուրբ Պողոսի և Բառնաբասի ճամփորդությունն էր, որ Սուրբ Գրքի մեկնություններում կոչվում է «Առաքելական ուղևորություններ», ովքեր տարածեցին հավատքը նոր երկրներում: Աշակերտներն արդեն նշումներ արեցին քարտեզի վրա նրանց ճամփորդությունների վերաբերյալ, և դասում նշվում էր, թե ինչպես Եկեղեցու աճմանը զուգընթաց աշակերտները պետք է հոգ տանեին օրեցօր շատացող քրիստոնյաներին:

Դասում ներկայացվեց նաև 4-րդ դարում ապրած Սբ Նունեի վարքը, որը Սբ Հռիփսիմյանց անդամներից էր: Նա Հայաստանում որոշ ժամանակ իր ընկերուհիների հետ ապրելուց հետո մեկնում է Վրաստան և քարոզում Քրիստոսի Ավետարանը: Երեխաներին հանձնարարվեց կապակցել Եկեղեցու վաղ դարերի աշակերտների գործը ավելի ուշ շրջանի սուրբերի, ինչպես օրինակ՝ Սբ Նունեի ուղևորության և քարոզչական առաքելության հետ:

Ընտանիքով զրուցե՛ք, թե ինչպես քրիստոնեական հավատքը մուտք գործեց մեր երկիր: Թող երեխան պատմի, թե ինչ սովորեց այս ամենի մասին դասարանում, և կիսե՛ք ձեր իմացած տեղեկություններն ու պատմությունները միմյանց հետ:

Այս թեմաների շուրջ զրուցելիս մտածե՛ք այն եղանակների մասին, որոնցով դուք ևս կկարողանաք «տարածել հավատքը»՝ առ այդ ուրիշների հետ խոսելով, ինքնուրույն խորամուխ լինելով այն հարցերի մեջ, որոնք հնարավոր է տրվեն մյուսների կողմից, և աղոթքով խնդրելով, որ Աստված օրհնի և առաջնորդի ձեզ նախաձեռնությունը:

ԴԱՍ 21

# ՊՈՂՈՍԸ ԴԱՐՁԻ Է ԲԵՐՈՒՄ ՇԱՏԵՐԻՆ ՓԻԼԻՊՊԵՈՒՄ

*«Հավատա՛ Տեր Հիսուս Քրիստոսին և կփրկվես քո ամբողջ ընտանիքով»:*
*Գործք առաքելոց 16.31*

## ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ



### Ծրագրերի փոփոխում

- Շա՜տ լավ, Սոնա, - կանչեց մայրը, - արդեն ժամանակն է գնալու, և խնդրում եմ հոնքերդ չկիտես:

Սոնան դժկամությամբ հետևեց մորը, և միասին գնացին հարևան Լալայենց տուն: Նրանք պիտի պահեին Լալայի երկու երեխաներին, որպեսզի Լալան կարողանար գնալ աշխատանքի:

Քայլելիս Սոնան մտածում էր կյանքի անարդար լինելու մասին: Այսօր ինքը մայրիկի հետ կարող էր ազատ ժամանակ անցկացնել փանը՝ վայելելով միասին կարկանդակներ թխելու հաճույքը: Ինչո՞ւ Լալան օրերից հենց այսօր զգաց մեր օգնության կարիքը: Էլ ուրիշ մարդ չկա՞ր, որ օգներ նրան: Սոնան այս մտքերից ավելի խոժոռեց դեմքը:

Արդեն երեկո էր, երբ տուն վերադարձան: Սոնայի մռայլված դեմքին հանդարտ ժպիտ երևաց: Մայրիկն ասաց.

- Կեցցե՛ս, դու շատ լավ պահեցիր երեխաներին: Լալան շատ գոհ էր քեզանից: Սոնան պատասխանեց.

- Ինչնէ, այսօր գեղեցիկ օր էր: Ես ուրախ էի, որ կարողացա երեխաներին ինչ-որ կերպ զբաղեցնել: Նաև ես բավական բան սովորեցի նայելով, թե դու ինչպես էիր վարվում նրանց հետ:

- Դա այդպես էր, քանի որ ես արդեն ունեի որոշակի փորձառություն, - ասաց մայրը, - չէ՞ որ ես այդպես էի խնամել իմ լավ բալիկին՝ քեզ անուշիկս:

Սոնան հարցրեց.

- Մայրի՛կ, քո կարծիքով ես լա՞վ ուսուցիչ էի երեխաների համար:

Մայր պատասխանեց.

- Այո՛, դու հիանալի ուսուցիչ էիր: Բայց մինչև դասարանում անելիքներիդ մասին մտածելը, արի՛ տեսնենք, թե ինչ համով բան պիտի պատրաստենք միասին այսօր, լա՞վ:

- Հրաշալի է, - ասաց Սոնան, - հենց որ ուտելիքից են խոսում, ախորժակս բացվում է , չճաշե՞նք:

*Կարդա՛ **Աստվածաշնչի** այսօրվա պատմությունը և տե՛ս, թե ինչպե՛ս աշակերտների ու հավատացյալների ծրագրերը անսպասելիորեն փոխվեցին:*

# ՊՈՂՈՍԸ ԵՎ ՇԻՂԱՆ ՏԱՐԱԾՈՒՄ ԵՆ ՀԱՎԱՏԸ

*Համփ Գործք առաքելոց 16.11-40*



Մենք (Պողոսը, Շիղան և նրանց ուղեկիցները) ճամփորդեցինք Մակեդոնիա քարոզելու: Նավով դուրս եկանք Տրովադայից և ուղղվեցինք դեպի Սամոթրակե, ապա Նեապոլիս (Նոր քաղաք), իսկ այնտեղից էլ՝ դեպի Փիլիպպ, որ Մակեդոնիայի նահանգի առաջին գավառի մի քաղաքն է և հռոմեական գաղթավայր:

Մի քանի օր մնացինք այնտեղ: Այնուհետև քաղաքից դուրս գնացինք դեպի գետի կողմը, որտեղ մարդիկ հավաքվում էին աղոթելու: Մենք քարոզեցինք հավաքված կանանց, որոնց մեջ էր նաև Լիդիան՝ Թիատիր քաղաքից: Նա ծիրանի զգեստներ վաճառող էր, բայց և աստվածավախ կին էր: Տերն ինքը բացեց նրա միտքը, որ անսա Պողոսի խոսքերին: Եվ երբ մկրտվեցին ինքն ու իր ընտանիքը, նա աղաչեց մեզ՝ ասելով.

- Եթե ինձ Տիրոջը հավատացող եք համարում, եկեք մնացե՛ք իմ տանը:

Եվ ստիպեց, տարավ մեզ:



Պատահեց, որ երբ կրկին գնում էինք աղոթքի վայրը, մեր դեմն ելավ մի ստրուկ աղախին, որ մի հարցուկ ոգի ուներ իր մեջ և իր գուշակություններով ահագին շահ էր բերում իր տերերին: Այս կինը Պողոսի և մեր ետևից էր գալիս՝ աղաղակելով.

- Այս մարդիկ Բարձրյալ Աստծո ծառաներն են, որոնք փրկության ճանապարհն են քարոզում ձեզ:

Երբ օրեր շարունակ այս բանը կրկնվեց, Պողոսի համբերությունը սպառվեց, և նա, դառնալով չար ոգուն, ասաց.

Հիսուս Քրիստոսի անունով հրամայում եմ քեզ, դո՛ւրս ել դրա միջից:

Նույն վայրկյանին ոգին դուրս ելավ: Երբ աղախնի տերերը տեսան, որ իրենց շահի աղբյուրը կտրվեց, բռնեցին Պողոսին ու Շիղային ու քաշեցին տարան հրապարակ՝ իշխանությանը հանձնելու: Նրանց բերեցին դատավորների մոտ՝ քաղաքում խռովություն հրահրելու և հրեական սովորությունները քաջալերելու մեղադրանքով, ինչը ընդունելի չէր հռոմեացիների համար: Ամբոխը թափվեց նրանց վրա: Դատավորները պատռել տվեցին նրանց հագուստները և հրամայեցին գանահարել, ապա բանտ նետեցին:



Կեսգիշերին, մինչ Պողոսն ու Շիղան աղոթում և օրհներգում էին Աստծուն, հանկարծ տեղի ունեցավ այնիսի ուժեղ մի երկրաշարժ, որ բանտի հիմքերը սասանվեցին: Նույն վայրկյանին բոլոր դռները բացվեցին, և բոլորի կապանքները քանդվեցին: Երբ բանտապետն արթնացավ, ուզում էր ինքնասպան լինել՝ կարծելով թե բանտարկյալները փախել են: Սակայն Պողոսը բարձր ձայնով կանչեց.

-Մի՛ արա, կանգնի՛ր, բոլորս էլ այստեղ ենք:

Բանտապետը մեծապես ազդվեց այս երևույթից և Տիրոջ խոսքերից, որ Պողոսն ասաց նրան: Նա և նրա ամբողջ ընտանիքը մկրտվեցին այդ գիշեր:

Հաջորդ օրը քաղաքի դատավորները բանտապետին հրամայեցին, որ ազատ արձակի Պողոսին և Շիղային: Իսկ Պողոսն ասաց.

-Հրապարակորեն գանահարել տվեցին մեզ և մեզ բանտ նետեցին, մենք, որ անմեղ ենք և մանավանդ հռոմեացի, և հիմա թաքուն-թաքո՞ւն են դուրս հանում մեզ: Ո՛չ, դուրս չենք գա: Թող իրենք գան և դուրս հանեն մեզ:

Դատավորները, երբ լսեցին, թե հռոմեացի են, վախեցան. եկան, ներողություն խնդրեցին Պողոսից ու Շիղայից և ազատ արձակեցին: Իսկ նրանք, բանտից դուրս գալով, գնացին Լիդիայի տուն, որտեղ հավատացյալ եղբայրներին տեսնելով՝ քաջալերեցին նրան և մեկնեցին:

**Բառարան**

**ՀԱՐՑՈՒԿ ՈԳԻ՝** մարդ, որ գուշակություններ է անում կեղծ միջոցներով, այլ ոչ թե Սուրբ Հոգու ներշնչմամբ:

## Խորհենք պատմության շուրջ

*Խմբով ավարտե՛ք հետևյալ նախադասությունները՝ ըստ պատմության կերպարների:*

1.  Ինչ-որ անակնկալ բան պատահեց ինձ հետ, երբ ________________________________

________________________________________________________________

2.  Ինչ-որ անակնկալ բան պատահեց ինձ հետ, երբ ________________________________

________________________________________________________________

3.  Ինչ-որ անակնկալ բան պատահեց ինձ հետ, երբ ________________________________

________________________________________________________________

## Քարտեզով աշխատանք



# Նահատակ Պրոկոպիոսը և «Անակնկալ Այցելուն»

Պրոկոպիոսը ծնվել է Երուսաղեմում: Նրա ծննդյան անունը Նեանիոս էր: Հորը կորցրեց երիտասարդ տարիքում, և մայրը դաստիարակեց նրան՝ պաշտել տալով Հռոմի կուռքերին:

Բոլոր առողջ տղամարդկանց նման Նեանիոսը պետք է ծառայեր հռոմեական բանակում, և նա շատ լավ զինվոր դարձավ: Բանակային այն դասակը, որի մեջ էր նաև Նեանիոսը, հատուկ նշանակության ջոկատ էր, որ ընտրվել էր հենց կայսեր կողմից: Մի օր նրանց հրամայվում է գնալ Եգիպտոսի Ալեքսանդրիա և սպանել տեղի բոլոր քրիստոնյաներին:



Զինվորները կամաց-կամաց պատրաստվում էին արշավել քաղաքի վրա: Այդ ընթացքում Նեանիոսը մի տարօրինակ փորձառության հանդիպեց: Գիշերվա ժամը երեքն էր: Հանկարծակի մի լուսապայծառ շողացող խաչ հայտնվեց մթնած երկնքում: Մի ձայն էր հնչում խաչից, որ ասում էր. «Նեանի՛ոս, այդ ո՞ւր ես գնում և ո՞ւմ դեմ ես կռվում»:

Երիտասարդ զինվորը քարացավ: Նա հազիվ էր կարողանում խոսել և ի վերջո շշնջաց. «Ո՞վ ես դու, Տե՛ր, ես քեզ չեմ ճանաչում»:

Տեր Հիսուս Քրիստոսը խոսեց կրկին խաչի վրայից: Նա ասաց. «Քեզ տեսանելի այս նշանով հաղթի՛ր քո թշնամիներին: Իմ խաղաղությունը թող քեզ հետ լինի»:

Այս ամենը լսելուց լիովին փոխվեց Նեանիոսի կյանքը: Նա թեքվեց Ալեքսանդրիա տանող ճանապարհից և վերադարձավ Երուսաղեմ: Այնտեղ նա հայտարարեց մորը և բոլորին, որ ինքը գիտի, որ քրիստոնյա է:

Այդ օրերի շատ հավատացյալների նման Նեանիոսը կրակն ընկավ իր հավատը խոստովանելու պատճառով: Նա կանչվեց ատյան հարցաքննության և դատավորի առջև ցած նետեց իր զինվորական գոտին և սուրը: Ապա ասաց. «Այսուհետ ես կլինեմ միայն Քրիստոս Թագավորի զինվորը»:

Նեանիոսին բանտը գցեցին: Այնտեղ Հիսուս Քրիստոսը կրկին այցելեց նրան՝ մկրտելով և նրան նոր անունով՝ Պրոկոպիոս կոչելով: Զորացած այս իրադարձությունից՝ Պրոկոպիոսը Տիրոջ մասին պատմեց իր բարեկամ բանտակիցներին: Նրանցից շատերը նույնպես հավատի դարձան:

Պրոկոպիոսը հավատի համար մահվան դատապարտվեց: Գլխատման վայրում նա վեր կանգնած բարձրացրեց իր ձեռքերը և աղոթեց աղքատների ու կարիքավորների, այրիների և բոլոր հուսալքվածների համար: Նա աղոթում էր, որ աճի քրիստոնեական հավատն ամբողջ աշխարհում: Ապա նա հանգիստ դրեց գլուխը դահիճի սրի տակ: Դեպքը տեղի ունեցավ 303 թ. պաղեստինյան Կեսարիայում:

## ՆԱՀԱՏԱԿ ՊՐՈԿՈՊԻՈՍՆ ԱՂՈԹՈՒՄ Է

*Ներքևի տողերի վրա գրի՛ր մի կարճ աղոթք, որ Պրոկոպիոսը գուցե ասած լիներ գլխատման վայրում:*

## Նրանք ինչպե՞ս էին նման իրար



Սուրբ Պողոս



Նահատակ Պրոկոպիոս

| Սուրբ Պողոս | Նահատակ Պրոկոպիոս |
| --- | --- |
| Սուրբ Պողոսը ծրագրեց հալածել քրիստոնյաներին: | |
| Սուրբ Պողոսին տեսիլքում հայտնվեց Հիսուս Քրիստոսը: | |
| Սուրբ Պողոսի անունը փոխվեց: | |
| Մենք փակավին կարդում են Սուրբ Պողոսի գրվածքները: | |
| Սուրբ Պողոսը բանտ գցվեց իր հավատի համար: | |

## Հավատի վկայություն տալ

Դու երբևէ առիթ ունեցե՞լ ես հավատդ խոստովանելու կամ հավատիդ մասին վկայություն տալու անսպասելի մի վայրում կամ իրավիճակում: *Ներքևի տողերի վրա գրի՛ր դրա մասին:*

## ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Այս դասի հայեցակետն այն էր, որ երբ առաքյալները դուրս եկան քարոզելու Ավետարանը, նրանք երբեմն պետք է փոխեին իրենց ծրագրերն ըստ Սուրբ Հոգու թելադրության, որպեսզի անսպասելի դեպքեր կապարվեին նրանց և ուրիշների կյանքում:

Դասում ներառնված էր մի պատմություն և քննարկում, թե ինչպես են մեր սեփական ծրագրերը երբեմն փոփոխվում: Նրանում ընդգրկված էր նաև այն փաստը, որ անսպասելի դեպքեր տեղի են ունենում մեր սեփական կյանքում: Աստված կարող է գործել այնպիսի եղանակներով, որ մենք չեն կարող և չպետք է կանխատեսենք:

Նահապակ Պրոկոպիոսը, որի մասին կարդացինք այսօրվա դասում, այցելություն գտավ Տեր Հիսուս Քրիստոսից: Դա լիովին անակնկալ էր, ինչը փոխեց նրա կյանքը հռոմեական բանակի զինվոր լինելուց դեպի Քրիստոսի «զինվորը» և մարտիրոսը դառնալը:

Ընտանիքով զրուցե՛ք ձեր կյանքում պատահած անսպասելի դեպքերի շուրջ, որոնք թերևս բարի արդյունք են ունեցել ձեզ համար: Միասի՛ն արտասանեք հետևյալ աղոթքը, որը շատ լավ սկիզբ կլինի օրվա համար, եթե այն միասին արտասանեք առավոտյան:

**Հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու. Ամեն**

***Բարերա՛ր Տեր, Քո խաղաղության հրեշտակին առաքի՛ր մեզ, որպեսզի գալով անխռով պահի մեզ ցերեկը, թե գիշերը, մեր հանգստյան, թե արթուն պահերին: Եվ մենք գոհանալով փառավորենք Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:***

ԴԱՍ 22

# ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*«Եվ քանի որ Աստծո զավակներն ենք, ինչպե՞ս կարող ենք մտածել, թե աստվածությունը նման է ոսկով, արծաթով կամ քարով շինված և մարդկային ճարտարության ու մտքի ծնունդ եղող քանդակների»:*
*Գործք առաքելոց 17.29*

## ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ



Ենթադրենք՝ ունես երեք ընկեր, ովքեր երբեք խնձոր չեն փեսել կամ կերել: Դու պիտի օգնես քո ընկերներին և սովորեցնես վայելել խնձորի համը, քանի որ ինքդ գիտես, թե որքան լավն է: Ի՞նչ կասեիր խնձորների մասին ընկերներիցդ յուրաքանչյուրին:

*Գրի՛ր քո պատասխանները:*

- Առաջին ընկերդ նկարիչ է, ով սիրում է հարուստ գույներ:

- Երկրորդ ընկերդ սիրում է թթվաշ բաներ ուտել:

- Երրորդ ընկերդ շատ մտահոգված է առողջարար սննդով:

- *Կարդա՛ **Աստվածաշնչի** այսօրվա պատմությունը և պե՛ս, թե ինչպե՛ս Սուրբ Պողոսը խոսեց հավատի մասին տարբեր մարդկանց հետ տարբեր եղանակներով:*

# ՊՈՂՈՍԸ ՔԱՐՈԶՈՒՄ ԵՎ ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ Է ՀՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ

*Հմմտ. Գործք առաքելոց 17*

Պողոսը և Շիղան անցան Ամփիպոլիս ու Ապողոնիա քաղաքներով և հասան Թեսաղոնիկե:

Սովորության համաձայն, Պողոսը մտավ տեղի հրեաների ժողովարան: Նա ասաց հավաքված հրեաներին. «Հիսուսը, ով մահացավ և հարություն առավ, Մեսիան է` խոստացված Փրկիչը»:



Որոշ հրեաներ, բարեպաշտ շատ հույներ և մի քանի երևելի կանայք միացան Պողոսին և Շիղային: Իսկ մյուս հրեաներն ամբոխ կազմեցին և սկսեցին փնտրել այդ երկուսին: Չկարողանալով գտնել նրանց` նրանք Յասոնին և որոշ եղբայրների քարշ տվեցին քաղաքի իշխանավորների առաջ: Ապա սկսեցին բացականչել.

-Սրանք, որ աշխարհը տակնուվրա արեցին, այստեղ էլ են հասել, և Յասոնը նրանց ընդունել է: Եվ սրանք բոլորը կայսեր հրամաններին հակառակ են գործում. մի ոմն Հիսուսի մասին ասում են, թե թագավոր է:

Եվ այսպիսով գրգռեցին ժողովրդին և քաղաքապետերին: Բայց երաշխիք ստանալով Յասոնից և ուրիշներից` արձակեցին նրանց: Նույն գիշեր հավատացյալները Պողոսին և Շիղային ճանապարհեցին դեպի Բերիա, որտեղ նույնպես գնացին ժողովարան: Ժողովուրդը սիրով ընդունեց նրանց ուղերձը և քննեց Սուրբ Գիրքը` տեսնելու, թե նրանց ասածները ճշմարի՞տ են: Նրանցից շատերը հավատացին, ինչպես նաև բավական մեծ թվով երևելի հույն պղամարդիկ և կանայք:

Պողոսը գնաց Աթենք: Քաղաքի փողոցներով քայլելիս փխրում էր` ամենուր տեսնելով ժողովրդի կռապաշտությունը: Նա սրա մասին խոսում էր հրեաների և հեթանոս նորադարձների հետ ժողովարանում և հրապարակում: Նաև բանավիճում էր այն մարդկանց հետ, ովքեր հետևում էին հունական իմաստասիրությունը: Այս մարդիկ Պողոսին խնդրեցին գալ Արիսպագոս: Ապա հարցրին.

-Կարո՞ղ ենք իմանալ, թե ի՞նչ է այդ նոր վարդապետությունը, որի մասին խոսում ես: Օտարոտի բաներ ասացիր մեզ. ուզում ենք իմանալ, թե ի՞նչ են դրանք (ընդհանրապես բոլոր աթենացիներն ու այնտեղ բնակվող օտարականներն ուրիշ զբաղմունք չունեին, բացի վերջին նորությունններն ասելուց կամ լսելուց):

Պողոսն ասաց հավաքվածներին.

-Ո՛վ աթենացիներ, տեսնում եմ, որ դուք ծայրաստիճան կրոնասեր եք: Քաղաքով շրջելիս տեսա մի բագին, որի վրա գրված էր. «Անծանոթ Աստծուն»: Ահա ում որ դուք առանց ճանաչելու եք պաշտում, ես նո՛յնն եմ քարոզում ձեզ: Այն Աստվածը, որ ստեղծեց աշխարհը և ամեն ինչ, որ կա նրա մեջ, նա, որ Տերն

է երկնքի և երկրի, որ ո՛չ ձեռակերտ տաճարներում է բնակվում և ո՛չ էլ մարդկանց կողմից ծառայության է կարոտում մարդկանց նման, նա՛ է, որ բոլորին կյանք, շունչ և ամեն ինչ է տալիս: ...Ինչպես ձեր բանաստեղծներից մեկն էլ ասել է. «Մենք նրա զավակներն ենք»: Եվ քանի որ Աստծո զավակներն ենք, ինչպե՞ս կարող ենք մտածել, թե աստվածությունը նման է ոսկով, արծաթով կամ քարով շինված և մարդկային ճարտարության ու մտքի ծնունդ եղող քանդակների: ...Նա սահմանել է մի օր, երբ արդարությամբ պիտի դատի ամբողջ աշխարհը մի մարդու ձեռքով, որի միջոցով ուզեց հավատ ներշնչել բոլորին՝ նրան հարություն տալով մեռելներից:

Պողոսը հեռացավ Աթենքից, ոմանք միացան նրան և դարձան հավատացյալներ: Նրանց մեջ էին Դիոնիսիոս Արիսպագացին, Դամարիս անունով մի կին և ուրիշներ:

**Բառարան**

**ԱՐԻՍՊԱԳՈՍ՝**

Աթենքում մի վայր, որտեղ հասարակությունը բացօթյա բանավեճեր էր անցկացնում: Այսպես էր կոչվում նաև Աթենքի քաղաքային կարևոր խորհուրդը՝ բարձրագույն պալատը, որի ժողովները գումարվում էին այստեղ: Դիոնիսիոս Արիսպագացին այս խորհրդի անդամներից էր: Տեղը թարգմանաբար նշանակում էր Արեսի բլուր:

## Լրացրո'ւ նախադասությունը

1. Պողոսը քարոզում էր Թեսաղոնիկեի հրեաներին՝ ...

2. Բերիայի հրեաները պատրաստակամորեն ընդունեցին Պողոսի խոսքերը, ապա նրանք ...

3. Աթենքում Պողոսը մտահոգվեց՝ տեսնելով ...

4. Պողոսն ասաց աթենացիներին, որ Աստված որևէ բանի կարիք չունի, որովհետև ...

5. Պողոսն աթենացիներին ասաց նաև, որ Աստված օր է սահմանել ...

## Քարտեզով աշխատանք

*Շրջագծի՛ր 2 քաղաքներից մեկը, որոնցով անցավ Պողոսը Թեսաղոնիկե գնալու ճանապարհին:*

*Ասպղանի՛շ դիր այն քաղաքի կողքին, որտեղ Յասոնն ապրում էր:*

*Վանդակի մեջ առ՛ այն քաղաքը, որտեղի բնակիչները ընդունեցին Պողոսի և Շիղայի ուղերձը:*




*Նշի՛ր այն քաղաքը, որտեղ գտնվում էր Արիսպագոսը:*

## Ի՞նչ ես կարծում

*Ուսումնասիրի՛ր քարտեզը և նշի՛ր այն բոլոր քաղաքները, ուր Պողոսն այցելեց, ապա գրի՛ր քո մտածումները հետևյալ հարցերի մասին:*

- Քո կարծիքով նա ինչպե՞ս ճամփորդեց՝ ցամաքո՞վ, թե՞ ծովով:
- Որքա՞ն էր պնում, քո կարծիքով, մի քաղաքից մյուսն անցնելը:
- Կուզեի՞ր լինել Պողոսի ուղեկիցներից մեկը: Ասա՛ ինչո՞ւ կամ ինչո՞ւ ոչ:
- Կարդա՛ **Գործ 17.13-15** հատվածը և որոշի՛ր, թե Պողոսն ինչպե՞ս ճամփորդեց Աթենք՝ ցամաքո՞վ, թե՞ ծովով: Քո պատասխանը ներկայացրո՛ւ պատկերելու միջոցով:

# Սբ Դիոնիսիոս Արիսպագացին



Մենք գիտենք, որ Սուրբ Պողոսը գտավ ճիշտ եղանակը խոսելու հավատի մասին տարբեր տեսակի մարդկանց հետ: Մենք ընթերցեցինք մեծ թվով մարդկանց հավատի դարձնելու նրա հաջողությունների մասին: Բայց ոմանք, ինչպես արդեն գիտենք, ծաղրեցին ու մերժեցին նրան: Երբեմն նա մարմնական հարձակման ենթարկվեց, ծեծվեց և բանտ նետվեց այն մարդկանց կողմից, ովքեր չէին ցանկանում լսել նրա խոսքերը:

Աթենքում Պողոսի քարոզությունը լսողներից մեկն էր Դիոնիսիոսը: Այս աթենացին ուներ լավ կրթություն և սիրում էր սովորել: Տարիներ առաջ նա գնացել էր Եգիպտոս՝ աստղագիտություն սովորելու նպատակով: Այնտեղ նրա հետ պատահածը փոխեց նրա կյանքը: Նա տեսավ արևի խավարումը, որը տեղի ունեցավ խաչի վրա Հիսուս Քրիստոսի մահանալու ժամանակ: Չնայած նա քրիստոնյա չէր, բայց հասկացավ, որ դա շատ կարևոր իրադարձություն է: Նա ասաց.



-Կա՛մ աշխարհի արարիչն է տառապում այս պահին, կա՛մ էլ եկել է աշխարհի վերջը:

Աթենք վերադառնալով նա ընտրվեց Արիսպագոսի անդամ: Ապա, լսելով Պողոսի քարոզությունը, նրան պարզ դարձավ Եգիպտոսում իր տեսած արևի խավարման իրական նշանակությունը: Նա քրիստոնյա դարձավ և Պողոսի հետ ճամփորդեց՝ հավատը քարոզելու համար: Տարիներ անց Պողոսը նրան նշանակեց Աթենքի եպիսկոպոս:

Դիոնիսիոսը Աթենքից ուղևորվեց դեպի Երուսաղեմ՝ տեսնելու Մարիամին՝ Տեր Հիսուս Քրիստոսի մորը: Այնքան տպավորվեց նրա սիրառատ և լուսավոր ներկայությունից, որ հետևյալ խոսքերով նկարագրեց.

-Մարիամից բխող շնորհը լցվեց իմ սիրտը և ցնցեց իմ հոգին: Անհնար էր դիմանալ այն մեծ օրհնությանը, որ ես տեսա նրա մեջ:

Դիոնիսիոսը ներկա էր Աստվածամոր մահվանը 57թ.:



Պողոսի մահից հետո Դիոնիսիոսը որոշեց քարոզության գնալ արևմուտք: Երկու ընկերների՝ Ռուստիկոս քահանայի և Էլևթերիոս սարկավագի հետ ուղևորվեց Հռոմ: Այնտեղ այս երեք քրիստոնյաները դարձի բերեցին շատերին: Ապա անցան Գերմանիա և Իսպանիա՝ նույնպես քարոզելու: Ոմանք թշնամաբար վերաբերվեցին նրանց, իսկ ոմանք էլ դարձան հավատացյալ:

Վերջապես նրանք մեկնեցին Ֆրանսիա, որտեղ տեղական իշխանությունները հալածում էին քրիստոնյաներին: Նրանց բանտ գցեցին և մութը չընկած, հասկացան, որ շուտով մահվան պիտի դատապարտվեն: Խավար գիշերվա մեջ, սառն ու խոնավ բանտախցում Դիոնիսիոսն ընկերակիցների հետ պատարագ մատուցեց: Հաջորդ առավոտյան նրանց գլխատեցին:

Դիոնիսիոս Արիսպագացին գրել է շատ գրքեր: Դրանցից չորսը այսօր լայնորեն ընթերցվում են ուղղափառ քրիստոնյաների կողմից: Այս գրքերում Դիոնիսիոսը գրում է հրեշտակների դասերի և Եկեղեցու խորհուրդների մասին: Նաև գրում է աղոթքի մասին՝ որպես սրտերն ազնվացնող մի միջոցի, որով հնարավոր է մոտենալ Աստծուն:

Երբևէ ունեցե՞լ ես մի փորձառություն, որ իմաստավոր կամ կարևոր է դարձել ոչ թե այդ վայրկյանին, այլ հետագայում:

*Ներքևում գրի՛ր դրա մասին:*



Պողոսը և ավելի ուշ Դիոնիսիոս Արիսպագացին քաջաբար արտահայտեցին իրենց հավատը այն մարդկանց, ովքեր չէին ճանաչում Հիսուս Քրիստոսին կամ նույնիսկ չէին կամենում հավատալ նրան:

Եթե ոչ քրիստոնյայի հետ խոսեիր քո հավատի մասին, ի՞նչ կասեիր նրան: *Գրի՛ր պատասխանդ ներքևում:*

## ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Դասը կենտրոնացած էր այն եղանակի վրա, որով Սուրբ Պողոսը քարոզեց տարբեր մարդկանց: Նա օգտագործեց Հին Կտակարանի մարգարեությունները՝ հրեաների փոխանցելով այն միտքը, թե ինչպես Քրիստոսը եղավ դրանց լրումը, մինչ աթենացիների հետ խոսելիս հղում կատարեց հույն տարբեր փիլիսոփաների:

Պողոսը տարբեր հակազդեցությունների հանդիպեց քարոզելիս: Ոմանք ծաղրեցին նրան, ոմանք հավատացին, իսկ ոմանք էլ խիստ թշնամացան և հարձակվեցին խոսքով և ուժի կիրառմամբ: Ձեր երեխային հանձնարարե՛ք պատմել Սբ Դիոնիսիոս Արիսպագացու պատմությունը, ով քրիստոնյա դարձավ Պողոսի քարոզության: Պողոսի նման նա ինքնուրույն քարոզեց Ավետարանը տարբեր տեսակի մարդկանց և դիմակայեց տարբեր տեսակի հակազդեցությունների:

Ընտանիքով զրուցե՛ք որոշ եղանակների մասին, որոնցով կկարողանաք խոսել ձեր քրիստոնեական հավատի մասին տարբեր տեսակի մարդկանց հետ: Ինչպե՞ս կմոտենայիք մտավորական մարդկանց, ինչպե՞ս՝ կյանքում նեղություններ ու ցավ ապրողներին: Ի՞նչ տեսակի հակազդեցություններ մարդիկ կարող են դրսևորել և ինչպե՞ս հնարավոր կլիներ դիմակայել դրանց:

Միասին աղոթե՛ք, որ Աստված առիթներ պարգևի ձեզ ուրիշներին խոսելու հավատի մասին և առաջնորդի ձեր ընթացքը լավագույն եղանակով հավատի սերմը սերմանելու նրանց հոգիներում:

ԳԼՈՒԽ 7

# ԴԵՊԻ ԱՇԽԱՐՀԻ ՉՈՐՍ ԾԱԳԵՐԸ



Այս գլխում պիտի սովորենք, թե ինչպես Կորնթոսի և Եփեսոսի եկեղեցին հիմնադրվեց Պողոս առաքյալի քարոզչական գործունեության շնորհիվ: Պողոսը նաև գնաց Երուսաղեմ, որպեսզի իր բարեկամ հրեաներին պատմի հեթանոսների դարձի գալու մասին:



### Ծնողների համար

Աստծո Խոսքը հասավ Կորնթոսի և Եփեսոսի հեթանոս բնակչությանը շնորհիվ Պողոս առաքյալի քարոզչական գործունեության: Պողոսը նաև գնաց Երուսաղեմ՝ իր բարեկամ հրեաներին պատմելու հեթանոսների դարձի գալու մասին:

ԴԱՍ 23

# ԿՈՐԹՆՈՍԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ

*«Տերը Պողոսին ասաց.*
*«Խոսի՛ր առանց վախենալու, լուռ մի՛ մնա»:*
*Գործք առաքելոց 18.9*

## ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

Երբևէ սովորե՞լ ես մի նոր բան և ցանկացել այն կիսել մյուսների հետ: Երբևէ պարզե՞լ ես մի բան, որը լավ և օգտակար կլիներ, որ քո ընկերները ևս իմանային:



Մեր ընկերները հաճախ տարբեր կերպ են ընդունում նոր գաղափարները: Նրանք երբեմն հետաքրքրությամբ են վերաբերվում դրանց և ուզում են ավելին իմանալ, իսկ երբեմն էլ՝ անտարբերությամբ:



*Գրի՛ր սովորածդ այն նոր բանի մասին, որը փոխանցել ես մեկ ուրիշին: Գրի՛ր, թե ինչպես նա ընդունեց այդ նորությունը: Գրի՛ր նաև, թե որքանո՞վ քո ասածները հետաքրքրեցին կամ, ընդհակառակը, չհետաքրքրեցին նրան:*

*Ընթերցի՛ր **Աստվածաշնչի** այսօրվա պատմությունը և տե՛ս, թե ինչպես ոմանք ընդունեցին և ոմանք էլ ընդդիմացան Պողոսի ասածներին:*

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

# ՊՈՂՈՍԸ ՔԱՐՈԶՈՒՄ ԵՎ ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ Է ԿՈՐՆԹՈՍՈՒՄ

*Հմմտ Գործք առաքելոց 18.1-23*



Աթենքում քարոզելուց հետո Պողոսը գնաց Կորնթոս: Այնտեղ հանդիպեց Ակյուղաս անունով մի հրեայի հետ, որի կնոջ անունը Պրիսկիղա էր: Նրանք նոր էին եկել Իտալիայից, քանի որ Կլավդիոս կայսեր հրամանով բոլոր հրեաները պետք է հեռանային Հռոմից: Պողոսի նման՝ Ակյուղասը և Պրիսկիղան արհեստով վրանագործներ էին, որով և Պողոսը մնաց նրանց մոտ, և նրանք աշխատեցին միասին: Ամեն շաբաթ օր Պողոսը գնում էր ժողովարան՝ քարոզելու Ավետարանը հրեաներին ու հույներին:

Երբ Շիղան և Տիմոթեոսը ժամանեցին Մակեդոնիայից, Պողոսն ամբողջ հոգով ճիգ էր թափում՝ վկայությամբ ապացուցելու հրեաներին, որ Հիսուսն է սասված Փրկիչը՝ Քրիստոսը: Եվ երբ նրանք հակառակվեցին և հայհոյեցին իրեն, Պողոսը, իր զգեստները թափ տալով, ասաց.

-Այսուհետև կգնամ հեթանոսներին քարոզելու:



Պողոսը գնաց Տիտոս Հուստոս անունով աստվածապաշտ մի մարդու տուն: Շատ կորնթացիներ, այդ թվում և Կրիսպոս անունով ժողովրդապետը, հավատացին և մկրտվեցին: Տերը տեսիլքի մեջ ասաց Պողոսին.

-Խոսի՛ր առանց վախենալու, լուռ մի՛ մնա, որովհետև ես քեզ հետ եմ: Ոչ մեկը քո դեմ չի ելնի և քեզ վնաս չի հասցնի, քանի որ այս քաղաքում ես մեծ թվով ժողովուրդ ունեմ:

Եվ Պողոսը մեկ տարի և վեց ամիս մնաց այնտեղ՝ նրանց ուսուցանելով Աստծո խոսքը:

Հրեա որոշ առաջնորդներ հարձակվեցին Պողոսի վրա և մեղադրեցին նրան Հռոմի այդ տարածքի ղեկավարի՝ Գաղիոնի առջև: Նրանք ասում էին.

-Սա մարդկանց դրդում է, որ մեր Օրենքին հակառակ ձևով պաշտեն Աստծուն:



Սակայն Գաղիոնն ուշադրություն չդարձրեց, նույնիսկ երբ նրանք սկսեցին ծեծել ժողովրդապետին:

Պողոսը Պրիսկիղայի և Ակյուղասի հետ գնաց Ասորիք՝ Սիրիա: Նրանք ուղևորվեցին Կենքրա, որտեղ Պողոսը գլուխը խուզեց, քանի որ ուխտ էր արել: Նրանք անցան Եփեսոս, որտեղ Պողոսը կրկին քարոզեց ժողովարանում: Նրան խնդրեցին, որ երկար ժամանակ այնտեղ մնա, բայց նա հրաժարվեց և, հրաժեշտ տալով նրանց, ասաց.

-Եթե Աստված կամենա, դարձյալ կգամ ձեզ մոտ:

Պողոսը մենակ գնաց Երուսաղեմ, ապա Անտիոք՝ ողջունելով հավատացյալներին: Այնտեղից ելավ և սկսեց շրջել նախ գաղատացիների երկրում, ապա Փռյուգիայում՝ զորացնելով Փիրոջը բոլոր աշակերտածներին:

## Խորհենք պատմության շուրջ

Այս պատմության մարդիկ տարբեր կերպ արձագանքեցին Ավետարանի խոսքին, որ Պողոսը քարոզում էր: Քո կարծիքով ո՞ր արձագանքները գոհացրեցին Պողոսին: Որո՞նք հիասթափեցրին նրան: Որո՞նք, թերևս, զարմացրին նրան:

**Բառարան**

**ՈՒԽՏ՝** խոստում տրված Աստծուն: Ուխտ կարող էր համարվել նաև սեփական մազերը կտրելը՝ ինչպես արեց Պողոսը:

*Ձեր խմբով լրացրե՛ք նախադասությունները՝ գծիկների վրա գրելով աջ կողմի սյունակից ընտրված համապատասխան ճիշտ բառերի առջևի տառերը:*

1. Հռոմի կայսրը, ով հրեաներին քշեց Իտալիայից, կոչվում էր ________ :
2. Պրիսկիղան և Ակյուղասը հոգում էին իրենց ապրուստն այս արհեստով՝ ________ :
3. Երբ Կորնթոսի ժողովարանի մարդիկ չէին լսում Պողոսին, նա ասաց, որ կգնա քարոզելու ________ :
4. Պողոսը մնաց Կորնթոսում ________ :
5. Երբ Պողոսը Կորնթոսից մեկնեց Սիրիա, նրան ընկերակցում էին ________ :
6. Պողոսը խոստացավ ________ մարդկանց՝ ասելով. «Աստծո կամքով նորից կգամ ձեզ մոտ»:

ա. վրանագործություն
բ. Տիբերիոս
գ. 3 տարի
դ. հեթանոսներ
ե. փայտագործություն
զ. Պրիսկիղա և Ակյուղաս
է. հողագործություն
ը. Դեկոս
թ. Մակեդոնիա
ժ. Կլավդիոս
ժա. 1 տարի
ժբ. Շիղա և Տիմոթեոս
ժգ.18 ամիս
ժդ.Եփեսոս

## Քարտեզով աշխատանք



# Կորնթոս քաղաքը



Հնագույն Կորնթոսն ուներ երկու նավահանգիստ՝ Կենքրան և Աքայիան: Տարբեր փեսակի մարդիկ էին անցնում ու դառնում նավահանգստային այս քաղաքով: Ինչ ասես, որ չէր պապահի զանազան մտայնության և բարքերի փեր այս բոլոր մարդկանց խառանարան Կորնթոսում: Շատ կորնթացիներ պաշտպամունք էին անում Ապոլոնի մեհյանում, որը կառուցվել էր Հիսուս Քրիստոսից հարյուրավոր տարիներ առաջ: Իսկ ոմանք էլ արհամարհում էին կրոնական ուսմունքները: Իսկապես, «ապրել կորնթացու պես» արտահայտությունը նշանակում էր ապրել անբարոյական կյանքով:

Եվ այսպես Պողոսը եկավ քարոզելու Ավետարանն այս վայրենի քաղաքում 50թ.: Նրան վիրավորեցին, ծաղրեցին և քարշ տվեցին հռոմեական ղեկավարների առջև, որոնք չօգնեցին նրան: Նրանք որևէ շահագրգռություն չունեին երկու խումբ հրեաների միջև դատ տեսնելու համար:

Եթե այսօր այցելես Կորնթոս, կտեսնես հնագույն մի արձանագրություն մսի շուկա անունով հայտնի մի շենքի պատին: Սա կարող է լինել այն նույն վայրը, որի մասին Պողոսը նշում է Կորնթոսի քրիստոնյաներին ուղղված իր նամակում: Այդուհանդերձ, հակառակ Կորնթոսում իր գլխով անցած բոլոր փորձանքների, Պողոսին հաջողվեց շատերին դարձի բերել այնտեղ: Հետագայում իր գրած նամակներով էին առաջնորդվում Կորնթոսի քրիստոնյաները: Այսօր էլ ամենուր այլ քրիստոնյաներ առաջնորդվում են նրա խոսքերով:

# Սուրբ Պողոսը գրում է Կորնթոսի քրիստոնյաներին

Սուրբ Պողոսը երկու նամակներ է ուղղել Կորնթացիներին: Առաջինը գրվել է 54թ., չորս տարի քաղաքում քարոզելուց և ուսուցանելուց հետո: Պողոսի ականջին է հասնում այն լուրը, որ շատ խնդիրներ են ծագել քրիստոնյաների մեջ: Նա գրում է նրանց հիշեցնելով, որ նրանք պատկանում են Քրիստոսին և պետք է ապրեն ճշմարիտ հետևորդների նման:

*Կարդա՛ Պողոսի՝ կորնթացիներին ուղղված առաջին նամակի 1.10-25 հատվածը և պատասխանի՛ր հաջորդ էջի հարցերին:*

«Եղբայրնե՛ր, մեր Տեր Հիսուս Քրիստոսի անունով կոչ եմ ուղղում ձեզ, որ բոլորդ միաբանվեք, և պառակտումներ չլինեն ձեր մեջ, այլ միանաք նույն մտքի և նույն խորհրդի մեջ»:

**Ա Կորնթացիներին 1.10**

1. Ո՞րն է Կորնթոսի եկեղեցու խնդիրներից մեկը, որի մասին խոսում է Պողոսը:

2. Բե՛ր համանման խնդրի մի օրինակ, որ գուցե գոյություն ունի քո եկեղեցում այսօր:

3. Աթենքում Պողոսը մտահոգվեց՝ տեսնելով ...

*Գտի՛ր իմաստության, հիմարության, տկարության և զորության մասին Պողոսի խոսքերը քո ընթերցած հատվածում և դրանք շարադրի՛ր քո ինքնուրույն բառերով ներքևի տողերի վրա: Նշի՛ր Աստվածաշնչի համարը աջ կողմի վանդակի մեջ:*

Սուրբգրային պատմության մեջ դու հանդիպել ես Ակյուղասին և Պրիսկիղային: Մենք կրկին հանդիպում ենք նրանց Ա Կորնթացիների 16-րդ գլխում: Կարդա՛ նույն գլխի 19-րդ համարը: Այն ի՞նչ է պատմում մեզ Ակյուղասի և Պրիսկիղայի՝ որպես բարեպաշտ քրիստոնյաների գործերի մասին:

## Նայենք ճաշոց գիրքը

Մեր Եկեղեցին հանձնարարում է մեզ տարվա յուրաքանչյուր օր սուրբգրային որոշակի ընթերցումներ կատարել: Ամեն օրն ունի յուրահատուկ ընթերցվածներ Հին Կտակարանից, Ավետարաններից, Առաքելական Թղթերից կամ Գործք առաքելոցից:

Նայի՛ր Ճաշոց գրքի բացված էջը, որում նշված են սուրբգրային ընթերցվածների հղումները:




- *Ընթերցի՛ր հունվար 6-ի Առաքելական թուղթը: Պողոսն ինչպիսի՞ հանձնարարություն է տալիս Տիտոսին: Արդյո՞ք այդ հանձնարարությունը վերաբերում էր միայն Տիտոսին:*

---

- *Ընթերցի՛ր հունվար 15-ի Առակները: Ի՞նչ է առաջարկվում մեզ ձեռք բերել առավել քան արծաթն ու ոսկին: Ինչո՞ւ:*

---

## ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Դասի առանցքը Սուրբ Պողոսի քարոզությունն է Կորնթոսում, որը ժամանակի վայրենի, ազատ վարքուբարքի ու տարբեր տեսակի հետաքրքրությունների տեր մարդկանցով ապրող նավահանգստային քաղաք էր:

Այս պայմաններում հայտնվում է Պողոսը՝ Տիրոջը հնազանդվելու և կյանքի լուրջ կենսակերպով ապրելու պատգամով: Դասում շեշտվում է, որ Պողոսը հանդիպեց խիստ ընդդիմության, ինչպես նաև ընդունելության: Անկախ նրանից, թե ինչպիսի հակազդեցություն ստացավ, նա երբեք չլքեց իր ծառայությունը Աստծուն և իր սերը հանդեպ այն մարդիկ, որոնց համար քարոզում էր Աստծո մասին: Մենք, որպես Հիսուս Քրիստոսի հետևորդներ, նույնպես կոչված ենք անդադար պատմել մյուսներին Տիրոջ մասին:

Կորնթացիներին ուղղված Պողոսի առաջին նամակի ամենագեղեցիկ ու ամենահայտնի հատվածներից է 13-րդ գլուխը: Այստեղ նա գրում է քարոզելու մասին և նշում է, որ ոչինչ արժե այն մարդու խոսքը, ով քարոզում է, բայց չի սիրում այն մարդկանց, որոնց ուղղված է իր քարոզը:

Միասի՛ն կարդացեք նույն գլխի 1-8ա համարները: Ձեռքի տակ ունեցե՛ք որոշ ներկեր, գունավոր մատիտներ, ստվարաթուղթ և մկրատ: Ստվարաթղթից պատրաստե՛ք էջանիշեր և բաժանե՛ք ընտանիքի անդամներին: Թող ամեն մեկն ընտրի իր սիրած հատվածը և արտագրի էջանիշի վրա՝ ըստ ցանկության նկարազարդելով կամ համապատասխան փոքրիկ պատկերներ գծանկարելով վրան:

# ԵԿԵՂԵՑԻՆ ԵՓԵՍՈՍՈՒՄ

*«Եվ այսպես մեծ զորությամբ տարածվում էր Տիրոջ խոսքը, և եկեղեցին զորանում էր»:*
*Գործք առաքելոց 19.20*

## ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

*Ընտրի՛ր մի պատասխան հետևյալներից՝ ✓ այսպես նշելով ընտրածդ պատասխանը:*

1. Ես կգերադասեի լինել.
__ հարուստ, բայց ոչ շատ առողջ:
__ աղքատ, բայց շատ առողջ:





2. Ես կգերադասեի ունենալ.
__ շատ ընկերներ, բայց ոչ մեծ անուն կամ կարևոր դիրք:
__ մեծ անուն և կարևոր դիրք, բայց քիչ մտերիմ ընկերներ:

3. Ես կգերադասեի.
__ գրել մի գիրք, որ վաճառվեր միլիոնավոր օրինակներով:
__ հայտնաբերել ծանր հիվանդություն բուժելու դեղամիջոց:





4. Ես կգերադասեի ճանաչվել որպես.
__ առատաձեռն:
__ շնորհալի:

5. Ես կգերադասեի ճանաչվել որպես.
__ ազնիվ:
__ խելացի:

6. Ես կգերադասեի ճանաչվել որպես.
__ ենթակա:
__ հաջողակ:





***Ասպվածաշնչի*** *այսօրվա պատմության մեջ փնտրի՛ր, թե ի՞նչ ընտրեցին մարդիկ իրենց կյանքի հետ կապված Սուրբ Պողոսի քարոզները լսելուց հետո:*

# ՊՈՂՈՍԸ ՇԱՏԵՐԻՆ Է ԴԱՐՁԻ ԲԵՐՈՒՄ ԵՓԵՍՈՍՈՒՄ

*Նման Գործք առաքելոց 19*



Եփեսոսում Պողոսը գտավ մի խումբ հավատացյալների, ովքեր մկրտվել էին Հովհաննես Մկրտչի կողմից: Պողոսն ասաց նրանց.

-Հովհաննեսը քարոզում էր ձեզ հավատալ նրան, ով պիտի գար իրենից հետո, այսինքն՝ Հիսուս Քրիստոսին:

Եփեսացիները, այս լսելով, մկրտվեցին Տեր Հիսուսի անունով: Իսկ երբ Պողոսը ձեռքը դրեց նրանց գլխին, Սուրբ Հոգին իջավ նրանց վրա. խոսում էին անծանոթ լեզուներով և մարգարեանում:

Պողոսը համարձակ քարոզում էր ժողովարանում: Սակայն երբ նրանցից ոմանք սկսեցին համառորեն հակաճառել և վարկաբեկել Տիրոջ վարդապետությունը, Պողոսը քաշվեց ժողովարանից և սկսեց քարոզել դպրոցում: Երկու տարի փեղի բոլոր հրեաներն ու հույները լսեցին Տիրոջ խոսքը: Այնտեղ կատարվեցին շատ հրաշքներ ու բժշկումներ, և բոլորի մեջ ահ ընկավ: Նրանք, ովքեր կախարդությամբ էին զբաղվում ժողովրդի մեջ, այրեցին իրենց մոգական գրքերը և քրիստոնյա դարձան: Մի հրեա ավագերեցի յոթ որդիները, որ շրջիկ երդվեցնողներ էին, մարդկանցից չար ոգիները հանելու համար հանդգնեցին Տեր Հիսուսի անունը գործածել՝ ասելով.

-Երդումով հրամայում եմ ձեզ այն Հիսուսի անունով, որին քարոզում է Պողոսը:

Չար ոգին պատասխանեց՝ ասելով.

-Հիսուսին գիտեմ, Պողոսին էլ ճանաչում եմ, բայց դուք ո՞վ եք:

Եվ այն մարդը, որի մեջ էր չար ոգին, հարձակվեց նրանց վրա և բոլորին մեկ առ մեկ ծեծելով քշեց այդ փնից: Երբ այս բանը հայտնի դարձավ, շատերը Եփեսոսում դարձան հավատացյալ և փառավորում էին Տեր Հիսուսի անունը:



Պողոսը, լցված Սուրբ Հոգով, գիտեր, որ պիտի գնար դեպի Մակեդոնիա և Աքայիա, այնտեղից էլ՝ Երուսաղեմ: Դրանից հետո որոշեց, սակայն, որ պիտի մեկնի Հռոմ:

Հռոմ: Նա իր օգնականներին՝ Տիմոթեոսին և Երաստոսին ուղարկեց Մակեդոնիա, իսկ ինքը մնաց Եփեսոսում:

Դեմետրիոսը մի արծաթագործ էր, որ Արտեմիս դիցուհու մեհյանի զարդաքանդակներն էր պատրաստում: Նա իր մոտ կանչեց իր արհեստակից ընկերներին և ասաց.

-Ո՜վ մարդիկ, մենք կկորցնենք մեր ապրուստը այս Պողոսի պատճառով, ով շատերին փարհամոզում է, որ մարդու ձեռքով շինված աստվածները աստված չեն: Էլ չասած, որ Արտեմիս դիցուհու մեհյանն այլևս ոչնչի պիտի վերածվի:

Մի մեծ իրարանցում սկսվեց քաղաքում՝ մինչ արծաթագործները աղաղակել.

-Մեծ է եփեսացիների Արտեմիսը:

Մարդիկ բարկացած դուրս եկան փողոցներ և մեծ խառնաշփոթություն ստեղծեցին: Ալեքսանդրոս անունով մի մարդ փորձում էր հանգստացնել մարդկանց ամբոխի մեջ, բայց նրան չէին լսում և շարունակում էին բղավել: Պողոսն ուզում էր մտնել ամբոխի մեջ, բայց նրան ուղեկիցները չթողեցին:

Վերջապես քաղաքի քարտուղարը լռեցրեց ամբոխին և ասաց.

-Ո՜վ եփեսացիներ, դուք այդ մարդկանց բերել եք այստեղ, որոնց բերել եք այստեղ ո՛չ մեհյանն են կողոպտել, ո՛չ էլ մեր դիցուհուն հայհոյել: եթե Դեմետրիոսը և նրա հետ եղող արհեստավորները մեկի դեմ բողոք ունեն, թող գնան դատարան: Այլապես մենք էլ իբրև խռովարար կարող ենք ամբաստանվել այսօրվա այս տահաժի պատճառով:

## Մտածենք պատմության շուրջ

1. Ո՞րը եղավ կախարդանքով զբաղվող մարդկանց ընտրությունը, որոնք ներկայացված էին պատմության մեջ:
2. Ինչպե՞ս կարող էր նրանց ընտրությունն ազդել իրենց կյանքի վրա հետագայում:
3. Քո կարծիքով ինչո՞ւ էին այդքան զայրացել արծաթագործները:
4. Ինչո՞ւ Պողոսի ուղեկիցները թույլ չտվեցին, որ նա մտնի ամբոխի մեջ:

### Բառարան

ԵՐԴՎԵՑՆՈՂ՝

կոչվում էին նրանք, ովքեր մարդկանցից կամ որոշ վայրերից չար ոգիներ էին հանում Աստծո անունը պարունակող հատուկ երդումի բանաձևով, որից էլ առաջացել է այս բառը:

## Դասավորի՛ր դեպքերն ըստ հաջորդական կարգի

ա. Ալեքսանդրոսին չհաջողվեց հանգստացնել ամբոխին:
բ. Տիմոթեոսն ու Երաստոսը Պողոսի կողմից ուղարկվեցին Մակեդոնիա:
գ. Դեմետրիոսը գրգռում է արծաթագործների ամբոխի զայրույթը:
դ. Երբ Պողոսը ձեռքը դնում է նոր մկրտված քրիստոնյաների վրա, նրանք Սուրբ Հոգի են ստանում:
ե. Պողոսն ասում է, որ շուտով պետք է գնա Հռոմ:
զ. Ոմանք դարձի եկան և վառեցին մոգությունների մասին իրենց գործածած գրքերը:
է. Չար ոգի ունեցող մի մարդ հեռու քշեց ոմանց, ովքեր չարաշահում էին Հիսուսի անունը:
ը. Արծաթագործների ամբոխին ասվեց, որ եթե բողոք ունեն Պողոսի և նրա գործակիցների դեմ, պետք է դիմեն դատարան:
թ. Արծաթագործների ամբոխը գոչում էր՝ ասելով. «Մեծ է եփեսացիների դիցուհին»:
ժ. Ոմանց ընդդիմանալու պատճառով Պողոսն ստիպված եղավ քարոզները ժողովարանից տեղափոխել դպրոց:

# ԲԱՑԱՏՐԵԼ ԿԱՅՍՐԻՆ

Հռոմի Տրայանոս կայսրը հալածում էր քրիստոնեաներին, քանի որ նրանք աստծո տեղ չէին պաշտում իրեն: Տրայանոսի պաշտոնյաներից մեկը՝ Պլենին, պետք է որոշում կայացներ ինչպես պատժել քրիստոնյա լինելու համար մեղադրվող մարդկանց: Սկսվում է երկար նամակագրություն Պլենիի և կայսեր միջև, որի առիթը Պլենիին մտահոգող հարցերն էին՝ քրիստոնյաների հետ ինչպես վարվելու առնչությամբ:

Հետևյալն էին կայսերն ուղղված Պլենիի հարցերը. արդյո՞ք մարդու տարիքը որևէ դեր պիտի խաղա, կամ՝ արդյո՞ք երեխան կամ ծեր մարդիկ պետք է պատժվեն քրիստոնյա լինելու համար: Հարցերից մեկն էլ վերաբերում էր նրան, թե արդյո՞ք անձը, որ «զղջացել է» ուրանալով քրիստոնեությունը իշխանությունների ճնշման տակ, պետք է պատժի ենթակա լինի: Պլենին ուզում էր նաև իմանալ, արդյո՞ք զուտ քրիստոնյա լինելը բավարար է պատիժ կրելու համար, թե նա պետք է նաև հանցանք գործած լինի:

Պլենիին հետաքրքրող հարցումներից մեկը, հատկապես, լավագույնս պատկերում է վաղ քրիստոնյաների արիությունն ու վճռակամությունը: Պլենին տեղեկացնում է կայսրին, որ ոմանք մեղադրվում են անանուն կերպով, այսինքն՝ չկա մեկը, որ իսկապես վկայություն տա նրանց դեմ: Պլենին խնդրում է կայսեր արտոնությունը՝ նման մարդկանց ազատ արձակելու համար: Նա ասում է Տրայանոսին, որ նրանք միշտ սիրով ժխտում են, որ իրենք քրիստոնյա են: Նա կարող էր հեշտությամբ նրանց ստիպել աղոթքներ արտասանել չաստվածներին, գինի ու խունկ մատուցել կայսեր արձանին և անարգել Հիսուս Քրիստոսի անունը: Այստեղից պարզ է դառնում, որ նրանք քրիստոնյաներ չեն: Ինչո՞ւ է պարզ, որովհետև, գրում է Պլենին.

-Ինձ ասել են, որ հնարավոր չէ ուժով ստիպել իրական քրիստոնյաներին կատարելու այդ ամենը:

Սբ Իգնատիոս Անտիոքացին մահանում է Հռոմի արենայում՝ Տրայանոսի հրամանով, երբ նա մերժեց ուրանալ իր հավատը: Արենայում կանգնած՝ Իգնատիոսը դիմեց ամբոխին, ասելով.

-Հռոմեացինե՛ր, դուք գիտեք, որ ես դատապարտված եմ մահվան ոչ թե նրա համար, որ հանցանք եմ գործել, այլ որովհետև սիրում եմ Աստծուն: Ես ինձ մատուցում եմ որպես անարատ հաց՝ պատրաստված վայրի գազանների ժանիքների տակ աղացվող ցորենից»:



## Սուրբ Տաճար

Սուրբ Պողոսը մի նամակ է գրում եփեսացիներին, ինչպես որ գրել էր կորնթացիներին: Իր նամակը գրել է բանտում եղած ժամանակ: Այսուհանդերձ, նամակը լի է հույսով, սիրով և քաջալերանքով՝ ուղղված Եփեսոսի քրիստոնյաներին:

Սուրբ Պողոսն այսպես է գրում եփեսացիներին. «Դուք մասերն եք այն մեծ կառույցի, որի հիմքը առաքյալներն ու մարգարեներն են, և որի անկյունաքարն է ինքը՝ Հիսուս Քրիստոսը: Նրանով է, որ ամբողջ կառույցը ներդաշնակ միասնությամբ աճում ու դառնում է Տիրոջ սեփական սուրբ տաճարը: Նրան միացած՝ դուք էլ բոլորի հետ միասին դառնում եք Աստծո բնակարան՝ Սուրբ Հոգու միջոցով» /Եփ 3.20-22/:

*Օգտագործի՛ր քո Աստվածաշունչը, որպեսզի գտնես որոշ մարգարեների անուններ, ապա դրանք գրի՛ր տաճարի հիմնաքարերի վրա: Կարդա՛ Մատթեոս 10.1-4 հատվածը և գրի՛ր առաքյալների անունները:*



## Հավատի վեմ

Պետրոսը և Պողոսը համարվում են առաքյալների խմբի առաջնորդները: Ահա նրանց նվիրված շարականից երկու տուն, որ երգվում է նրանց տոնին:

> Ցնծում է այսօր Աստծո Եկեղեցին սուրբ առաքյալների հիշատակով՝
> հաստատված հավատքի վեմի վրա և զարդարված մարմնացյալ Բանի փառքով:
> Որ ընտրյալ առաքյալների դասում գերազույնը անվանեցիր լինել երանելի
> Պետրոսին՝ որպես գլուխ հավատի և վեմ եկեղեցու:

Քո ժայռակտորի վրա գրի՛ր «Վեմ Քրիստոս» բառերը, ապա ըստ ճաշակի գունազարդի՛ր:




### ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Դասն աշակերտներին ուղղորդում է մտածել, թե ինչպե՛ս կատարել կյանքում ընտրություններ և թե ինչպե՛ս դրանք կազդեն իրենց ապրած կյանքի ընթացքի վրա: Այդպիսին էր Սուրբ Պողոսի փորձառությունը Եփեսոսում, երբ ոմանք մերժում էին նրա ուսուցումներն ու քարոզությունը, մինչ մյուսների կյանքը լիովին փոխվում էր այդ վարդապետությունը լսելիս: Նրանք դարձան հավատացյալներ և մի կողմ դրեցին այն ամենը, ինչ նախկինում էր կարևոր և որոշ դեպքերում մեծ օգուտներ էր բերում:

Դասը նաև ցույց է տալիս աշակերտներին, որ հավատացյալները մշտապես հալածվում էին աշխարհիկ արժեքներով ապրող մարդկանց կողմից, ովքեր չէին ուզում լսել, որ Աստված Իր Որդու՝ Հիսուս Քրիստոսի միջոցով ապրելու մեկ այլ կերպ է ցույց տալիս մեզ: Տիպար օրինակներից մեկը, ով մեծ գին վճարեց քրիստոնյա լինելու համար, Սուրբ Իգնատիոս Անտիոքացին է, որ նահատակվեց Տրայանոս կայսեր հրամանով:

Ընտանիքով զրուցե՛ք կյանքում կատարած որոշ ընտրությունների մասին, որոնք գուցե ոչ այնքան իմաստուն են թվացել մի լավ բանից հրաժարվելու պատճառով: Բացատրե՛ք, թե ինչո՞ւ այդ բանն ընտրելիս կարծում էիք, որ ավելի լավը կամ ավելի կարևորն եք ընտրում:

Ընթերցե՛ք **Եփեսացիներին ուղղված նամակի 4.25-32** հատվածը: Խոսե՛ք հետևյալ հարցերի շուրջ.

ա/ Ինչպիսի՞ ընտրություններ անելու համար էր Սուրբ Պողոսը խնդրում եփեսացիներին (և մեզ բոլորիս):

բ/ Այդ ընտրություններն ինչպե՛ս կփոխեն մարդու կյանքը, եթե նա դրանք կատարի:

# ՊՈՂՈՍԻ ՃԱՌԸ ԵՓԵՍՈՍԻ ԵՐԵՑՆԵՐԻՆ

*«Եվ հիմա հանձնում եմ Աստծուն և նրա շնորհի Ավետարանին, որ կարող է հոգեպես աճեցնել և ժառանգակից դարձնել ձեզ»:*
*Գործք առաքելոց 20.32*

## ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ



Կան մարդիկ, ովքեր մեր կյանքի անբաժան մասն են երկար փարիներ: Ոմանց հետ ապրում ենք մեր կյանքի մեծ մասը: Իսկ ոմանց հետ էլ անցկացնում ենք ավելի կարճ ժամանակ: Վերջիններիս հետ մենք հանդիպում ենք արձակուրդի շրջանում, որից հետո այլևս կապ չենք պահում նրանց հետ: Դրանք կարող են լինել հարևաններ կամ դասընկերներ, որոնք փեղափոխվել են այլ փեղ:



Ենթադրենք, թե մի կարճ ժամանակով հանդիպել ես մեկին և հավանել նրան:
*Գրի՛ր քո պատասխանները հետևյալ հարցերին.*

- Որո՞նք կլինեին այն երկու բաները, որ կցանկանայիր, որ այդ անձը հիշեր:

- Ո՞րը կլիներ այն բանը, որ հուսով ես, նա գուցե սովորած լիներ քեզնից:

- Ի՞նչ լավ բան կա, որ արել ես այդ անձի համար:

- ***Ասփվածաշնչի*** *այսօրվա պատմության մեջ փե՛ս, թե ինչպե՛ս Սուրբ Պողոսը հուսով էր, որ կհիշվի որպես անձ և ուսուցիչ:*

# ՊՈՂՈՍԻ ՀՐԱԺԵՇՏԻ ԽՈՍՔԸ ԵՓԵՍՈՍԻ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻՆ

*Հմմտ Գործք առաքելոց 20.17-38*



Պողոսը կանչեց Եփեսոսի եկեղեցու երեցներին և ասաց.

-Դուք ինքներդ գիտեք, թե Ասիա գալու իմ առաջին օրվանից ինչպե՛ս վարվեցի ձեզ հետ և ծառայեցի Տիրոջը ամենայն խոնարհությամբ և հաճախ արցունքով՝ կրելով հրեաների նյութած բոլոր փորձությունները: Բնավ չքաշվեցի ձեզանից, խոսեցի օգտակար բաների մասին և ուսուցանեցի ձեզ՝ լինի հրապարակորեն, թե տներում: Նույն վկայությունն ու պատգամը տվեցի թե՛ հրեաներին և թե՛ հեթանոսներին՝ ապաշխարությամբ դառնալու Աստծուն և հավատալու մեր Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին:

Այժմ ահա Սուրբ Հոգու մղումով գնում եմ Երուսաղեմ: Չգիտեմ, թե այնտեղ ի՛նչ կպատահի ինձ: Գիտեմ միայն, որ ամեն մի քաղաքում Սուրբ Հոգին ազդարարում է ինձ՝ ասելով, որ ինձ սպասում են բանտարկություն ու նեղություն: Բայց իմ հոգը չէ, ինձ համար կարևորը կյանքը չէ, այլ այն, որ ուրախությամբ իր վախճանին հասցնեմ իմ գործը, այն պաշտոնը, որ ինձ տվեց Տեր Հիսուսը՝ ավետարանելու Աստծո շնորհը:



Հիմա գիտեմ, որ այսուհետև այլևս չեք տեսնելու ինձ: Եկա ձեր բոլորի մոտ, շրջեցի ու քարոզեցի Աստծո արքայությունը, և ինձ այլևս չեք տեսնելու: Բայց իմ խիղճը հանգիստ է, որովհետև առանց քաշվելու հայտնեցի ձեզ Աստծո կամքը:

Ուշադի՛ր եղեք ձեր անձերին և ձեր ամբողջ հոտին, որի վրա Սուրբ Հոգին տեսուչ կարգեց ձեզ: Հովվեցե՛ք Տիրոջ եկեղեցին, որ նա իր արյունո՛վ գնեց: Իմ մեկնումից հետո ձեր մեջ կմտնեն հափշտակիչ գայլեր, որոնք չեն խնայի հոտին: Ձեր միջից էլ դուրս կգան մարդիկ, որոնք սխալ բաներ կուսուցանեն՝ հավատացյալներին իրենց հետևից տանելու համար:

Հետևաբար, արթո՛ւն կացեք, հիշեցե՛ք, թե ինչես երեք տարի անդադար, գիշեր-ցերեկ, յուրաքանչյուրիդ մեկ-մեկ արցունքով խրատեցի: Եվ հիմա հանձնում եմ Աստծուն և Նրա շնորհի Ավետարանին, որ կարող է հոգեպես աճեցնել և ժառանգակից դարձնել ձեզ իր բոլոր սրբերին: Ձեզնից որևէ մեկի արծաթը, ոսկին կամ հագուստը չցանկացա: Դուք ինքներդ գիտեք, որ իմ այս ձեռքերով շահեցի և հոգացի թե՛ իմ և թե՛ իմ

ընկերակիցների կարիքները: Ես իմ կյանքի օրինակով ցույց տվեցի ձեզ, թե այդպես եղբ է աշխատել և օգնել տկարներին՝ հիշելով այն խոսքը, որ Տեր Հիսուսն ինքն իսկ ասաց, թե՝ «Ավելի երջանկաբեր է տալը, քան առնելը»:

Իր խոսքը վերջացնելուց հետո Պողոսը բոլորի հետ ծնկի եկավ և աղոթեց: Բոլորն էլ սկսեցին լաց լինել և Պողոսին ողջագուրելով համբուրում էին նրան: Մորմոքվում էին մանավանդ նրա համար, որ ասում էր, թե իրեն այլևս չեն տեսնելու: Ապա նրան ուղեկցեցին մինչև նավը:

**Բառարան**

**ՏԵՍՈՒՉ՝** այն անձն է, ով պատասխանատու է մարդկանց խմբի համար և հոգ է տանում նրանց մասին: Այն նաև «եպիսկոպոս» բառի թարգմանությունն է հունարենից: Պողոսը նկարագրում է, թե ինչ չպետք է անի տեսուչը, և բաներ, որ պետք է անի եպիսկոպոսի աստիճան ունեցողը քրիստոնեական եկեղեցու կյանքում:

## Մտածենք պատմության շուրջ

1. Քո կարծիքով որո՞նք են այն երեք բաները, որ Պողոսն ամենաշատն էր ցանկանում, որ եփեսացիները և իր մոտ ուսանած աշակերտները հիշեն:
2. Որո՞նք են Պողոսի ասած այն երկու բաները, որոնցով ինքը փորձում էր ուսուցանել մարդկանց:
3. Պատմության մեջ ո՞ր խոսքերն են հուշում մեզ, թե ինչպե՞ս էին եփեսացի քրիստոնյաները վերաբերվում Պողոսին:
4. Քո կարծիքով Պողոսն ի՞նչ նկատի ուներ, երբ ասում էր՝ «Սուրբ Հոգու մղումով»:

## «Տեսնենք» Պողոսի խոսքերը

Կարդա՛ Մատթեոս 7.15-20 հատվածը և կապույտով ընդգծի՛ր Սուրբ Գրքի պատմության այն խոսքերը, որոնք կապակցվում են հիշյալ հատվածի հետ:

Ապա ընթերցի՛ր Ա Կորնթացիներին 9.3-12 հատվածը և կարմիրով ընդգծի՛ր պատմության այն խոսքերը, որոնք առնչվում են հիշյալ հատվածի հետ:

*Ձեր խմբով ընտրե՛ք վերևի հատվածներից մեկը և մտածե՛ք այն դերախաղալու ձևերի մասին:*



ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

# Պողոսի ուսուցումները և եկեղեցու աղոթքները



Վաղ քրիստոնեական եկեղեցում կար հոգևոր երեք հիմնական կարգ կամ աստիճան՝ սարկավագ, քահանա և եպիսկոպոս: Պողոսը գրում է այն հատկանիշների մասին, որ հոգևորական դառնալ կամեցողները պետք է ունենան: Գործք առաքելոցից քաղված նրա խոսքերից մի քանիսին ծանոթացանք Աստվածաշնչի դասին: Պողոսը սրա մասին գրել է նաև երիտասարդ իր օգնականին՝ Տիմոթեոսին, նամակներից մեկում: Ահա թե ինչ է գրում Պողոսը եպիսկոպոսի արժանիքների մասին Տիմոթեոսին ուղղված առաջին նամակի 3.1-7 հատվածում:



Ով եպիսկոպոսության է ձգտում, ձգտում է բարի գործի: Եպիսկոպոսը պետք է լինի անմեղադրելի, մեկ կնոջ ամուսին, դուստ, զգաստ, մեղմաբարո, հյուրասեր և ուսուցանելու ընդունակ: Չպետք է հարբեցող լինի, ոչ էլ կռվարար, այլ ազնիվ. ո՛չ կռվազան և ո՛չ էլ դրամասեր: Պետք է իր սեփական ընտանիքի համար լավ վերակացու լինի և ունենա զավակներ, որոնք ամենայն ակնածանքով հնազանդ լինեն իրեն: Այլապես, եթե իր սեփական ընտանիքին վերակացու լինել չի կարող, ինչպե՞ս պիտի կարողանա հոգ տանել Աստծո եկեղեցուն: Հավատի մեջ նորադարձ չպետք է լինի, որպեսզի չլինի թե գոռոզանալով դատապարտության տակ ընկնի Սատանայի նման. այլ պետք է լավ անուն ունենա ոչ քրիստոնյա մարդկանց շրջանում, որպեսզի չլինի թե նախատինքի առարկա դառնա և ընկնի Սատանայի լարած թակարդի մեջ:

Շատ գեղեցիկ աղոթքներ են ընթերցվում Եկեղեցում հատկապես եպիսկոպոսական ձեռնադրության և օծման արարողության ընթացքում: Կաթողիկոսն է ձեռնադրում եպիսկոպոսին և ասում է հետևյալ աղոթքը.



Բոլորի՛ Տեր, ընտրյալ այս անձին արժանացրու մտնել հավիտենական քո լծի տակ և ընդունել եպիսկոպոսի պատվական կարգը, զորացրու նրան Սուրբ Հոգուդ ներգործությամբ, ինչպես զորացրեցիր սուրբ առաքյալներին ու մարգարեներին և օծեցիր թագավորներին:

Արարողության ընթացքում ձեռնադրվող եպիսկոպոսը տալիս է մի շարք խոստումներ: Դրանցից շատերը հիմնված են Պողոսի խոսքերի վրա եփեսացիներին ուղղված նամակում: Հաջորդ էջի վերևի վանդակներում նշված են հիշյալ խոստումներից մի քանիսը: Դատարկ վանդակների մեջ գրի՛ր եփեսացիներին ուղղված նամակի խոսքերը, որոնց վրա հիմնված են խոստումները:

## Ձեռնադրվողը խոստանում է.

| | | | |
|---|---|---|---|
| Ես խոստանում եմ սիրահոժար ուսուցանել իմ հոգևոր խնամքին հանձնված մարդկանց: | Ես ճշմարտապես հաստատում եմ, որ ո՛չ խոստումներով և ո՛չ ոսկյա կամ արծաթյա նվերներով եմ ստանձնում այս ծառայությունը: | Ես խոստանում եմ այցելել և հսկել իմ հոտին և պաշտպանել նրանց սխալ ուսուցումներից և պաշտպամունքներից: | Ես խոստանում եմ լինել ողջամիտ, ազնիվ և բարեհամբույր բոլոր մարդկանց և նույնիսկ անհավատների նկատմամբ: |

### Պողոսը գրում է.

| | | | |
|---|---|---|---|
| | | | |

## Կղեմեսի հրաժեշտը



Անկարան՝ Թուրքիայի մայրաքաղաքը, մի ժամանակ կոչվում էր Անկյուրա: 258թ. այնտեղ ծնվեց Կղեմես անունով մի տղա՝ հեթանոս հորից և քրիստոնյա մորից: Երիտասարդ տարիքում ծնողներին կորցնելուց հետո նա հանձնվեց իրենց ընտանեկան ծանոթներից մեկի՝ Սոփիայի խնամքին: Շուտով սաստիկ սով սկսվեց երկրում, և Սոփիան իր հարկի տակ ընդունեց ծնողազուրկ այլ տղաների ու աղջիկների: Այսպիսով Կղեմեսի հոգսերն ավելացան տանը: Նա մի կողմից անում էր տնային գործերը և մյուս կողմից խաղացնում էր երեխաներին: Նա Սոփիայի հետ նրանց սովորեցնում էր Հիսուս Քրիստոսի մասին՝ Տիրոջ սիրո օրինակ դառնալով նրանց համար: Երեխաները շատ էին սիրում Կղեմեսին և նրա պատմածները: Հետագա տարիներին, երբ քրիստոնյաները հալածվում էին, նրանցից շատերը հոժարակամ տվեցին իրենց կյանքը՝ որպես մարտիրոսներ:

Կղեմեսն ապրում էր իր հավատը աղոթքով և անկեղծությամբ: Նա նաև որոշեց ուտել միայն հաց և բանջարեղեն, այլ ոչ երբեք այն ամենը, ինչ մորթվում է: Նա քահանա ձեռնադրվեց և այնքան մեծ հարգանք էր վայելում, որ 20 տարեկանում դարձավ Անկյուրայի եպիսկոպոսը:

Սակայն երևելի քրիստոնյաներին վիճակված էին ծանր ժամանակներ Հռոմեական հեթանոս կայսրության մեջ: Հավատն ուրանալու Կղեմեսի մերժումը և մարդկանց ոգեշնչելու նրա կարողությունն անհանգստացնում էին հեթանոս կառավարիչներին և հատկապես Դիոկղետիանոս կայսրին: Կղեմեսը բանտարկվում է և համարյա 30 տարի բազում տանջանքների ենթարկվում: Պատմվում է, որ մի անգամ նրա տանջանքն այնքան դաժան է եղել, որ ականատես մարդիկ զայրույթից քարկոծել են դահիճներին: Ինչևէ, Կղեմեսը դիմանում է բոլոր չարչարանքներին և գնում, շարունակում է ուսուցանել, առաջնորդել և քաջաբար քարոզել քրիստոնեական հավատը:

312թ., երբ Կղեմեսը Սուրբ Սեղանի առջև կանգնած Սուրբ Պատարագ էր մատուցում և աղոթք անում, կայսերական զինվորները ներխուժեցին եկեղեցի, բռնեցին նրան և գլխատեցին: Նրա հետևորդները սարսափահար եղան, բայց և քաջություն գտան Կղեմեսի այն խոսքերից, որ վերջին ձերբակալության ժամանակ ասել էր դահիճ Դոմենտիանոսին: Խավարի այդ ժամանակներում Կղեմեսը բացականչում է.

-Դու ինձ պատիվ ես անում, ո՛վ Դոմենտիանոս, քանի որ իմ Տեր Հիսուս Քրիստոսի բերանին նույնպես հարվածել են և ապտակել նրա այտերին: Եվ չնայած ես անարժան եմ, բայց այժմ ինձ արժանի՛ դարձրիր կիսելու այդ ցավը Տիրոջ հետ: Փա՛ռք Տիրոջը, որ իր զավակներին արժանի է դարձնում այս պատվին:

## Շարական

Քրիստոս փառքի թագավոր, որ պսակիչն ես բոլոր
մարտիրոսների, և հաղթող ես պահում Քեզ
հուսացողներին,
բարեխոսությամբ սուրբ մարտիրոսների
Քո խաղաղությունը
պարգևիր ամենասուրբ Երրորդության
երկրպագողներին:

**Կանոն մարտիրոսաց Հմբ. ԲԿ**




## ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Այս դասը կենտրոնացած է Սուրբ Պողոսի՝ իր հետևորդներին ուղղված խոսքերի վրա, որ պատրաստվում էր մեկնել Երուսաղեմ: Նա գիտեր, որ պիտի հալածանքների ենթարկվեր ու թերևս նահատակվեր, որի համար էլ իր հետևորդներին ասում է, որ իրեն այլևս երբեք չեն տեսնի: Այսպիսով Պողոսը զրուցում է նրանց հետ իր կատարածների մասին և հորդորում, որ հիշեն դրանք: Պողոսը նաև նշում է այն արժանիքները, որ քրիստոնեական հոտի առաջնորդը պետք է ունենա: Դրանք ներհյուսվել է մեր Եկեղեցու քահանայական ու եպիսկոպոսական ձեռնադրության և օծման կարգի աղոթքների հետ:

Աշակերտներն առիթ են ունեցել այս դասին մտածել այն եղանակների մասին, որոնցով կհիշվեն իրենց ծանոթ մարդկանց կողմից, որոնց այլևս չպիտի տեսնեն: Սա ի մտի ունենալով ընտանիքով միասին կարդացեք Առակներ 3.3 համարը:

*Թող ողորմությունն ու հավատարմությունը չպակասեն քեզնից. կապի՛ր դրանք քո պարանոցին, գրի՛ր դրանք քո սրտի լայն տախտակի վրա, և դու շնորհ կգտնես Աստծո և մարդկանց առաջ:*

*Միասին քննարկեք: Ինչպե՞ս կարող է այս տողը ներգործել ձեր կյանքի ընթացքի վրա: Ինչպե՞ս կարող է այս խորհուրդն ազդել, որ մյուսները հիշեն ձեզ: Ինչպե՞ս կսահմանեիք «ողորմություն» և «հավատարմություն» բառերը:*

# ՊՈՂՈՍԸ ԵՐՈՒՍԱՂԵՄՈՒՄ ՀԱՆԴԻՊՈՒՄ Է ԻՐ ԲԱՐԵԿԱՄ ԻՍՐԱՅԵԼԱՑԻՆԵՐԻՆ

***«Բոլոր մարդկանց մոտ նրա վկան դառնաս՝պատմելով, ինչ որ տեսար և լսեցիր»:***

***Գործք առաքելոց 22.15***

## ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ



- Հիմա գալի՞ս ես, թե՝ ոչ, - պահանջեց Դավիթը: Միքայելը կանգնել էր նրա եփնում՝ անհամբեր սպասելով:

Գևորգը շվարել էր, չգիտեր ինչպես վարվել: Օրը շաբաթ էր, և այդ օրն առավոտյան նրանք ընկերներով միշտ հավաքվում էին երաժշտություն լսելու:

Ի վերջո Գևորգն ասաց.

- Ես ուզում եմ գալ, բայց այսօր ինձ հարմար չէ: Մի՞թե չես հիշում, որ խոստացել եմ այս առավոտ օգնել հայրիկին, որպեսզի թույլ տա կեսօրին գնամ աշխարհագրության հատուկ դասին, որի ընթացքում խոսվելու է երկրի օգտակար հանածոների մասին: Ի դեպ՝ երկուսիդ էլ հրավիրում եմ դասախոսությանը:

- Աշխարհագրությո՞ւն, - ծաղրանքով ասաց Միքայելը, - ինչ սկսել ես աշխարհագրությամբ հետաքրքրվել, ամբողջովին մոռացել ես երաժշտության մասին:

Գևորգը պատասխանեց.

- Ես փակավին սիրում եմ երաժշտություն և հատկապես այն վայելելու երկուսիդ հետ: Բայց աշխարհագրությունը հրաշալի է: Ես սովորում եմ շատ բաներ աշխարհի, մայրցամաքների, երկրների, լեռների ու ծովերի մասին և այլն: Շատ կուզենայի, որ ինձ հետ գայիք կեսօրին: Կարծում եմ՝ դուք նույնպես կհավանեք: Դասախոսն իսկապես լավագույն մասնագետներից է:

Դավիթը փարուբերեց իր գլուխը և ասաց.

- Կներես, բայց չհետաքրքրեց ինձ:

Միքայելն ասաց.

- Ոչ այսօր, երևի մի ուրիշ անգամ:

Գևորգը նայեց իր հեռացող ընկերների եփևից: «Գուցե մի օր, - կրկնեց իր մտքում, - «Հույսը երբեք ամոթով չի թողնում»:

*Պատմի՛ր ընկերոջդ հետ քո հետաքրքրություններից մեկը կիսելու աեփակաև փորձառությաևդ մասիև: Քեզ ինչպե՞ս էիր զգում այդ պահիև:*

______________________________________________

______________________________________________

______________________________________________

______________________________________________

***Առավածաշնչի*** *այսօրվա պատմության մեջ նշմարի՛ր, թե ինչպե՞ս Պողոսը փորձում էր կիսել իր նոր հավատից բխող սերը իր բարեկամ հրեաների հետ:*

# ՊՈՂՈՍԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՐՈՒՍԱՂԵՄՈՒՄ

*Հմմտ Գործք առաքելոց 21.10-22.29*



Մի օր Ագաբոս անունով մի մարգարե մոտեցավ Պողոսին, վերցրեց նրա գոտին և դրանով կապելով ինքն իր ձեռքերն ու ոտքերը՝ ասաց.

-Երուսաղեմում հրեաներն այսպես պիտի կապեն և հեթանոսների ձեռքը հանձնեն այն մարդուն, որին պատկանում է այս գոտին: Այս լսելով՝ բոլորն աղաչում էին, որ Պողոսը Երուսաղեմ չգնա:

Այն ժամանակ Պողոսն ասաց.

-Ինչո՞ւ եք այդպես լաց լինում և իմ սիրտն էլ ճմլում. ես Տեր Հիսուսի սիրո համար ոչ միայն կապվելու, այլև մեռնելու իսկ պատրաստ եմ Երուսաղեմում:

Ապա բոլորն ասացին՝ Տիրոջ կամքը թող լինի:

Հակոբոսը և Երուսաղեմի հավատացյալները ջերմորեն ընդունեցին նրանց: Սակայն զգուշացրեցին Պողոսին, որ շատերը մեղադրում են նրան, որ բոլոր հրեաներին ուսուցանում է հրաժարվել Մովսեսի Օրենքից և կրոնական ավանդույթներից: Նրան նաև խորհուրդ տվեցին, որ ենթարկվի հրեական մաքրվելու ծեսին՝ ցույց տալով, որ ինքը ևս հարգում է Մովսեսի Օրենքը: Պողոսն այդպես վարվեց, ապա մտավ տաճար:

Սակայն որոշ հրեաներ, որ եկել էին Եփեսոսից, մեծ աղմուկ բարձրացրին: Նրանք բռնեցին Պողոսին, տաճարից դուրս հանեցին և պատրաստվում էին սպանել նրան: Իրարանցման լուրը հասավ քաղաքի իրավապահներին: Հազարապետը զինվորներով եկավ և ձերբակալել տվեց նրան կրկնակի շղթաներով: Ապա հարցրեց, թե ո՞վ է Պողոսը և ի՞նչ է արել: Աղմուկ-աղաղակի բարձր ձայներից նա ոչինչ չկարողացավ իմանալ և հրամայեց նրանց զորանոց տանել: Ամբոխի բռնության պատճառով զինվորներն ստիպված էին Պողոսին բարձրացրած տանել, մինչ ամբոխը հետևում էր նրան, գոչելով՝ մա՛հ դրան:

Զորանոց գնալու ճանապարհին Պողոսն ասաց հազարապետին.

-Ես հրեա մարդ եմ, տարսոնցի, Կիլիկիայից, ոչ աննշան քաղաքի քաղաքացի. խնդրում եմ, թո՛ւյլ տուր, որ իմ խոսքն ուղղեմ ժողովրդին:

Երբ հազարապետը թույլ տվեց, Պողոսը կանգնեց աստիճանների վրա և սկսեց եբրայերեն խոսել հավաքված ամբոխին, թե ինչպես է խստորեն կրթվել հրեական օրենքների շնչով և հալածել քրիստոնյաներին: Լսելով հարազատ լեզուն՝ նրանք հանգիստ լսեցին: Պողոսը նկարագրեց իր կուրանալու դեպքը Դամասկոսի ճանապարհին: Ապա պատմեց, թե ինչպես Անանիա անունով աստվածավախ մի մարդ օգնեց իրեն վերականգնելու իր տեսողությունը և ասաց. «Դու բոլոր մարդկանց մոտ Աստծո վկան պիտի լինես այն բաների համար, որ տեսար և լսեցիր: Ուրեմն, մկրտվի՛ր և կանչի՛ր Տիրոջ անունը»:

Շարունակելով խոսքը Պողոսը պատմեց նաև Երուսաղեմ իր այցի մասին: Տաճարում աղոթելիս նրան տեսիլքի մեջ Հիսուսը պատվիրում է հեռանալ քաղաքից, որովհետև մարդիկ չպիտի ընդունեն նրա քարոզությունը, այլ պետք է գնա հեթանոսների մոտ:

Այս խոսքի վրա ամբոխն սկսեց բարձրաձայն բղավել.

-Աշխարհից վերացրո՛ւ այս մարդուն, որովհետև այսպիսի մեկը չպետք է ողջ մնա:

Հազարապետը կրկին հրամայեց Պողոսին զորանոց տանել, որպեսզի ծեծելով հարցաքննեն և իմանան, թե ո՞ր հանցանքի պատճառով է ամբոխը կատաղած նրա դեմ: Սակայն Պողոսը բողոքեց, որ ինքը ծնունդով Հռոմի քաղաքացի է և չպետք է ծեծի ենթարկվի:

## Խորհենք պատմության շուրջ

1. Արդյո՞ք Ազաբոսի մարգարեությունը կատարվեց: Եթե այո, ինչպե՞ս:
2. Պատմության ո՞ր բառերն են հայտնում մեզ, որ հավատացյալները սիրում և հարգում էին Պողոսին:
3. Ինչո՞ւ Պողոսը, խոսքն ուղղելով հրեաների ամբոխին, շեշտեց իր նախնական կրթությունը և իր կապը Անանիայի հետ:
4. *Ընտրի՛ր և ներքևի տողերի վրա նկարագրի՛ր պատմության այն հատվածը, որը ցույց է տալիս Պողոսի քաջությունը.*

5. *Գրի՛ր նրա մասին, թե ինչես դու ինքդ կվարվեիր Պողոսի փոխարեն.*

**Բառարան**

**ՀԱԶԱՐԱՊԵՏ՝**

հռոմեական զինվորական վաշտի հրամանատար, որ ձեռքի տակ ուներ 300-ից մինչև 1000 հոգի ծառայող զինվորներ:



## Խառնագրված բառեր. լրացրո՛ւ վերաքաղի համար

*Շտկի՛ր ներքևի բառերը, ապա գրի՛ր ճիշտ անուններն ամեն մի նախադասության տակ:*

*սոնՏրա  բոսզաԱ  պեպարա՜ագ  բոսկո՜ա  նիանաԱ  կոսմաս՞Դա*

1. Այս մարդը Երուսաղեմի եկեղեցու առաջնորդն էր:

____________________________________

2. Պողոսը կուրացավ և լսեց Քրիստոսի ձայնը այդ քաղաք տանող ճանապարհին:

____________________________________

3. Այս մարգարեն ասաց առաքյալներին, թե ինչ պիտի պատահի Պողոսի հետ:

____________________________________

4. Այս մարդն ուզում էր ծեծելով հարցաքննել Պողոսին:

____________________________________

5. Սա Պողոսի ծննդավայրն էր:

____________________________________

6. Այս մարդն ասաց Պողոսին, թե Աստված ինչ է կամենում, որ անի:

____________________________________

### ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

## Սուրբ Վահան Գողթնացին

8-րդ դարի սկզբներին արաբները փիրում են Հայաստանին: Ոկբա անունով արաբ նշանավոր զորավարը որոշել էր ջնջել հայոց նախարարական տները: 704թ. նա Նախիջևան քաղաքի եկեղեցիներից մեկում հավաքում է հայ նախարարներին և նենգաբար հրամայում այրել բոլորին, իսկ նրանց ընտանիքներին գերի է ուղարկում Դամասկոս, որը Հայաստանին փիրող արաբ ամիրապետների մայրաքաղաքն էր: Գերիների մեջ էր չորսամյա Վահանը, որը հայոց Գողթն գավառի Խոսրով իշխանի որդին էր: Փոքրիկ Վահանը Դամասկոսում մահմեդական կրթություն է ստանում: Ուշիմությամբ և առաջադիմությամբ ուսումն ավարտելուց հետո նա միանգամից նշանակվում է ամիրապետի դիվանադպիր: Վահանը թեև բոլորովին խլամացել էր և դարձել էր արաբ, բայց տեղյակ էր իր հայկական ծագման, քրիստոնյա մկրտված լինելու և իշխանական տնից սերվելու մասին:

Երբ Սբ. Հովհաննես Օձնեցի կաթողիկոսի միջնորդությամբ ընդհանուր ներում և վերադարձ է շնորհվում քրիստոնյաներին 719թ. Էոմեր ամիրապետի կողմից, Վահանը փափագում է օգտվել այս հնարավորությունից: Սակայն ամիրապետը շատ էր սիրում Վահանին և չէր ուզում, որ նա հեռանա արքունիքից: Վահանը



Գողթն գավառի Ագուլիս ավանի Ս. Թովմա առաքյալի վանքը

խոստանում է վերադառնալ Դամասկոս և միայն խնդրում, որ գնա տեսնի իր հայրենիքը, տիրանա իր հորական ժառանգությանը և մարդիկ նշանակի իր կալվածքները հսկելու համար: Ի վերջո ամիրապետը թույլատրում է, և Վահանը 719թ. վերադառնում է Հայաստան:

Հաջորդ տարի մահանում է Էոմերը: Վահանն առիթից օգտվելով մնում է հայրենիքում և ամուսնանում Սյունյաց իշխանի աղջկա հետ: Նրա հոգում վերարթնանում է քրիստոնեությունը և սրտանց կապվում իր հավատքին:

Շուտով Վահանը փնտրվում է Դամասկոսի արքունիքի կողմից և պահանջվում նրա վերադարձը: Հետապնդումներից ազատվելու նպատակով նա ստիպված հեռանում է տնից և շուրջ 5 տարի ապրում թափառական կյանքով: Այս ընթացքում նա այցելում է Հայաստանի և Վրաստանի տարբեր վանքեր:

Փախստական կյանքին վերջ դնելու համար Վահանը որոշում է անձամբ ներկայանալ Հեշամ ամիրապետին և շնորհ խնդրել նրանից, որպեսզի ազատ կերպով պաշտի իր հայրենի կրոնը իր հարազատ հայրենիքում: 737թ. Վահանը մեկնում է հյուսիսային Սիրիայի Սերգիոպոլիս քաղաքը, որտեղ գտնվում էր Հեշամը և նախ ներկայանում արքունիքի իր երբեմնի ծանոթներին՝ խնդրելով նրանց միջնորդությունը ամիրապետի մոտ մտնելու համար: Ծանոթանալով նրա խնդրին, թե հստակապես ընդունել է քրիստոնեությունը, ոչ ոք չի կամենում այդ հարցով միջնորդել: Վահանն ստիպված իր անելիքը դահճապետի միջոցով է գրավոր հանձնում ամիրապետին: Հեշամը գիրը կարդալուց հետո հրամայում է, որ նա անձամբ գա իր առաջ: Ամիրապետը տարբեր ձևերով փորձում է Վահանի միտքը փոխել, սակայն անօգուտ: Վահանը պաշտպանում է իր քրիստոնյա լինելու իրավունքը և մերժում գանձ ու հարստություն: Սակայն Հեշամը տակավին հույս ուներ, թե Վահանին վախեցնելով կարող է տարհամոզել, ուստի դահճապետին հրահանգում է, որ սուրը շողացնելով նրա պարանոցին կամաց-կամաց արյուն հանի. թերևս ցավին չդիմանալով հավատափոխ լինի: Դահճապետի սպառնալիքներն ապարդյուն են անցնում, և տեսնելով Վահանի հաստատակամությունը՝ ի վերջո գործադրում է վճիռը և նրան գլխատում: Տեղի քրիստոնյաները վերցնում են սուրբ նահատակի մարմինը և թաղում գերեզմանում, որի վրա նաև մատուռ է կառուցվում:

## Շարական՝ նվիրված Սբ. Վահան Գողթնացուն

Մեր Եկեղեցին Սուրբ Վահան Գողթնացու հիշատակը տոնում է Վարդավառին հաջորդող երրորդ կամ չորրորդ կիրակիից հետո եկող օրերին:

Ծանոթացիր սուրբին նվիրված հետևյալ շարականին, որը եկեղեցական ավանդության համաձայն, հորինվել է Վահանի քրոջ՝ Խոսրովադուխտի կողմից, իբրև հոգևոր եղերերգ:

Ավելի քան երգերի եղանակները
զարմանալի եղան ինձ համար քո ողբերի հնչյունները,
ով երանելի տեր Վահան՝ Աստծո ընտրյալ:

Քաջ նահատակի պես պատերազմի պատրաստվեցիր,
արիաբար կնքեցիր մահկանացուդ
հարավային ազգերի ձեռքով,
դասակից լինելով անմարմին հրեշտակներին,
ով երանելի Վահան՝ Գողթան աշխարհի իշխանավոր:

ՄՆԿ. ԵՒ ՅՄԲ. «ԲԶ»




## ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Դասը կենտրոնանում է Երուսաղեմում Սուրբ Պողոսի փորձառության վրա: Նա փորձում էր նախկինում իրեն հավատակից հրեա ժողովրդին բացատրել, թե ինչպես ինքը դարձի եկավ և հավատաց Հիսուս Քրիստոսին՝ որպես Տեր և Աստված: Չնայած սկզբում մարդիկ հոժարակամ լսում էին Պողոսի քարոզները, սակայն նրանք դարձան նրա ոխերիմ թշնամիները:

Կողք կողքի դրե՛ք այս փորձառությունը Սուրբ Վահան Գողթնացու վարքի հետ, ով ի տարբերություն իր ճակատագրին արժանացած մյուսների մերժեց օտար կրոնը և իր հոգում անմար պահեց սերն իր քրիստոնեական ճշմարիտ հավատի և հայրենիքի նկատմամբ:

Հանձնարարե՛ք, որ ձեր երեխան պատմի Սուրբ Վահան Գողթնացու նահատակության պատմությունը: Սուրբ Պողոսի նման այս մարդը գտավ Ճշմարտությունը, որը չէին կիսում իր հարազատ ժողովրդից շատերը: Նա քաջաբար և սիրահոժար աշխատեց առաջ տանելու այդ Ճշմարտությունը, բայց դրա նկատմամբ մյուս մարդկանց թշնամության գինը վճարեց իր կյանքով:

Ընտանիքով զրուցե՛ք նրա մասին, թե ինչպե՞ս կվարվեիք, եթե փորձեիք այլակրոնների միջավայրում պաշտպանել ձեր հավատքը: Ինչպե՞ս կխոսեիք հավատի մասին: Ինչպե՞ս կխոսեիք Հիսուս Քրիստոսի մասին: Ի՞նչեր կանեիք և կասեիք, ինչե՞ր չէիք անի և ասի: Ինչպե՞ս կարող եք խոսել նրանց հետ, ովքեր թեև հայ են, սակայն մոլորված լինելով չեն ճանաչում Հայ Առաքելական Եկեղեցու ուղղափառ հավատը:

Միասի՛ն արտասանեք կամ երգե՛ք Սբ. Վահան Գողթնացուն նվիրված շարականը:

ԳԼՈՒԽ 8

# ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԱՌԱՋՆՈՐԴՈՒՄ Է ԵԿԵՂԵՑԻՆ ԴԵՊԻ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ



Այս գլխի չորս դասերը ցույց են տալիս, թե ինչպես էր Սուրբ Հոգին առաջնորդում նախնական Եկեղեցին՝ հստակ հաստատելու իր հավատքը Աստծո մեծահրաշ գործերի և Իր Միածին Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, մարդկության փրկության համար ուղարկելու մասին:

Սուրբգրային հատվածներից կարող ենք իմանալ, թե ինչպես մարդ պետք է ապրի Հիսուս Քրիստոսի օրինակով և ունենա երկնքում Տիրոջ հետ հավիտենական կյանք վաստակելու հույսը:



## Ծնողների համար

Նախնական Եկեղեցու առջև խնդիր ծառացավ հստակեցնելու և ձևակերպելու իր հավատքը: Պետրոսը և Պողոսը մյուս առաքյալների հետ Սուրբ Հոգու առաջնորդությամբ հստակ հաստատեցին, որ Հիսուս Քրիստոսը Աստծո՝ երկնավոր մեր Հոր Որդին է: Հիսուս Քրիստոսի խաչի զոհաբերության շնորհիվ ամբողջ մարդկությունը հնարավորություն ստացավ հավիտենական կյանք ունենալ՝ ընդունելով Հիսուս Քրիստոսին որպես Տեր և Փրկիչ և ապրելով ըստ Նրա օրինակի:

# ՀԻՍՈՒՍԸ ՊԱՏԿԵՐՆ Է ԱՆԵՐԵՎՈՒՅԹ ՀՈՐ

*«Նա մեզ ազատեց խավարի իշխանությունից և բերեց իր սիրելի Որդու իշխանության տակ»:*

*Կողոսացիներին 1.13*

## ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

*Պատասխանի՛ր հետևյալ հարցերին.*



1. Ո՞րն է քո ամենասիրած գույնը:
2. Ո՞ր ամսին ես ծնվել:
3. Ո՞ր առարկան ես ամենաշատը սիրում դպրոցում:
4. Քանի՞ եղբայր և քույր ունես:
5. Նշի՛ր մի երկիր, ուր կուզենայիր այցելել առիթի դեպքում:
6. Ի՞նչ կուզենայիր անել քո ազատ ժամանակ:







***Ասպվածաշնչի*** *պատմության մեջ գտե՛ք, թե որքան էր Պողոս առաքյալը կամենում, որ մարդիկ իմանան իրական փաստեր Հիսուս Քրիստոսի մասին:*

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

## ՊՈՂՈՍԸ ՀՈՐԴՈՐՈՒՄ Է ԿՈՂՈՍԱՑԻՆԵՐԻՆ ՊԱՀԵԼ ՃՇՄԱՐԻՏ ՀԱՎԱՏԸ

*Նամակ Կողոսացիներին 1.1-23*



Ես՝ Պողոս, Հիսուս Քրիստոսի առաքյալս, Կողոսիայի հավատացյալ քույրերին ու եղբայրներին. շնո՛րհ ձեզ և խաղաղությո՛ւն մեր Հայր Աստծուց:

Մեր աղոթքներում միշտ գոհություն ենք հայտնում Հայր Աստծուն՝ լսելով ձեր սիրո մասին հանդեպ բոլոր հավատացյալները, այն հույսի համար, որ պահված է ձեզ երկնքում: Այդ հույսի մասին դուք նախապես լսել եք Ավետարանի ճշմարտության խոսքով, որ հասավ մինչև ձեզ: Այն աճում և պտղաբերում է ամբողջ աշխարհում, ինչպես և ձեր մեջ: Դուք ուսանեցիք մեր սիրելի ծառայակից Եպաֆրասից: Նա Հիսուսի հավատարիմ ծառան է, որը պատմեց մեզ այն սերը, որ Հոգին տվեց ձեզ:

Ահա թե ինչու այն օրվանից, երբ լսեցինք այդ, անդադար աղոթում ենք ձեզ համար, որպեսզի լցվեք Աստծո կամքի կատարյալ գիտությամբ՝ ապրելու համար Տիրոջը վայել ձևով, պտղաբեր դառնաքամեն տեսակ բարի գործերով աճեք Աստծո գիտությամբ: Այդպիսով դուք ավելի զորացած կլինեք նրա աստվածային փառքի բովանդակ զորությամբ, որը ձեզ կարող կդարձնի մեծ համբերությամբ ու ուրախությամբ տանելու ամեն նեղություն:

Շնորհակալությո՛ւն հայտնեցեք Հորը՝ Աստծուն, որ մեզ արժանացրեց լույսի թագավորության մեջ բնակվող իր ընտրյալների վիճակին մասնակից դառնալու: Նա մեզ ազատեց խավարի իշխանությունից և բերեց իր սիրելի Որդու իշխանության տակ: Եվ Որդին փրկեց մեզ՝ թողություն տալով մեր մեղքերին:

Քրիստոսն ինքը տեսանելի պատկերն է աներևույթ Աստծո, Հոր Որդին՝ ծնված բոլոր ստեղծվածներից առաջ. որովհետև Աստված նրանով ստեղծեց ամեն բան երկնքում թե երկրի վրա, երևելի թե աներևույթ, որոնց շարքին են հրեշտակների դասերը: Նրա ձեռքով և Նրա համար ստեղծվեց ամեն ինչ: Նրա գոյությունն ամեն բանից առաջ է, և ամեն բան նրանով է գոյացել: Նա է գլուխը մարմնի, որ եկեղեցին է: Նա է սկիզբը, որ անդրանիկ ծնունդը եղավ մեռելներից. որպեսզի ինքն առաջնությունն ունենա ամե՛ն բանի մեջ. քանզի Հայրն ուզեց, որ Քրիստոսն իր մեջ ունենա լիությունն աստվածային բնության: Նրա ձեռքով ուզեց իր հետ հաշտեցնել ամեն բան երկնքում թե երկրի վրա՝ խաղաղություն հաստատելով խաչի վրա նրա մահվամբ:

Դուք էլ մի ժամանակ օտարացել էիք Աստծուց և թշնամացել նրան՝ ձեր մտածելակերպով ու չար գործերով: Բայց այժմ Քրիստոսն իր մարդեղությամբ և մահվամբ ձեզ հաշտեցրեց Աստծո հետ, որպեսզի դուք

նրան ներկայանաք մաքուր, անբիծ և անարատ: Ուստի հաստատվեցե՛ք ձեր հավատի մեջ՝ այն հաստատելով ամուր հիմքերի վրա, անխախտ պահելով այն հույսը, որ ունեցաք Ավետարանի քարոզությունը լսելով: Ես՝ Պողոսս, ինքս էլ ծառա եմ այդ Ավետարանին, որը քարոզվում է երկնքի տակ գտնվող բոլոր արարածներին:

**Բառարան**

**ԺԱՌԱՆԳԱԿԻՑ ԼԻՆԵԼ՝** վերաբերում է արքայության խոստումին, որ Աստված տվեց Իր ժողովրդին՝ այսինքն՝ մեզ հավատացյալներիս:

## Խորհենք պատմության շուրջ

1. Պողոսն ի՞նչ նկատի ուներ, երբ ասում էր, թե Աստծո զորությունը կարող կդարձնի ձեզ «մեծ համբերությամբ և ուրախությամբ տանելու ամեն նեղություն»:
2. Ընտրի՛ր և գրի՛ր 3 բնորոշումներ, որ Պողոսն ասում է Հիսուս Քրիստոսի մասին:
3. Պողոսն ի՞նչ է զգուշացնում կողոսացիներին *չանել*:

## Տարբեր տեսակի ծառայություն

Կարդա՛ Պողոս առաքյալի՝ կողոսացիներին ուղղված նամակի 4-րդ գլխի հետևյալ հատվածը, որում խոսվում է ծառայության մասին: Ապա պատասխանի՛ր հարցերին և նշի՛ր արա քարտեզի վրա:

*«Ձեզ բարևում է ձեր հայրենակից Եպաֆրասը՝ Հիսուս Քրիստոսի ծառան, որն իր աղոթքներով շարունակ տքնում է ձեզ համար, որպեսզի հոգեպես լինեք կատարյալ և քաջատեղյակ Աստծո կամքին: Վկայում եմ նրա մասին, որ մեծ աշխատանք տարավ ձեզ համար, ինչպես նաև լավոդիկիացիների և* ***Երապոլիսի*** *եղբայրների համար:*

*Ձեզ բարևներ ունեն նաև սիրելի բժիշկ Ղուկասը և Դեմասը:*

*Դուք էլ բարևեք* ***Լավոդիկիայում*** *գտնվող եղբայրներին, Նիմֆային ու նրա տանը հավաքվող եկեղեցուն»:*




- Պողոսն ինչպե՞ս է նկարագրում Եպաֆրասի ծառայությունը Աստծուն և Աստծո ժողովրդին:
- Քարտեզի վրա նշի՛ր 2 քաղաքներ, որտեղ Եպաֆրասը աշխատել է:
- Ղուկասն ինչպե՞ս էր ծառայում Աստծուն և ժողովրդին:
- Ի՞նչ տեսակի ծառայություն էր մատուցում Նիմֆան Ակյուղասի և Պրիսկիղայի նման: Վերջիններիս ծառայության մասին կարող ես կարդալ **Հռոմեացիներին ուղղված նամակի 16.3-5** հատվածում:

*Գրի՛ր կամ նկարի՛ր ներքևում, թե ի՞նչ տեսակի ծառայություն ամենաշատը կցանկանայիր մատուցել:*

## ԳՏԵՔ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Ձախ սյունակում կգտնես նախադասություններ Հավատամքից, որոնք հայտնում են մեզ ճշմարտությունը Հայր Աստծո, Որդու և Սուրբ Հոգու մասին: Օգտվի՛ր ներքևի բառացանկից, որպեսզի լրացնես նախադասությունները: Ապա կարդա՛ աջ սյունակի նախադասությունները կողոսացիներին ուղղված Պողոսի նամակի առաջին գլխից և գրի՛ր Հավատամքի համապատասխան նախադասությունների թվահամարը աջ կողմի դատարկ գծերի վրա: Փնտրի՛ր բառեր կամ գաղափարներ, որոնք նման են: Յուրաքանչյուր դատարկ գծի վրա կարելի է նշել մեկից ավելի թվահամարներ:

1. Հավատում ենք մեկ Աստծո՝ ______________ Հորը:
2. Երկնքի ու երկրի, երևելի և ______________ բաների Արարչին:
3. Եվ մեկ Տեր Հիսուս Քրիստոսին՝ Աստծո ______________:
4. Չարչարվեց, ______________, թաղվեց
5. և երրորդ օրը հարություն առավ ______________:
6. Գալու է նույն փառքով ______________ ողջերին ու մեռածներին, որի ______________ վախճան չունի:
7. Հավատում ենք մի մկրտության և մեղքերի ______________:

______ ....բոլոր բարի գործերում պտղաբեր լինելու և Աստծո գիտությամբ աճելու համար՝ զորացած նրա ամբողջ ուժով, նրա փառքի զորությամբ:

______ Նա փրկեց մեզ խավարի իշխանությունից և մեզ փոխադրեց արքայությունն իր սիրելի Որդու, որով փրկություն ունենք նրա արյամբ և մեղքերի թողություն:

______ Նրանով ստեղծվեց այն ամենը, ինչ որ երկնքում է և ինչ որ՝ երկրի վրա, ինչ որ երևում է և ինչ որ չի երևում. ամեն ինչ նրանով և նրա համար ստեղծվեց:

______ Նրանով Աստված հաշտեցրեց ամեն ինչ իր հետ՝ խաղաղություն անելով խաչի վրա թափած իր արյամբ և՛ երկրի վրա, և՛ երկնքում եղածների համար:

______ Եվ ձեզ, որ մի ժամանակ օտարացած և թշնամացած էիք Նրան ձեր մտածումներով և չար գործերով, այժմ, ահավասիկ, հաշտեցրեց ձեզ իր իսկ մարմնով և իր մահվամբ, որպեսզի ներկայացնի ձեզ Աստծո առաջ սուրբ, անբիծ և անարատ, եթե ամուր ու անսասան մնաք հավատի մեջ:

*խաչվեց, աներևույթ, քավության, Որդուն, Ամենակալ, դատելու, թագավորությունը, մեռելներից*

# Սուրբ Պանտալեոն բժիշկը



Պանտալեոնը Նիկոմեդիայից էր՝ հեթանոս հոր և քրիստոնյա մոր որդի: Մայրը շուտով մահանում է՝ հազիվ քրիստոնեական սերմը ցանելով իր որդու մատղաշ սրտում: Մանուկը աճում և մեծանում է հեթանոս հոր կրոնի մեջ: Ստանում է բարձր կրթություն և նվիրվում բժշկության ասպարեզին: Իր կարողությունների շնորհիվ արժանանում է Մաքսիմինոս կայսեր ուշադրությանը, ով նրան հանձնում է իր բժշկապետի խնամքին: Աստծո նախախնամությամբ Պանտալեոնը հանդիպում է Երմողայոս քահանային, որը ծլեցնում և աճեցնում է նրա մեջ բարեպաշտ մոր նետած սերմերը, և համոզվում քրիստոնեական կրոնի ճշմարտության մեջ: Իր նոր հավատքն առավել ամրապնդվում է հետևյալ հրաշքից:

Մի օր շրջագայության ընթացքում հանդիպում է մի մանուկի, որը մահացել էր օձի խայթոցից: Օձը փաթաթվել էր նրա կողքին: Ներշնչված Ավետարանի խոսքերից և Քրիստոսի զորությունից՝ նա ասաց.

-Ո՛վ մեռած մանուկ, ո՛տքի ելիր հանուն Հիսուս Քրիստոսի, իսկ դու չար գազան, պատիժը ստացի՛ր քո չարիքի, որ վնասեցիր այս մանկանը:

Նույն վայրկյանին մանուկը հարություն է առնում, իսկ օձը՝ մահանում: Հրաշքից ցնցված նա վազում է Երմողայոսի մոտ, պատմում դեպքը և խնդրում, որ մկրտի իրեն: Իր մեջ բուռն փափագ է արթնանում դարձի բերելու իր հեթանոս հորը: Դա նրան հաջողվում է, երբ հոր ներկայությամբ մի կույրի աչքերը բժշկում է, և արդյունքում երկուսն էլ դարձի են գալիս: Հոր մահից հետո իր ամբողջ ժառանգությունը չքավորների ու աղքատների համար է օգտագործում: Իր գործունեությամբ Պանտալեոնը երեք տեսակի չարիքների դեմ էր պայքարում, որոնք են՝ աղքատությունը, հիվանդությունը և մեղքը: Ուստի թե՛ հիվանդներին էր բժշկում Քրիստոսի անունով, թե՛ չքավորներին օգնության հասնում և թե՛ բազում մարդկանց դարձի բերում:

Պանտալեոնի համբավը և ժողովրդականությունը շարժում է մյուս բժիշկների նախանձը, որոնք ամբաստանում են նրան Մաքսիմինոս կայսեր առջև /286-305թթ./: Հակառակ այն իրողության, որ կայսեր ներկայությամբ անբուժելի մի հաշմանդամի աղոթքով կատարյալ բժշկություն է պարգևում, կայսրը չի բուժվում իր հոգևոր հաշմանդամությունից, այլ ընդհակառակը՝ հրամայում է, որ Պանտալեոնին բազում չարչարանքների ենթարկեն: Աստծո ծառան հրաշքով փրկվում է տանջանքներից: Զայրացած Մաքսիմինոսը հասկանալով, որ Երմողայոս քահանան է պատճառ դարձել նրա դարձի գալուն, նահատակում է նրան: Ի վերջո կայսրը հրամայում է գլխատել Պանտալեոնին: Իր կատարած անթիվ բարիքների համար մարդիկ նրան կոչում էին «ամենողորմած», որոնցից վերջինը իրեն չարչարողների համար Աստծուց թողություն խնդրելը եղավ:



## Աղոթենք

Ահա մի աղոթք, որ ասվում է Սուրբ Պատարագի ընթացքում Սուրբ Հաղորդությունից առաջ: Փորձի՛ր արտասանել այս աղոթքը առաջիկա շաբաթներին և օգտագործի՛ր Սուրբ Էյդենի օրինակը մտածելու այն եղանակների մասին, որոնցով կկարողանաս քո հոգում «մաքուր և անարատ» պահել Քրիստոսի պատկերը:

> **Մաքրի՛ր մեր մտքերն ու խորհուրդները, որպեսզի նաև մենք այսօր սրբությամբ հաղորդվենք Քո սուրբ առաքյալների հետ վերնատան մեջ:**
> **Ճաշակեցե՛ք և տեսե՛ք, որ քա՛ղցր է Տերը, ալելուիա:**

## ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Դասը շեշտում է Սուրբ Պողոսի մտահոգությունը: Բանն այն է, որ վաղ քրիստոնյաները գիտեին ճշմարտությունը Հիսուս Քրիստոսի և նրա պարգևած փրկության մասին, մինչդեռ շատերը մոլորության մեջ էին ընկնում կեղծ ուսուցիչների խոսքերից և շեղվում իրենց ճշմարիտ հավատից: Դա է վկայում Շոտլանդիայի մեծ սուրբի՝ Սբ. Էյդեն Լինդիսֆարնացու օրինակը, ով նաև քարոզում էր քրիստոնեության խկությունը մարդկանց, որոնց քարոզվել էր ճշմարիտ հավատը, սակայն որոնք ընկնելով ուրիշների ազդեցության տակ, վերադարձել էին կռապաշտությանը:

Քրիստոնեական ուսմունքի հիմնական աղբյուրը, իհարկե, Նիկիական Հանգանակն է՝ Հավատամքը: Ձեր ընտանիքով վերանայե՛ք Հավատամքում արտահայտված կարևոր ճշմարտությունները՝ Հիսուս Քրիստոսի ճշմարիտ մարդեղացումը, Նրա փրկարար մահն ու հարությունը, որ հավիտենական կյանք է պարգևում բոլորիս, Նրա սերը հանդեպ Իր ստեղծածները, որոնց Նա Հոր և Սուրբ Հոգու հետ, որպես Սուրբ Երրորդություն, կյանքի կոչեց, ինչպես նաև Եկեղեցին, որի գլուխը Քրիստոսն է:

### Նիկիական Հանգանակը

*Հավատում ենք մեկ Աստծո՝ Ամենակալ Հորը, երկնքի և երկրի, երևելի և աներևույթ էակների Արարչին:*

*Եվ մեկ Տեր Հիսուս Քրիստոսին՝ Աստծո Որդուն՝ Հայր Աստծուց ծնվածին՝միածին, այսինքն՝ Հոր էությունից: Աստված է Աստծուց, լույս՝ լույսից, ճշմարիտ Աստծուց ծնված ճշմարիտ Աստված է, և ոչ ստեղծված: Ինքը նույն Հոր բնությունից է, որով ամեն ինչ ստեղծվեց երկնքում և երկրի վրա, երևելի և աներևույթ:*

*Որ մեր փրկության համար իջավ երկնքից, մարմնացավ, կատարելապես ծնվեց սուրբ կույս Մարիամից Սուրբ Հոգով: Որով առավ մարմին, հոգի և միտք և այն ամենը, ինչ կա մարդու մեջ ճշմարտապես և ոչ թվացյալ:*

*Չարչարվեց, խաչվեց, թաղվեց, երրորդ օրը հարություն առավ, ելավ երկինք նույն մարմնով և նստեց Հոր աջ կողմում:*

*Գալու է նույն մարմնով և Հոր փառքով դատելու կենդանի և մեռած մարդկանց, որի թագավորությունը չունի վախճան:*

*Հավատում ենք և Սուրբ Հոգուն անստեղծ և կատարյալ, որ խոսեց օրենքում, մարգարեների միջոցով և Ավետարանում: Որը իջավ Հորդանան, քարոզեց առաքյալներին և բնակվեց սուրբերի մեջ:*

*Հավատում ենք միայն մեկ, ընդհանրական և առաքելական եկեղեցու, մեկ մկրտության, ապաշխարության, մեղքերի քավության ու թողության:*

*Հավատում ենք մեռելների հարությանը, հոգիների և մարմինների հավիտենական դատաստանին, երկնքի արքայությանը և հավիտենական կյանքին:*

ԴԱՍ 28

# ՀԱՄԱԽՈՀ ԼԻՆԵՆՔ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍՈՎ

*«Նայեցե՛ք, որ Քրիստոսի Ավետարանին վայել ձևով ապրեք»:*
*Փիլիպեցիներին 1.27*

## Հայտնագործենք

Հաճախ գործերն անելու համար անհրաժեշտ է լինում աշխատել այլ մարդկանց հետ: Շենք կառուցելու համար ճարտարապետը, շինարարների խումբը և նյութեր մատակարարողը՝ բոլորը պետք է աշխատեն միասին: Նրանք պետք է պայմանավորվեն շենքի կառուցման ձևի շուրջ և թե ինչ տեսք այն պիտի ունենա: Նույն բանն են պահանջում նաև այլ գործերը:

Մի հայտնի ծաղրածու հեծանիվ էր քշում բարձրահարկ երկու շենքերի միջև ձգված պարանի վրա: Նույնիսկ այդ մեկի համարձակ քայլը շատերին համախմբեց մտածելու, թե ինչպես այն կարելի է անել:



Քո կարծիքով ովքե՞ր կարող էին լինել այդ մարդիկ:

Ի՞նչ մասնագիտության և զբաղմունքի տեր մարդիկ կարող էին լինել նրանք:

Քո խմբի հետ վարժվի՛ր աշխատել միասին և համաձայնվել՝ լուծելով գլուխկոտրուկը:

| ՄԱՐԴԻԿ | ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ |
| --- | --- |
| ______ | ______ |
| ______ | ______ |
| ______ | ______ |
| ______ | ______ |
| ______ | ______ |

***Ապրվածաշխի*** *այսօրվա պատմության մեջ կարդա՛, թե ինչպե՞ս էր Սբ. Պողոսը հորդորում հավատացյալներին համաձայնվել և միասին կառուցել իրենց հավատը:*

## ՊՈՂՈՍԸ ՀՈՐԴՈՐՈՒՄ Է ՓԻԼԻՊԵՑԻՆԵՐԻՆ ՀԵՏԵՎԵԼ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻՆ

*Նմտր Փիլիպեցիներին 1.3-2.13*



Պողոսը գրում է.

-Շնորհակալ եմ Աստծուց, որ առաջին օրվանից մինչև այժմ դուք ձեր մասնակցությունը բերեցիք Ավետարանի քարոզության գործին և բոլորդ էլ մասնակից եղաք ինձ վիճակված շնորհին, լինի իմ բանտարկության ընթացքում, թե այն ժամանակ, երբ ազատ վիճակում աշխատում և հաստատում էի Ավետարանը: Իմ աղոթքն է, որ ձեր սերն ավելի աճի աստվածգիտությամբ և կատարյալ դատողությամբ, որպեսզի կարողանաք ընտրել լավը, և Քրիստոսն իր գալստյան օրը ձեզ մաքուր և անբասիր գտնի: Նույնիսկ բանտի կապանքների մեջ գտնվելը, որը Քրիստոսի համար եղավ, քաջություն ներշնչեց և համարձակություն տվեց, որ ավելի անվախ քարոզեմ Աստծո խոսքը բոլորին և մանավանդ կայսերական պալատի անդամներին:

Ոմանք նախանձի և հակառակության համար են քարոզում Քրիստոսին, բայց ուրիշներն այդ անում են սիրահոժար կերպով: Բայց ես ուրախ եմ, քանի որ անկախ որևէ միտումնավորությունից, Քրիստոսն է քարոզվում: Եվ ձեր աղոթքներով ու Հոգու օգնությամբ ես պիտի մեծարեմ Քրիստոսին թե՛ իմ ապրելով և թե՛ մեռնելով: Ես պատրաստ եմ մեռնել և լինել Քրիստոսի հետ, բայց ես պետք է ապրեմ, որպեսզի շարունակեմ իմ քարոզչական գործը ձեր մեջ:

Ուրեմն, նայեցե՛ք, որ Քրիստոսի Ավետարանին վայել ձևով ապրեք, որպեսզի եթե կարողանամ գալ, անձամբ տեսնեմ, իսկ եթե չկարողանամ գալ, իմանամ ձեր մասին, թե հաստատուն եք մնում, իբրև մեկ շունչ, մեկ հոգի, և միասնաբար պայքարում եք Ավետարանի հավատի համար: Բնավ չվախենաք հակառակորդներից: Եվ դա Աստծուց է, որ ոչ միայն Քրիստոսին հավատալու, այլ նաև նրա համար չարչարվելու շնորհը տրվեց ձեզ, որպեսզի մղեք այն նույն պատերազմը, որ ես եմ մղում:

Միաբա՛ն եղեք՝ միմյանց հանդեպ նույն սերն ունենալով և համերաշխ ու համախոհ ապրելով: Եսասեր մի՛ եղեք, այլ խոնարհ ոգով ձեր ընկերներին ավելի լա՛վ համարեցեք, քան ինքներդ ձեզ: Դուք միայն ձեր մասին մի՛ մտածեք, այլ նաև ձեր ընկերոջ մասին: Նմանվեցե՛ք Հիսուս Քրիստոսին, որ թեև Աստված էր բնությամբ, բայց կամովին ծառայի կերպարանք առնելով որպես ճշմարիտ մարդ ծնվեց և հնազանդ եղավ մինչև իսկ խաչի մահվան: Դրա համար էլ Աստված է՛լ ավելի բարձրացրեց նրան, որպեսզի Հիսուսի անվան առաջ ծնկի գան բոլորը, և ամեն լեզու դավանի, որ Հիսուս Քրիստոսը «Տեր» է՝ Հայր Աստծուն փառավորելու համար:

Հետևաբար, իմ սիրելինե՛ր, հնազա՛նդ եղեք և երկյուղած բարեպաշտությամբ աշխատեցե՛ք ձեր փրկության համար: Որովհետև ինչ որ դուք կամենում եք ու կատարում, Աստված ինքն է ներգործում ձեզ վրա, որպեսզի շարժվեք իր կամքի համաձայն:

### Խորհենք պատմության շուրջ

1. Քո կարծիքով Պողոսն ի՞նչ նկատի ուներ՝ ասելով, թե մեծարում է Քրիստոսին «թե՛ իր ապրելով և թե՛ մեռնելով»:
2. Ինչո՞ւ է Պողոսը կարծում, որ քրիստոնյաների համար կարևոր է «միաբան լինել, միմյանց հանդեպ նույն սերն ունենալ և ապրել համերաշխ ու համախոհ»:

## Լավ օրինակներ / Վատ օրինակներ

Աստվածաշունչը տալիս է մեզ լավ օրինակներ, ինչի մասին խոսում է Սուրբ Պողոսը, ու նաև զգուշացնում, որ չհետևենք վատ օրինակներին: Ձեր խմբով կարդացե՛ք ներքևի հատվածները, մտածե՛ք, թե ինչո՞ւ է դրանց հեղինակն այդ ձևով արտահայտել իր մտքերը:

Հիշե՛ք, որ Սուրբ Պողոսը շատ լավ գիտեր Առակների գիրքը և գուցե առաջարկեր իր հավատացյալ ընկերներին ընթերցել և հետևել նրանցում հայտնված խորհրդին:



«Անմիտներին իրենց ճանապարհները թվում են ուղիղ, իսկ իմաստունն ունկնդիր է լինում խրատին»:

**Առակներ 12.15-16**

«Հոր փորողն ինքն է ընկնելու նրա մեջ. ով քար է գլորում ուրիշի վրա, ինքն իր վրա է գլորում այն»:

**Առակներ 26.27**

«Լսի՛ր որդյակ հորդ խրատը և մի՛ մերժիր մորդ պատվիրանը»:

**Առակներ 1.8**




«Մրջյունի մո՛տ գնա, ո՛վ ծույլ, նախանձի՛ր նրա գործերին և իմաստո՛ւն եղիր նրանից ավելի. քանզի նա ո՛չ հողագործ է, ո՛չ վերակացու և ո՛չ էլ գլխին տեր ունի, բայց ամռանը նա պատրաստում է իր ուտելիքը և հնձի ժամանակ ամբարում է իր առատ պաշարը»:

**Առակներ 6.6-8**

*Ինքնուրո՛ւյն գրիր քո առակը ներքևի տողերի վրա:*

______________________________

______________________________

______________________________

______________________________

______________________________

# Ինչո՞ւ եկավ Հիսուս Քրիստոսը

Աստվածաշունչը մեզ հետ կապված Աստծո ծրագրի մի ամբողջ պատմությունն է: Երկար տարիներ անց Աստված մի Փրկիչ խոստացավ Իր ժողովրդին: Նրանք գիտեին, որ Աստված կպահեր իր խոստումը:

Բայց միաժամանակ մարդիկ շարունակում էին չհնազանդվել Աստծուն: Նրանք վիրավորում և վնասում էին մեկը մյուսին: Նրանք հոգ չէին տանում Աստծո գեղեցիկ ստեղծագործության մասին: Նրանք թույլ էին տալիս, որ մեղքը խավարով պատի իրենց հոգիները:




Հիսուս Քրիստոսը եկավ մարդկանց ցույց տալու, թե ինչպես նրանք պետք է ապրեն: Նա Աստծո Սուրբ Որդին էր, բայց դարձավ մեզ նման մարդ, որպեսզի մենք ունենանք սուրբ կյանքի ամենալավ օրինակը:

Մեծ սուրբերից մեկը՝ Աթանաս Ալեքսանդրացին, նկարի շրջանակի միջի գրվածքով է ձևակերպում իր միտքը:

Նա Աստծուն նմանեցնում է նկարչի: Տերը տեսնում էր, որ մարդիկ գնալով հեռանում են Իրեն նմանվելուց: Մենք նման էինք մի կեղտոտ, աղճատված պատկերի, որն այլևս նման չէր բնորդի կերպարին: Այսպիսով, Աստված ուղարկեց Իր Որդուն, որպեսզի դառնա պատկերի կերպարը նորից և մեզ հիշեցնի, թե ինչպիսի տեսք պետք է ունենանք և ինչպես պետք է ապրենք: Հիսուս Քրիստոսը տիպար կերպարն է մեր կյանքի: Դա այն կյանքն է, որը պիտի բերի մեզ Տիրոջ Արքայությունը հավիտյան:

- *Ի՞նչ խոսքերով կամ պատկերով կբացատրեիր Հիսուս Քրիստոսի՝ աշխարհ գալու նպատակը*

- *Օգտագործի՛ր խոսքերը կամ նկարները՝ ցույց տալու, թե քեզ համար ի՞նչ է նշանակում համամիտ լինել Քրիստոսին կամ առավել նմանվել Հիսուսին:*

## Արտացոլենք Հիսուս Քրիստոսի պատկերը

Ժամերգությունների ընթացքում ասվում են շատ աղոթքներ, որոնք ամրապնդում են մեր հավատը և ուղղորդում մեզ՝ Հիսուս Քրիստոսին ունենալու որպես մեր կյանքի փիլար:

«Եվ մենք միաբան ասենք՝ օրհնյալ է Քո սուրբ և փառավոր անունը, և Քեզ երգով մատուցենք օրհնություն և փառք Հոր և Սուրբ Հոգուն հետ այժմ և հավիտյանս ամեն»:

«Բարձրյալ Քրիստոսին դարձնենք մեզ ապավեն, որպեսզի չարը չհարվածի մեզ և չարի պատապանքը չհասնի մեր օջախներին»:

«Արժանի՛ արա մեզ, Տե՛ր, սուրբ սրտով և հրեշտակային երգով գոհություն մատուցելու Ամենակալիդ, Աստվա՛ծ մեր, փրկի՛ր և ողորմի՛ր»:

Քո կարծիքով՝ ինչո՞ւ են «սիրտ» և «հրեշտակ» բառերը ներառնվել այս աղոթքում:

## Մեկ այլ Աթանաս հանդիպում է Քրիստոսին

*Պատմող, Ջուլիանոս, Աթանաս Կիլիկեցի, Կառավարիչ*

*Պատմող.* Երբեմն մարդիկ Հիսուս Քրիստոսի մասին սովորում են Տիրոջը հավատացողների արարքներին նայելու միջոցով: Այդպիսի անձ էր Աթանաս Կիլիկեցին: Նա ապրում էր Դիոկղետիանոս կայսեր օրերին, որը քրիստոնյաների մեծագույն հալածողներից էր:

*Աթանաս.* Անունս Աթանաս է: Ես աշխատում էի որպես բանտապահ, և մի օր մի շատ տարօրինակ բանտարկյալ բերեցին իմ բանտը: Նրա անունը Ջուլիանոս էր: Ասացի, որ նա «տարօրինակ» էր ոչ այն պատճառով, որ անսովոր տեսքով մեկն էր, այլ մի բան կար նրա հետ կապված: Նա միշտ հանդարտ էր ու զվարթ նույնիսկ իմ կեղտոտ, աղմկոտ բանտում՝ շրջապատված կոպիտ ու հաճախ բարկացկոտ մարդկանցով:

*Կառավարիչ.* Ա՜խ, Ջուլիանոս: Ի՜նչ լավ եմ նրան հիշում: Որպես հռոմեական կառավարիչ իմ գործն էր նրան հարցաքննել և հեռու պահել նրան այն անհեթեթ մտքից, որ Հիսուսը՝ պաղեստինցի այդ գլխացավանք քարոզիչը, Աստծո Որդին է: Նրանից պահանջում էինք խոստովանել, որ կայսրն աստված է, և զոհեր մատուցել նրան: Բայց նա պարզապես չարեց մեր ուզածը:

*Ջուլիանոս.* Նրանք շատ ջանացին, որ ես ուրանամ հավատս: Ինձ չարչարեցին ու սպառնացին: Բայց ես շարունակ հիշում էի, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսին նույնպես չարչարել էին: Ես պատրաստ էի փառավորել, քան թե ուրանալ Տիրոջը: Ինչպե՞ս կարող էի այլ բան անել, երբ Նա տվել էր Իր կյանքը մեզ համար:

*Աթանաս.* Իմ բանտում ես գիտեի շատ բանտարկյալների, ովքեր այդքան չարչարանքից հետո պատրաստ կլինեին խոստովանել ամեն բան: Սակայն Ջուլիանոսը տարբերվում էր: Նա ոչ միայն պահեց իր հավատը, այլ միաժամանակ երբեք չհայհոյեց իրեն տանջողներին:

*Կառավարիչ.* Մենք շատ ձևեր ունենք մարդկանց խոսեցնելու համար: Ես հաճախ զարմանում էի, թե ինչպե՞ս դրանցից ոչ մեկը չաշխատեց Զոսիմոսի վրա: Նրան շատ տանջեցին, իհարկե, բայց ոչինչ չստիպեց նրան երկրպագելու կայսրին՝ որպես աստծո:

*Զոսիմոս.* Միայն Աստծո Որդին կարող էր զորացնել ինձ, որպեսզի դիմանամ չարչարանքներին: Միայն Աստծո Որդին է արժանի հավատի, որի համար կարելի է տանջվել:

*Աթանաս.* Տեսնելով Զոսիմոսի անսասան հավատը՝ ես նույնպես դարձա հավատացյալ: Միայն նա, ով Աստծո ճշմարիտ Որդին է, կարող էր այդ վստահությունը, հավատը և խաղաղությունը ներշնչել Զոսիմոսին կամ մեկ այլ մարդու: Ես երբեք չեմ մոռանա նրա օրինակը և միշտ երախտապարտ կլինեմ նրան:

*Կառավարիչ.* Ի վերջո մենք ստիպված էինք բաց թողնել Զոսիմոսին: Եվ մեր բանտապահը՝ Աթանասը, միացավ նրան, երբ նա հեռացավ քաղաքից: Լսեցի, որ նրանք քաշվել են լեռները աղոթքի կյանքով ապրելու համար: Նրանք հրաժարվեցին ամեն ինչից՝ քաղաքային զվարճալից կյանքից, շուկայում վաճառվող ամենօրյա համեղ ուտելիքներից, թատրոնի ներկայացումներից:

Ի՜նչ անհեթեթություն, կամ արդյո՞ք նրանք այդպիսին էին:

## ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ



Այս դասը կենտրոնացած էր Սուրբ Պողոսի մտահոգության վրա, որ ճշմարիտ հավատքի եկածները մոլորեցվում էին սխալ վարդապետություն քարոզող ուսուցիչների կողմից: Պողոսը խոսում է այդպիսի մարդկանց տարբեր դրդապատճառների մասին՝ ասելով, որ ոմանք դա անում են նախանձից և ինքնահավանությունից, ոմանք էլ՝ սիրուց: Պողոսը նաև նշում է, որ ինքն ուրախ է, որովհետև երկու դեպքերում էլ քարոզվում է Ավետարանը: Արտասովոր է, որ Պողոսն ապրում էր այդ ուրախությունը նույնիսկ բանտում եղած ժամանակ: Բայց նա շատ խիստ կերպով շեշտում է Հիսուս Քրիստոսի մասին ճշմարտության և քրիստոնեական հավատի ճանաչման անհրաժեշտությունը:

Միաժամանակ Պողոսը շեշտում է «համամիտ» լինելու կարևորությունը, որով դասը նաև կենտրոնանում է միասին աշխատելու, ճշմարտության շուրջ համաձայնվելու վրա: Դասում ներկայացվում Աթանաս Կիլիկեցու պատմությունը (այս Աթանասին չպետք է շփոթել Աթանաս Մեծ Ալեքսանդրացու հետ), ով ինքնատիրապետմամբ արտահայտված քրիստոնեական չարչարանքի օրինակից տպավորվեց և դարձավ հավատացյալ:

Ընտանիքով զրուցե՛ք տանջանքի օրինակի շուրջ, որը տարվում է շնորհով և զորությամբ: Գուցե գիտեք մեկին, ով տարել է հիվանդություն կամ կորուստ կամ դժվարություն օրինակելի քաջությամբ և հանդարտությամբ: Ընտանիքով զրուցե՛ք, թե ձեզ համար ի՞նչ է նշանակում այդպիսի օրինակը:

Միասի՛ն աղոթեք, որ ձեր ընտանիքի անդամները կարող լինեն դառնալու լավ օրինակներ մյուսների համար տանջանքների հանդիպելիս:

Ահա մի աղոթք, որով խնդրում ենք Աստծո օգնությունը փառապանքն ու ցավը հեշտ տանելու համար:

*Աղաչում եմ Քեզ, Քրիստոս Փրկիչ իմ, որպեսզի Քո մեծ ողորմությամբ բժշկես Քո ծառայի հոգու և մարմնի ախտերն ու հիվանդությունները և կատարյալ առողջությամբ հասցնես ինձ հավիտենական անախտ կյանք: Քանզի առաքվեցիր Հոր կողմից, Միածին Որդի Աստծո, մարդկային ցեղին բժշկելու համար, Տեր իմ և Փրկիչ Հիսուս Քրիստոս, կյա՛նք տուր ինձ և ողորմի՛ր:*

# ԴԱՍ 29

# ԱՊՐԵՆՔ ԱՍՏԾՈ ՏԱՆԸ՝ ԵԿԵՂԵՑՈՒՄ

***«Մեր հույսը դրել ենք կենդանի Աստծո վրա, որ փրկիչն է բոլոր մարդկանց և մանավանդ հավատացյալների»:***

***Ա Տիմոթեոսին 4.10***

## ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ



Աշոտը լավ հղկեց թռչնի բույնի անհարթ ու կոպիտ եզրերը, որը պատրաստել էին քեռի Սերոբի հետ միասին: Աշոտին շատ էր դուր եկել իրենց պատրաստածը և ուրախ էր, որ շատ լավ բաներ էր սովորել քեռի Սերոբից, օրինակ՝ ինչպես լողալ, ինչպես օդապարիկ թռցնել, ինչպես փայտից իրեր պատրաստել, ինչպես հեծանիվ քշել, փոխել հեծանիվի ակը և այլն:

- Լա՛վ, երևում է կարգին գործ արեցինք, - ասաց քեռի Սերոբը՝ ձեռքերի մեջ պտտեցնելով թռչնի բույնը, - արդեն կարող ես որոշել, թե ինչ գույնով այն պիտի ներկես: Իսկ երբ չորանա, միասին մի քիչ չոր խոտ կդնենք մեջը, ապա կընտրես մի լավ ծառ՝ վրան ամրացնելու համար: Բայց մենք բավական աշխատեցինք այս առավոտ, և հիմա արդեն ճաշի ժամն է:

- Ես մի բան կպատրաստեմ ուտելու համար, - առաջարկեց Աշոտը, - մի համով աղցան և վրա կլցնեմ շատ համեմունքներ:

- Կեցցե՛ս, ախորժակս բացեցի՛ր, - ասաց քեռի Սերոբը, - ես սիրում եմ աղցան, բայց շատ հաճախ չեմ ուտում: Ես գլուխ չեմ հանում համեմունքներից ու լցոններից:

- Ես քեզ ցույց կտամ ինչպես պատրաստել իմ յուրահատուկ բաղադրատոմսը: Չտեսնվա՛ծ բան է, - ասաց Աշոտը:

- Լա՛վ, համոզեցի՛ր, - ժպտալով ասաց քեռին: Դու ինձ մի լավ բան կսովորեցնես, որ կյանքում ինձ պետք կլինի: Իհարկե՛, ուրախ կլինեմ, քանի որ կսկսեմ ավելի հաճախ աղցան ուտել:

***Աստվածաշնչի*** *այսօրվա պատմության մեջ կարդա՛, թե ինչպե՛ս էր Սբ. Պողոսը հորդորում հավատացյալներին համաձայնվել և միասին կառուցել իրենց հավատը:*

# ՊՈՂՈՍԸ ԽՐԱՏՈՒՄ ԵՎ ՔԱՋԱԼԵՐՈՒՄ Է ՏԻՄՈԹԵՈՍԻՆ

*Նմփ Ա Տիմոթեոսին 3.14-4.16*

Սուրբ Պողոսն այսպես է գրում Տիմոթեոսին.

-Հույս ունեմ, որ շուտով քեզ մոտ կլինեմ: Բայց այս բաները գրում եմ քեզ, որեսզի եթե ուշանամ, իմանաս, թե ինչպե՛ս եւրք է շարժվես Աստծո ընտանիքում, այսինքն՝ կենդանի Աստծո եկեղեցում, որ ճշմարտության սյունն ու խարիսխն է: Եվ անհերքելիորեն մեծ է աստվածպաշտության խորհուրդը, որովհետև.



Աստված երևաց մարմնով և արդարացավ հոգով, հայտնվեց հրեշտակներին, քարոզվեց ազգերի մեջ, աշխարհը հավատաց, փառքով բարձրացվեց երկինք:

Բայց Սուրբ Հոգին հայտնապես ասում է, թե վերջին ժամանակներում շատերը կլքեն հավատը՝ ականջ դնելով մոլորեցուցիչ չար ոգիների և դևերի ուսուցումներին, որոնք քարոզվում են կեղծավոր և ստախոս մարդկանց կողմից: Այս մարդիկ ամուսնությունն արգելում են և հրահանգում հեռու մնալ մի շարք ուտելիքներից, մինչդեռ Աստված այդ ուտելիքներն ստեղծեց, որպեսզի հավատացյալ և ճշմարտության ճանաչմանը հասած մարդիկ շնորհակալությամբ վայելեն դրանք:

Արդարև, Աստծո բոլոր ստեղծածները բարի են, և դրանց մեջ խոտելի բան չկա, մանավանդ դրանք շնորհակալությամբ ընդունողի համար, որովհետև ամեն ինչ սրբվում է Աստծո խոսքով և աղոթքով:

Դու, սակայն, Հիսուս Քրիստոսի իսկական ծառան կլինես, եթե այս խրատները փաս հավատացյալ եղբայրներին և ինքդ քեզ սնես այն հավատով ու ճշմարիտ ուսուցումներով, որոնց հետևող եղար: Իսկ առավելներին հատուկ և հավատը ղտորող առասելներից ամբողջովին հեռո՛ւ մնա:

Ինքդ քեզ մարզի՛ր աստվածաշտությամբ ապրելու, որովհետև եթե մարմնի մարզումներն օգտակար են որոշ բաների համար, աա աստվածպաշտությունն ամեն ինչի համար է օգտակար, քանի որ այն խոստանում է կյանք տալ թե՛ այս, թե՛ հանդերձյալ աշխարհում: Մեկ բան պարզ է, և ամեն մարդ պետք է գիտենա, որ փքնում ենք և հանձն ենք առնում նախատինքներ կրել, որովհետև մեր հույսը դրել ենք կենդանի Աստծո վրա, որ փրկիչն է բոլոր մարդկանց և մանավանդ հավատացյալների:

Դատվիրի՛ր այս բաները և սովորեցրո՛ւ: Եվ որպեսզի ոչ ոք քեզ չարհամարհի քո երիտասարդ տարիքի համար, օրինա՛կ եղիր հավատացյալներին քո խոսքով, վարմունքով, սիրով, հավատով և մաքուր կենցաղով: Մինչև իմ գալը հո՛գ տար նրանց մասին՝ ընթերցելով Աստծո խոսք, հորդորելով և ուսուցանելով: Անփույթ մի՛ եղիր այն պարգևի նկատմամբ, որ տրվեց քեզ մարգարեական հոգով, երբ երեցները ձեռք դրեցին քեզ վրա: Մտածի՛ր իմ այս ասածների մասին և աշխատի՛ր գործի՛ վերածել դրանք, որպեսզի ամեն մարդ հայտնապես տեսնի քո առաջադիմությունը: Ուշադի՛ր եղիր ինքդ քո նկատմամբ և քո ուսուցման նկատմամբ ու միշտ մնա այդպես՝ գիտենալով, որ այդ ձևով դու ոչ միայն քեզ կփրկես, այլ նաև բոլոր նրանց, ովքեր լսում են քեզ:

## Խորհենք պատմության շուրջ



1. Պողոսն ի՞նչ նկատի ուներ «Ինքդ քեզ մարզի՛ր աստվածպաշտությամբ ապրելու» ասելով:
2. Ինչո՞ւ է նա առավել կարևորում այն, քան մարմնի մարզումը:
3. Պատմության վերջնամասում Պողոսը խոսում է Տիմոթեոսին տրված շնորհի մասին: Ինչպե՞ս էր նա ստացել այդ շնորհը: Գրի՛ր դրա մասին պատմող խոսքերը պատմությունից:

____________________________________________________________

____________________________________________________________

4. Դա որքանո՞վ է նմանվում Եկեղեցում այսօր կատարվող քահանայական ձեռնադրության կերպին:

____________________________________________________________

____________________________________________________________

## Պատշաճեցրո՛ւ բառերը

*Ընդգծի՛ր Աստվածաշնչի պատմության այն բառերը, որոնք ունեն ներքևի յուրաքանչյուր կապակցության իմաստը և համապատասխան տառը գրի՛ր լուսանցքում:*

ա/ Հիսուս Քրիստոսը բարձրացավ Երկինք, Հոր մոտ:
բ/ Երիտասարդ լինել չի նշանակում, որ չես կարող ուսուցանել մյուսներին:
գ/ Կա որոշակի եղանակ, որով մենք ստանում ենք ամեն բան Աստծուց:
դ/ Բոլոր հավատացյալները պետք է առիթ ունենան լսելու բարձրաձայն ընթերցվող Սուրբ Գիրքը:
ե/ Հավատավոր առաջնորդը, որ բարի օրինակ է, կարող է փրկել ինքն իրեն և ուրիշներին:
զ/ Հիսուս Քրիստոսը յուրաքանչյուր անձի Փրկիչն է:



**Բառարան**

**ՍՅՈՒՆ՝** քարե կամ փայտե ամուր հենարան, առանց որի շենքը չի կարող կանգուն մնալ:

# Երիտասարդ Նոկրատիոսը

Որոշ ընտանիքներ երբեմն պատիվ են ունեցել ունենալու բազում սուրբ անդամներ: Սուրբ Գրիգոր Նյուսացին և Սուրբ Բարսեղ Մեծը, ովքեր եղբայրներ էին, ունեին նաև մի քույր՝ Սուրբ Մակրինեն: Նրանք բոլորն էլ սիրում էին իրենց կրտսեր եղբորը՝ Նոկրատիոսին: Բարսեղը գրում է, որ իր կրտսեր եղբայրն «ավելի մեծ էր իր ուժով, արագությամբ, որոշածն անելու ջիղով», քան իրենք մնացյալը: Նոկրատիոսը հատկապես կապված էր մորը և մշտապես ժպիտ էր պարգևում նրան:

Այս երիտասարդը սովորում էր իրավաբան դառնալու համար: Ընտանիքի մյուս անդամների նման նա շատ խելացի էր: Լավ կրթված լինելուց բացի նա գերազանց հռետոր էր, հրապարակախոս, որով նա հաստատ կարող էր հաջողված իրավաբան դառնալ և շատ փող աշխատել:

Բայց Նոկրատիոսը որոշել էր դառնալ մի բան, որ շատերին գուցե զարմանալի թվար: Նա հասկացավ, որ իր ուզածն աղոթքի կյանքով մենակ ապրելն է, որպեսզի իր ժամանակը և ուշադրությունը հատկացներ Աստծո կամքի կատարմանը: Ինչպես եղբայրը՝ Գրիգոր Նյուսացին, գրում է, Նոկրատիոսն ուզում էր «ինքն իրեն հեռացնել քաղաքի աղմուկից և հոգսերից, որ շրջապատում էին թե՛ զինվորին, թե՛ հայցվորին դատական ատյաններում»:



Այսպիսով Նոկրատիոսը գնաց ապրելու գետի ափին, ծառերով ու բարձրաբերձ լեռներով պատնեշված մի վայրում: Բայց նա չէր «թաքնվում» մյուս մարդկանցից: Նա գտավ իր նման ապրող մի քանի ծեր, աղքատացած փղամարկանց ու կանանց: Բայց նրանք այնտեղ չէին եկել իրենց ընտրությամբ: Այլ նրանք չքավոր ու անտուն մարդիկ էին: Նրանք անգամ փող չունեին իրենց կարիքները հոգալու համար: Այսպիսով Նոկրատիոսը հոգ էր տանում նրանց մասին և ձուկ էր բռնում նրանց համար:

Մի օր Նոկրատիոսը չվերադարձավ ձկնորսությունից: Նրա խնամքի տակ եղող մարդիկ սկսեցին փնտրել նրան: Նրան գտան գետափին, մահացած վիճակում: Բռնության ոչ մի հետք չկար, և ոչ ոք չգիտեր, թե ինչից էր նա մահացել. երևի մարմնի հոգնածությունից ուշաթափվել, գետին ընկել և անօգնական մնալով մահացել:

Իրենց սիրելի որդու և եղբոր մահը ծանր հարված էր Նոկրատիոսի ընտանիքի համար, և նրա մայրը երկար ժամանակ չէր կարողանում մխիթարվել իր վշտից: Նոկրատիոսը քրիստոնեական սեր ցուցաբերեց շատ մարդկանց, ովքեր տարիքով շատ մեծ էին նրանից: Եվ չնայած իր երիտասարդ տարիքին՝ Նոկրատիոսը լավ ուսուցիչ էր և մյուսներին ցույց էր տալիս, թե ինչպես պետք է հետևել Հիսուս Քրիստոսի սիրո օրինակին:

Ենթադրենք՝ դու Նոկրապիոսն ես, և ընկերներիցդ մեկը հարցնում է քեզ. «Ինչի՞ մասին ես մտածում: Դու ամբողջ ժամանակ սովորում էիր իրավաբան դառնալու համար, դու խելացի ես, հաստատ շատ փող կաշխատես: Եվ հիմա դու գնում ես հեռու անապա՞տ: Սա այն է, ինչ դու իսկապես ուզո՞ւմ ես»:

Ինչպե՞ս կպատասխանեիր: *Գրի՛ր քո մտածումները ներքևի տողերի վրա:*



## Մենք ապրում ենք քրիստոնեական սիրով

Նոկրապիոսը մտահոգ էր տարեց մարդկանց համար և մշտապես ուտելիք էր տալիս նրանց: Նա քրիստոնեական սիրո օրինակ ցույց տվեց նրանց:

Քո խմբի հետ մշակի՛ր տարեց մարդու կամ մարդկանց խմբի սեր ցուցաբերելու որոշ եղանակներ:

*Ներքևում գրի՛ր քո մշակած ծրագրի քայլերը:*

## Իմ ջանքերը հանուն բարեպաշտության

Հավատարիմ Տիմոթեոսին ուղղված Սբ Պողոսի խրատին, մենք բոլորս կոչված ենք մարզելու ինքներս մեզ աստվածպաշտությամբ: Ուսումնասիրի՛ր ներքևում գրված գործողությունները, որոնք կարող են մարդուն առաջնորդել բարեպաշտ, առաքինի կյանքի: ✓ այսպիսի նշա՛ն դիր նրանց առջևում, որն արդեն արել ես, և + նշան՝ որոնք կուզեիր անել: Դատարկ տողերի վրա կարող ես ավելացնել քո ինքնուրույն գաղափարները:



___ քաղաքավարի լինել մեծերի և ընկերների հետ:
___ ճշմարտությունը խոսել:
___ ջանասեր լինել աշխատանքում:
___ սիրալիր վերաբերվել բոլորին:

______________________________



___ մաքրել եկեղեցու ներսը և բակը:
___ օգնել քահանային:
___ կանոնավոր մասնակցել եկեղեցական արարողություններին:

______________________________



___ ինքդ կամ ընկերոջդ հետ այցելել փարեց մարդկանց:
___ պատրաստել և ուղարկել բացիկ կամ փոքրիկ նվեր:
___ սովորել մի ոտանավոր կամ երգ հանդեսների համար:

______________________________



___ օգնել տանը:
___ հարգել ծնողներին:
___ օգնել՝ հոգ տանելով տան մեծերի ու ընտանիքի մյուս անդամների մասին:

______________________________

Կարելի է օգտագործել նախորդ էջի ծրագրի համար նախատեսված առաջարկները և քո ինքնուրույն մտածումները:

## ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Դասը հիմնված է Սուրբ Պողոսի՝ իր երիտասարդ հետևորդ Տիմոթեոսին ուղղված խրատի վրա: Պողոսն ուզում էր, որ Տիմոթեոսը լինի առաջնորդ և ուսուցիչ քրիստոնեական համայնքի, ներառյալ Տիմոթեոսից տարիքով մեծ անդամների համար: Դասը նաև անդրադառնում է Նոկրատիոսի պատմությանը, ով երիտասարդ հասակում մահացավ, բայց օգնեց փարեց մարդկանց և նրանց ցույց տվեց քրիստոնեական սիրո օրինակը:

Ընտանիքով զրուցե՛ք այն եղանակների շուրջ, որոնցով երիտասարդը կարող է օգնել կամ ուսուցանել ավելի տարիքավոր մարդու: Կիսե՛ք ձեզանից ավելի երիտասարդ անձից օգտակար մեր բան սովորելու կամ մի լավ օրինակ առնելու ձեր անձնական փորձառությունները:

Ահա Սբ Ներսես Շնորհալու հոգևոր երգերից մի տուն, որը երգվում է Ավագ Շաբաթվա Դռնբացեքի արարողության ընթացքում: Մենք խնդրում ենք, որ Աստված օգնի մեզ «արթուն» լինել և գործոն Աստծո կամքը կատարելու մեջ: Ընտանիքով միասին արտասանե՛ք կամ երգե՛ք շարականը՝ հիշելով, որ մենք կոչված ենք օգնելու մյուսներին, անկախ նրանից՝ երիտասարդ ենք, թե տարեց: «Շնորհեա մեզ Տէր» շարականի նոտաները փնտ՛ր Հավելված բաժնում, էջ 125:

*Շնորհի՛ր մեզ, Տե՛ր, արթնություն իմաստուն կույսերի օրինակով, և պայծառացրո՛ւ մեր հոգիների լապտերները:*

ԴԱՍ 30

# ՄԵՆՔ ԸՆԴՄԻՇՏ ԿԼԻՆԵՆՔ ՏԻՐՈՋ ՀԵՏ

*«Դուք բոլորդ լույսի որդիներ եք, ցերեկվա՛ որդիներ»:*
*Ա Թեսաղոնիկեցիներին 5.5*

## ՃԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ



Կյանքում ամեն մարդ ապրում է վիշտ ու փխրություն: Երբեմն փխրությունը համակում է մեզ կարճ ժամանակով, որից հետո մենք ուրախություն ենք ապրում կրկին: Բայց կա նաև այնպիսի փխրություն և վիշտ, որ լինում է երկար և ծանր: Մենք պեսնում ենք մեր սիրելի մարդկանց կսկիծը, պայքարը հիվանդության դեմ կամ մահը:

Մարդիկ տարբեր ձևերով են տանում այս դժվարին փորձառությունները: Ոմանք թույլ են տալիս, որ փխրությունն ու վիշտը գերիշխեն իրենց կյանքին և երբեք չեն մխիթարվում: Իսկ ոմանք ի վիճակի են լինում շարունակել իրենց լիարժեք կյանքը: Նրանք սգում են կորուստն ու ցավը, բայց չեն խավարեցնում իրենց ողջ գոյությունը: Նրանք կարողանում են նայել փխրությունից այն կողմ: Դրանք այն մարդիկ են, ովքեր լցված են հույսով:

*Գծանկարի՛ր կամ գրի՛ր այն պահերի մասին, երբ ապրել ես փխրություն կամ ցավ: Ապա նույն կերպ արտահայտի՛ր հույսի գաղափարը:*

***Աստվածաշնչի*** *պատմության մեջ կարդա՛ Սբ. Պողոսի խոսքերը, որոնցով նա հորդորում էր հավատացյալներին զինվել հույսով նույնիսկ մեծ կորուստ կրելիս:*

# ՊՈՂՈՍԸ ԳՐՈՒՄ Է ՄԵԾԱԳՈՒՅՆ ՀՈՒՅՍԻ ՄԱՍԻՆ

*Նմր Ա Թեսաղոնիկեցիներին 4.13-5.11*

Սբ Պողոսը գրում է թեսաղոնիկեցիներին հետևյալը.

-Եղբայրնե՛ր, ուզում եմ, որ մեռածների մասին ճշմարտությունն իմանաք, որպեսզի չփխրեք ուրիշների նման, որոնք որևէ հույս չունեն: Եթե հավատում ենք, որ Հիսուսը մեռավ և հարություն առավ, նույնպես և հավատում ենք, որ Աստված Հիսուսի միջոցով և նրա հետ վերստին կյանքի կբերի նրանց, որոնք նրան հավատացին և մեռան:



Հետևաբար, ասում ենք ձեզ, ինչպես որ Տերն ինքը սովորեցրեց. մեզնից նրանք, որ ողջ մնացին կլինեն Տիրոջ գալուստի ժամանակ, մեռածներից առաջ չեն անցնի, որովհետև երբ հրամանը լսվի, հրեշտակապետն ազդարարի, և Աստծո փողը հնչի, Տերն ինքը կիջնի երկնքից, և նախ հարություն կառնեն նրանք, որ հավատացին Քրիստոսին ու մեռան: Եվ ապա՝ մեզնից նրանք, որ այն ժամանակ դեռ ողջ մնացած կլինեն, նրանց հետ միասին ամպերի վրա կհափշտակվեն-կտարվեն երկինք՝ դիմավորելու Տիրոջը, և այնուհետև հավիտյան Տիրոջ հետ կլինենք: Ուստի այս մտածումներո՛վ քաջալերեցեք միմյանց:

Բայց ինչ վերաբերում է այս եղելությունների ժամին ու ժամանակին, կարիք չեմ զգում դրա մասին ձեզ որևէ բան գրելու, որովհետև դուք ինքներդ շատ լավ գիտեք, որ ինչպես գողը գալիս է չսպասված ժամին, այնպես էլ Տիրոջ օրը չսպասված ժամին կգա: Երբ մարդիկ ասեն՝ «Հանգիստ ենք և ապահով», ճիշտ այն ժամանակ հանկարծակի վրա կհասնի նրանց կործանումը, ինչպես հանկարծակի է բռնում հղի կնոջ երկունքը, և նրանք ազատում չեն ունենալու:

Բայց դուք, եղբայրնե՛ր, խավարի մեջ չեք, որ Տիրոջ օրը գողի նման անակնկալի բերի ձեզ, որովհետև դուք բոլորդ լույսի որդիներ եք, ցերեկվա՛ որդիներ: Մենք գիշերվան չենք պատկանում, ոչ էլ խավարին: Հետևաբար, քնով չտարվենք ուրիշների նման, այլ արթուն և զգաստ լինենք, որովհետև քնողները գիշերն են քնում, հարբեցողներն էլ գիշերն են հարբում: Բայց քանի որ մենք ցերեկվան ենք պատկանում, պատրաստ լինենք՝ հավատի ու սիրո զրահը հագած և փրկության հույսի սաղավարտը մեր գլխին դրած, որովհետև Աստված մեզ չի ընտրել, որպեսզի նրա բարկության առարկան դառնանք, այլ որպեսզի ժառանգենք նրա փրկությունը մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի միջոցով: Արդարև, Քրիստոսը մեռավ մեզ համար, որպեսզի մենք նրանո՛վ կենդանի մնանք նրա գալստյան ժամանակ, ողջ լինենք թե մեռած: Ուստի քաջալերեցե՛ք միմյանց հավատը, ինչպես որ արդեն անում եք:

## Խորհենք պատմության շուրջ

1. Ո՞րն է այն հույսը, որի մասին Պողոսը խոսում է հատվածի սկզբում:
2. Սեփական բառերով նկարագրի՛ր, թե ինչպե՞ս է Պողոսը խոսում Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալստյան մասին:
3. Քո կարծիքով՝ ինչո՞ւ է Պողոսը համեմատում հավատը, սերը և փրկության հույսը զրահի և սաղավարտի հետ:

## Գտի՛ր տողահամարը

*Կարդա՛ ներքևի սուրբգրային տողերը: Ապա ընդգծի՛ր Պողոսի համանուն խոսքերը Աստվածաշնչի պատմության մեջ՝ օգտագործելով նշված գույները՝ ըստ Աստվածաշնչի յուրաքանչյուր գրքի:*

1. Մատթեոս 25.13 «Ուրեմն արթո՛ւն կացեք, որովհետև չգիտեք Մարդու Որդու գալստյան ո՛չ օրը և ո՛չ էլ ժամը»:
2. Հռոմեացիներին 13.12 «Ուստի հեռանանք խավարի գործերից և մեզ վրա վերցնենք լույսի զենքերը»:
3. Եսայի 27.13 «Այն օրը պիտի հնչեցնեն մեծ փողը, և նրանք, ովքեր ցրված են... և կորած... պիտի վերադառնան ու Երուսաղեմի սուրբ լեռան վրա երկրպագեն Տիրոջը»:

**Բառարան**

**ՏԻՐՈՋ ՕՐԸ՝** մեկ այլ հասկացություն Վերջին Դատաստանի օրվա համար՝ ինչպես նախորդ դասերում անցած «Քրիստոսի օրը»:

4. Եփեսացիներին 6.13 «Ուստի առե՛ք Աստծո սպառազինությունը, որպեսզի երբ չար օրը գա, կարողանաք հետ մղել Չարի հարվածները»:





# Հավատամքը և մեր աղոթքները

Նիկիական հանգանակը մեր հավատքի հիմնական սահմանումն է, որին որպես քրիստոնյաներ հավատում ենք: Հավատացյալները և նրանց հոգևոր առաջնորդները աշխատեցին, պայքարեցին, բանավիճեցին և աղոթեցին, որպեսզի որոշեն Հավատամքի բառերը և վստահ լինեն իրենց սաստի մեջ, թե ինչ Աստված ցույց է տվել, ճշմարիտ լինի Նրա մասին: Հավատամքը և մեր Եկեղեցու բոլոր աղոթքներն ու շարականները հիմնված են Աստվածաշնչի վրա: Հաճախ ասում ենք. «Մենք աղոթում ենք, ինչին հավատում ենք»:

*Համեմատի՛ր **Ա Թեսաղոնիկեցիներին 4.13-5.11** հատվածը աջ և ձախ սյունակներում տրված Նիկիական հանգանակի և Թաղման կարգի Հանգստյան շարականի հետ: Ինչպե՞ս են դրանք համեմատվում: Սուրբգրային տողի համարը գրի՛ր Նիկիական հանգանակի և շարականի սյունակների համապատասխան տողերի առջևի գծիկների վրա:*

## Նիկիական հանգանակ

I __ Հավատում ենք մեկ Աստծո՝ Ամենակալ Հորը, երկնքի ու երկրի. երևելի և աներևույթ էակների Արարչին:

II __ Հավատում ենք մեկ Տեր Հիսուս Քրիստոսին՝ Աստծո Որդուն, Հայր Աստծուց ծնված Միածնին:

III __Ով մարդկանցս և մեր փրկության համար իջավ երկնքից, չարչարվեց, խաչվեց, թաղվեց և երրորդ օրը հարություն առավ:

IV __ Գալու է նույն մարմնով և Հոր փառքով դատելու ողջերին ու մեռածներին:

## Աստվածաշունչ

1. Եթե հավատում ենք, թե Հիսուսը մեռավ և հարություն առավ, այդպես էլ Աստված Հիսուսի միջոցով ննջեցյալներին եփ կյանքի պիփի բերի նրա հետ:
2. Տերն ինքը, ազդարարության նշանով, հրեշտակապետի ձայնով և Աստծո շեփորով պիփի իջնի երկնքից, և Քրիստոսով մեռածները առաջինը հարություն պիփի առնեն:
3. Որովհետև Աստված նախասահմանեց մեզ փրկությունը ժառանգելու համար մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով:
4. Նա մեռավ մեզ համար, որպեսզի արթուն լինենք թե ննջենք, նրա հետ միասի՛ն ապրենք:

## Հանգստյան շարական

ա. __Հայր Անսկիզբ, Բարեխնամ. Մարդասեր, որ արարիչն ես հոգիների և մարմինների, հիշի՛ր մեր ննջեցյալներին և հանգչեցրո՛ւ Քո սուրբերի հետ:

բ. __Որդիդ Միածին, որ բարեգութ ես բոլորի հանդեպ, և՛ խաչով և՛ արյամբ գնեցիր Քո ժողովրդին, հիշի՛ր Քո արյան գինը հանդիսացողներին:

գ. __Քո խաչին, Քրիստոս, երկրպագում ենք բոլոր արարածները, թող սա լինի մեզ հաղթող պահապան՝ փրկելու մեզ բանսարկուի պատրանքներից:

# Կորուստ, բայց ոչ վախ. Սբ Սարգիսը և Սբ Բագոսը



Հռոմի Մաքսիմիանոս կայսեր արքունիքում կային բազում կրթված, փորձառու ազնվական ասպետներ: Բայց երիտասարդ երկու ընկերներ Սարգիսը և Բագոսը աչքի էին ընկնում մնացածներից: Կայսրը գնահատում էր նրանց խելամիտ գաղափարները, հայրենասիրական նախաձեռնողիր ոգին:

Սակայն հեթանոս Մաքսիմիանոսը պարզում է մի բան, որի մասին չգիտեր այն օրը, երբ պատրաստվում էր պարգևատրել այս երկու անձերին: Նա կանչում է նրանց և կանգնեցնում հենց իր կողքին, պատվո ամենաբարձր տեղում, որպեսզի հրապարակայնորեն զոհեր մատուցեն կուռքերին:

Հենց այդ պահին էր, որ Մաքսիմիանոսը բացահայտում է այդ երկու ասպետների ջերմեռանդ քրիստոնյա լինելը: Նրանք կուռքերին զոհեր չէին մատուցում ոչ այն պատճառով, որպեսզի չնեղացնեն կայսերը, այլ որովհետև նրանք չէին կարող ուրանալ Հիսուս Քրիստոսին՝ որպես միակ Տիրոջ:

Կայսրը խիստ բարկացավ: Սարգսի և Բագոսի հանդեպ ունեցած կայսեր ամբողջ համակրանքը փոխակերպվեց ատելության: Նա զրկեց նրանց իշխանական բոլոր պատիվներից՝ մատանիներից, պալատական թիկնոցներից ու մեդալներից: Ապա նրանց պարանոցներին հագցրին եզների լուծը և սկսեցին ման տալ փողոցներով, որպեսզի մարդիկ ծաղրեն և թքեն նրանց վրա: Մաքսիմիանոսը, այնուհետև, ուղարկեց նրանց Ասիայի կառավարիչ Անտիոքոսի մոտ: Սարգիսը և Բագոսը ժամանակին օգնել էին Անտիոքոսին այդ դիրքին հասնելու գործում՝ նրա մասին բարեխոսելով կայսերը: Թերևս հիշելով նրանց օգնությունը՝ Անտիոքոսը հորդորեց նրանց ուրանալ Քրիստոսին և փրկվել լրացուցիչ անարգանքից ու տանջանքներից: Բայց նրանք առանց վարանելու պատասխանեցին.

-Պատիվ կամ անարգանք, կյանք կամ մահ՝ այս բոլորը նույնն են նրանց համար, ովքեր փնտրում են Երկնքի արքայությունը:

Այս խոսքից Անտիոքոսի համար պարզ դարձավ, որ նրանք չեն ուրանա Քրիստոսին:



Այսպիսով, Անտիոքոսը Սարգիսի աչքի առջև տանջահար արեց Բագոսին, մինչև որ նրա ծեծկռտված մարմինն ի վերջո տեղի տվեց և մահացավ: Սարգիսը նույնպես մահացավ ծանր չարչարանքներից:

Այս երկու ընկերները կորցրին շատ բան՝ հենց արժանապատվությունը, որպես կայսերական պալատի անդամներ, իրենց ֆիզիկական ուժը և միմյանց, բայց երբեք չհուսահատվեցին և չլքեցին իրենց հավատը: Սբ Սարգիսը և Սբ Բագոսն ապրեցին Աստծո արքայության հույսով:

## Հույսը մեր խարիսխն է

Սբ Սարգիս և Սբ Բագոս ընկերների հավատը նույնը չէր, ինչ մյուսներինը: Դրա պատճառով սուրբերը տարբեր տեսակի ճնշումների ենթարկվեցին, սակայն չուրացան իրենց ճշմարիտ հավատը շնորհիվ այն հույսի, որ ի Քրիստոս իրենց հավատն է պարգևել նրանց:

Դու գուցե կրես տարբեր տեսակի ճնշումներ քո շրջապատում՝ դպրոցում կամ համայնքում: Գուցե բոլորը չկիսեն ի Հիսուս Քրիստոս քո հավատը և ըստ այդմ քո ընտրած կենսակերպը:

*Տետրակիդ մեջ կամ առանձին թղթի վրա գրի՛ր քո փորձառության մասին և ասա՛, թե ինչպե՞ս վարվեցիր նրանց հետ: Կա՞ր հատուկ մեկը, որն աջակցում կամ ներշնչում էր քեզ՝ ապրելու որպես Հիսուսի ճշմարիտ հետևորդ:*

## Շարական

Մարտում հաղթող, քաջ նահատակներ՝ երանելի սուրբ մարտիրոսներ, ովքեր վանեցին թշնամուն խորտակելով:

Ձայնը երկնքից վկայելով ասում է. եկեք իմ Հոր օրհնյալներ՝ ժառանգորդներ երկնքի խորանների:

Կանոն մարտիրոսաց Տէր յերկնից ԳԿ




## ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Այս դասը պարունակում է Սուրբ Պողոսի հորդորը հավատացյալներին՝ պահպանելու իրենց հույսը արքայության համար: Նա հորդորում է չփխրել նրանց պես, «որոնք հույս չունեն»: Ապա ուրվագծում է, թե ինչ պիտի մեզանից յուրաքանչյուրի հետ, երբ Տերը գա նորից՝ հրեշտակների ուղեկցությամբ և շեփորի ձայնով Նա պիտի հավաքի մեզ, նախ մահացածներին, ապա ողջերին, որպեսզի միասի՛ն հանդիպենք Տիրոջ հետ: Ահա սա է Աստվածաշնչի և Սուրբ Եկեղեցու վարդապետությունը, որ պիտի լինի Աստծո ժողովրդի մեկ հավաք՝ հանդիպելու Նրա հետ, այլ ոչ թե՝ «հափշտակություն», որով ոմանք պիտի վերցվեն երկրի վրայից, իսկ մյուսները մնան:

Ընտանիքով կազմե՛ք ձեր սիրելի մարդկանց մի ցուցակ, ովքեր մահացել են: Միասի՛ն աղոթեք նրանց համար, այնուհետև շնորհակալություն հայտնե՛ք Աստծուն Արքայության խոստումի համար, ինչը նշանակում է, որ մենք երբեք չպիտի մշտապես բաժանվենք մեր սիրելիներից:

ԳԼՈՒԽ 9

# ՀԱՎԱՏԱՐԻՄ ՔՐԻՍՏՈՍԻ ՈՒՍՄՈՒՆՔԻՆ



Սբ Պողոսի և Սբ Հակոբոսի նամակների միջոցով այս գլխում ընդգրկված դասերը ցույց են տալիս, թե ինչպես վաղ քրիստոնյաները փորձում էին ապրել Հիսուս Քրիստոսի օրինակի համաձայն: Մեզ նման նրանք նույնպես ունեին իրենց թերությունները: Բայց և Սուրբ Հոգու առաջնորդությամբ նրանք իրենց համար բարձր նշաձող սահմանեցին՝ հավատարմորեն հետևելու Հիսուս Քրիստոսին և ծառայելու Տիրոջն ամբողջ սրտով:



## Ծնողների համար

Սբ Պողոսի և Սբ Հակոբոսի նամակների միջոցով այս գլխում ընդգրկված դասերը ցույց են տալիս, թե ինչպես վաղ քրիստոնյաները փորձում էին ապրել Հիսուս Քրիստոսի օրինակի համաձայն: Մեզ նման նրանք նույնպես ունեին իրենց թերությունները: Բայց և Սուրբ Հոգու առաջնորդությամբ նրանք իրենց համար բարձր նշաձող սահմանեցին՝ հավատարմորեն հետևելու Հիսուս Քրիստոսին և ծառայելու Տիրոջն ամբողջ սրտով: Նրանց կյանքը և պայքարը հույս և քաջալերանք է ներշնչում մեզ, երբ մենք առաջնորդում ենք մեր զավակներին փարվելու քրիստոնեական կյանքին շատ հաճախ ոչ-քրիստոնեական ընթացքով շարժվող այս աշխարհում:

ԴԱՍ 31

# ՎԵՐԱՆՈՐՈԳՎԵՆՔ ՀՈԳՈՎ

***«Նմանվեցե՛ք Աստծուն, որպես նրա սիրելի որդիներ և շարժվեցե՛ք սիրով, ինչպես որ Քրիստոսը սիրեց մեզ և մեզ փրկելու համար իրեն իրեն ընծայեց Աստծուն»:***

***Եփեսացիներին 5.1-2***

## ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

Կա՛ն արդյոք մարդիկ, որոնց օրինակին կցանկանայիր հետևել: Մեզանից շատերն ուզում են նմանվել նրանց, որոնցով հիանում ենք, մարդկանցով, ովքեր անում են բաներ, որ մենք կցանկանայինք անել կամ ովքեր ունեն բաներ, որ մենք կցանկանաինք ունենալ: Ահա որոշ ընտրություններ: Ո՞ր անձին կգերադասեիր նմանվել:

Ես կգերադասեի նմանվել նրան, ով.



___ շատ փող ունի:
___ արտաքնապես շատ գրավիչ է:



___ հաստուկ ոճ ունի, որ մյուսները ընդօրինակում են:
___ խոսում է լավ և ներշնչում մյուսներին:



___ հաջողակ ձեռներեց է:
___ հաջողակ նկարիչ է:



___ գերազանց մարզիկ է:
___ գերազանց հարցեր լուծող է:

___ հայտնի է հանրային կառավարման ոլորտում:
___ հայտնի է ղեկավարներին անհատական խորհուրդներ տալու մեջ:



___ աշխատում է երեխաների հետ:
___ աշխատում է տարեցների հետ:



___ շատ ժամանակ է անցկացնում միայնակ՝ հետազոտելով աշխարհի հեռավոր տարածքները:
___ շատ ժամանակ է անցկացնում մարդկանց խմբերի հետ՝ քննարկելով գաղափարներ և համաշխարհային խնդիրներ:

*__Աստվածաշնչի__ պատմության մեջ ընթերցի՛ր Սբ. Պողոսի գաղափարները, թե ինչպե՛ս կարող ենք նմանվել Հիսուս Քրիստոսին:*



# ՍԲ ՊՈՂՈՍԸ ՀՈՐԴՈՐՈՒՄ Է ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻՆ ՆՄԱՆՎԵԼ ՔՐԻՍՏՈՍԻՆ

*Նմմտ Եփեսացիներին 4.17-5.2*

Սբ Պողոսը հետևյալն է գրում Եփեսոսի քրիստոնյաներին.

-Տիրոջ կողմից ազդարարում եմ ձեզ, որ նորից չվերադառնաք այն կենցաղին, որով հեթանոսներն են արում անմտորեն: Նրանց միտքը խավարած է. իրենց տգիտության ու համառ անտարբերության պատճառով նրանք օտարացած են Աստծո կյանքից. և քանի որ այդ կյանքի հույսը չունեն, իրենք իրենց տվել են անառակության և ամեն պղծություն գործում են անհագ կերով: Բայց ես ձեզ սովորեցրի, որ այդ չէ Քրիստոսի ճանապարհը: Դուք լսել եք նրա պատգամները և նրան միանալով՝ սովորել, որ Հիսուսի մեջ է ճշմարտությունը: Ուստի մոռացե՛ք ձեր հին ինքնությունը, այսինքն՝ ձեր նախկին ապրելակերպը, որ ապականված էր խաբուսիկ ցանկություններով, վերանորոգվեցե՛ք հոգով՝ փոխելով ձեր մտածելակերպը, եղե՛ք նոր մարդ՝ստեղծված Աստծո պատկերի համաձայն, և ճշմարիտ կյանքն ապրեցե՛ք արդարությամբ ու սրբությամբ:

Հետևաբար հրաժարվեցե՛ք ստախոսությունից: «Ամեն մարդ թող ճշմարտությունն ասի իր ընկերոջը», ինչպես ասում է մարգարեն, որովհետև, միացած լինելով Քրիստոսին, միմյանց անդամներ ենք: Եվ ինչպես սաղմոսերգուն է ասում՝ «Նույնիսկ երբ բարկանաք, չլինի թե մեղանչեք», և բարկացած չմնաք մինչև երեկո: Երբեք առիթ մի՛ տվեք Սատանային: Ով գողությամբ էր ապրում, այլևս թող չգողանա, այլ վարժվի արդար վաստակով ոչ միայն հացը շահելու, այլև բարիք գործելու՝ օգնելով նրանց, որոնք կարիքի մեջ են: Ոչ մի տգեղ խոսք թող չելնի ձեր բերանից: Խոսեցե՛ք միայն այն, ինչ որ պետք է, ինչ որ բարի է՝ ուրիշների հավատն ամրապնդելու համար, որպեսզի լսողները լցվեն Աստծո շնորհով: Մի՛ տրտմեցրեք Աստծո Սուրբ Հոգին, որով կնքվեցիք փրկության օրվան հասնելու համար: Արմատախի՛լ արեք ձեզնից ամեն դառնություն, բարկություն ու զայրույթ, գոռգոռոց և հայհոյություն, և այդպիսով կանխած կլինեք դրանց չար հետևանքները: Միմյանց հանդեպ քաղցր ու գթած եղե՛ք՝ ներելով միմյանց, ինչպես և Աստված ներեց մեզ Քրիստոսի միջոցով:

Նմանվեցե՛ք Աստծուն, որպես նրա սիրելի որդիներ, և շարժվեցե՛ք սիրով, ինչես որ Քրիստոսը սիրեց մեզ և մեզ փրկելու համար ինքն իրեն ընծայեց Աստծուն՝ որպես անուշահոտ ընծա և զոհ:





## Խորհենք պատմության շուրջ

Պողոսն ասում է եփեսացիներին, որ չպետք է նմանվեն հեթանոսների, ովքեր ապրում են կարծրասիրտ ընթացքով: Նաև հայտնում է, որ նրանք պետք է լինեն գթասիրտ միմյանց հանդեպ: Քո կարծիքով՝ ի՞նչ են նշանակում այդ երկու բառերը: Ինչպե՞ս է վարվում «կարծրասիրտ» մարդը: Ինչպե՞ս է վարվում «գթասիրտ» մարդը: *Գրի՛ր կամ նկարի՛ր քո պատասխանները ներքևում:*

Պողոսն ասում է եփեսացիներին, որ, եթե զայրանում են, չպետք է թույլ տան, որ արևը մայր մտնի նրանց բարկության վրա: Քո կարծիքով՝ նա ի՞նչ նկատի ուներ այդ խոսքով: Եթե նրա խրատն այլ խոսքերով շարադրեիր, ի՞նչ բառեր կընտրեիր: *Գրի՛ր դրանք ներքևի տողերի վրա:*

## Նմանվենք մեր Տիրոջը

Լավ պահվածքի օրինակներ

Վատ պահվածքի օրինակներ



**Բառարան**

**ԿՆՔՎԵԼ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ՀԱՄԱՐ՝** մենք կնքվում ենք Սուրբ Հոգով մկրտվելիս, Դրոշմի խորհրդի ժամանակ: Դա նշանակում է, որ մենք պատկանում ենք Աստծուն և այլևս անդամ ենք դառնում Տիրոջ հոտի:

# Սուրբ Խորհուրդները ուղղորդում են մեզ. Մկրտության Խորհուրդը

Ուղղափառ քրիստոնյաները սովորաբար մկրտվում են մանուկ հասակում: Կյանքի վաղ տարիներից նրանք դառնում են Աստծո ընտանիքի՝ Եկեղեցու անդամ և հանձնվում են Աստծո պահպանությանը: Մկրտվելուց հետո դու ունենում ես այդ պահպանությունը քո ամբողջ կյանքի ընթացքում:

*Ահա Մկրտության խորհրդի աղոթքներից մեկը: Կարդա՛ աղոթքը, այնուհետև պատասխանի՛ր հաջորդող հարցերին:*

*Դո՛ւ, Տե՛ր, Քո մեծ զորությամբ ստեղծեցիր ծովը և ցամաքը և նրանցում ապրող բոլոր արարածներին: Նաև առաքեցիր Քո առաքյալներին՝ հրաման տալով քարոզել և մկրտել բոլոր հեթանոսներին Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով: Այլև Քո անսուտ խոսքով սահմանեցիր՝ ջրից և հոգուց չծնվածներին չմտնել Աստծո արքայություն: Այս խոսքից զարհուրած Քո ծառան, փափագելով մշտնջենավոր կյանքը, ինքնակամ եկել է մկրտվելու այս սուրբ ջրում: Արդ՝ աղաչում ենք Քեզ, Տե՛ր, Քո Սուրբ Հոգին առաքի՛ր այս ջրի մեջ և սրբագործի՛ր այն, ինչպես սրբագործեցիր Հորդանան գետի ջրերը նրա մեջ իջնելով, մկրտության այս ավազանի օրինակով երկրորդ ծնունդ տալու բոլոր մարդկանց: Եվ շնորհի՛ր այս ջրում այժմ մկրտվողին մեղքերի թողություն և Սուրբ Հոգու ընդունելություն, Երկնավոր Հորը որդեգրություն և Երկնքի արքայության ժառանգություն: Որպեսզի մեղքերից սրբված, Քո կամքի համաձայն ապրի այս աշխարհում, իսկ հանդերձյալ կյանքում ընդունի անսպառ բարիքները Քո բոլոր սուրբերի հետ և ուրախությամբ գոհանա և միշտ փառավորի Քեզ Հոր և Սուրբ Հոգուդ հետ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:*

Աղոթքում կարդում ենք որոշ մտքեր, որոնք սերտորեն աղերսվում են Պողոսի՝ եփեսացիներին ուղղված գաղափարների հետ:

- Աղոթքն ի՞նչ է ասում երկրորդ ծննդյան մասին: Իսկ Պողոսն ի՞նչ է ասում նոր մարդու մասին:
- Պողոսն ի՞նչ է ասում մեղքեր գործելու մասին, իսկ աղոթքն ի՞նչ է ասում մեղքերից սրբվելու մասին:
- Պողոսն ի՞նչ է ասում Սուրբ Հոգու կնիքի մասին, իսկ աղոթքն ի՞նչ է ասում Սուրբ Հոգու ընդունելության մասին:

*Մկրտության ծեսի մասերը, ըստ ներքոնշյալ կետերի հերթով գրի՛ր մկրտության ավազանի տողերի վրա: Առաջինը գրված է քեզ հուշելու համար:*

- նոր ճերմակ զգեստ
- դրոշմ
- ընկղմում
- Սուրբ Հաղորդություն



## Խոստովանության խորհուրդը

Երբևէ դու շպրտե՞լ ես քարը ջրի մեջ և նայել, թե ինչպես է այն ալիքներ ստեղծում՝ հետզհետե մեծացնելով ալիքների շրջանակը:



Մեր արած լավ կամ վատ գործերը նման են այդ փոքր ալիքներին: Երբ մի լավ բան ենք անում, այդ լավության ալիքները տարածվում են մյուսների կյանքում: Օրինակ՝ եթե օգնում ես քրոջդ կամ եղբորդ տունը մաքուր պահելու հարցում, նա ուրախանում է: Իսկ երբ տունը մաքուր է, ամբողջ ընտանիքն է ուրախանում: Կարո՞ղ ես բերել նման այլ օրինակներ:

Բայց մենք բոլորս էլ անում ենք վատ բաներ, քանի որ երբեմն մենք պարզապես եսասեր ենք: Մեր հոգը չեն մյուս մարդիկ: Մենք չենք հետևում Հիսուս Քրիստոսի օրինակին, Ով մշտապես հոգ էր տանում մյուս մարդկանց մասին: Մենք հրաժարվում ենք սեր ցուցաբերել Աստծուն և մյուս մարդկանց: Հենց սրան էլ մենք կոչում ենք մեղք: Մեր մեղքերը կարող են «ալիքավոր» տարածվել նաև ուրիշ մարդկանց կյանքում:

Բայց Եկեղեցին օգնում է մեզ մեկ այլ խորհրդով: Դա Խոստովանության խորհուրդն է: Ահա, թե դա ինչպես է կատարվում:



1. Ես որոշում եմ գնալ եկեղեցի, որպեսզի քահանան օգնի ինձ:
2. Ես հանգիստ ժամանակ գտա մտածելու և աղոթելու համար: Փորձում էի հիշել արածս այն ամենը, ինչ արել էի մյուսներին վիրավորելով, արարքներ, որ անազնիվ էին, անպարկեշտ կամ եսասիրական:
3. Ես գնում եմ եկեղեցի, իմ քահանայի մոտ և դեմքով կանգնում դեպի Սուրբ Սեղանին դրված Ավետարանն և խաչը: Տեր հայրն ինձ սիրով ընդունում է, հարազատ հոր պես: Դրա համար էլ մենք նրան կոչում ենք «Հայր»:
4. Ես խաչակնքվում եմ, համբուրում Ավետարանը և խաչը և ծնկի գալով քահանայի առջև կարդում եմ մեղքերի շարքը: Ապա ես նրան պատմում եմ այն պահերի մասին, երբ ես սիրով չեմ վարվել կամ եղել եմ եսասեր, անպարկեշտ կամ անազնիվ: Ես ասում եմ, որ զղջում եմ դրանց համար: Տեր հայրը հասկանում է ինձ: Նա զրուցում է ինձ հետ և օգնում, որ իմանամ ինչպես կարող եմ լինել ավելի սիրալիր՝ ինչպես Հիսուսը:
5. Քահանան խաչակնքում է ինձ և ասում է աղոթքը, որով Հիսուս Քրիստոսը ներում է ինձ: Տեր հայրն աղոթելով ասում է. «*Թող Մարդասեր Աստված ողորմի քեզ և ների քո գործած բոլոր մեղքերը: Եվ ես քահանայական իշխանությամբ և աստվածային հրամանով, թե ինչ որ արձակեք երկրի վրա, արձակված կլինի երկնքում, նույն այդ խոսքով արձակում եմ քեզ մտքով, խոսքով և գործով կատարածդ մեղքերից: Եվ դարձյալ տալիս եմ քեզ Եկեղեցու խորհուրդը, որ բարին գործելով հանդերձյալ կյանքում Աստծո արքայության փառքին արժանանաս. ամեն*»: Ի՜նչ հրաշալի է ամեն անգամ այս աղոթքը լսելը:

## Ջգտենք նմանվել Աստծուն


Սրբուհի մայրապետ Գալֆայան

Վանական դարձող տղամարդիկ ու կանայք ջանում են հատկապես նմանվել Աստծուն: Նրանք ամեն օր ապրում են աղոթքով և ծառայում են միմյանց: Աղոթքի և ծառայության այդպիսի կենտրոն էր Գալֆայան քույրերի միաբանությունը Կոստանդնուպոլսում՝ այժմյան Ստամբուլում:

Սրբուհին իր մոր հետ ամբողջ օրն զբաղվում էր ասեղնագործությամբ, որպեսզի կարողանար մեծացնել իր փոքրիկ քույրերին ու եղբայրներին: Նա իր մեջ աստվածատուր կոչում է զգում նվիրվելու Տիրոջը և բարի գործերով արժևորելու իր կյանքը: Այդ կոչումը նրա մեջ ավելի է զորանում, երբ հիվանդանում է ժանտախտով: Ծանր հիվանդության մեջ նա ուխտ է անում, որ եթե հրաշքով առողջանա մահաբեր ժանտախտից, իր կյանքը կընծայի Աստծուն: Սրբուհին կազդուրվում է: Աստծո կանչը հետզհետե բյուրեղանում է իր հոգում և իր ամենածաղկուն գեղեցկության և շնորհների մեջ, հազիվ 18 տարին լրացած, ամբողջովին հրաժարվում է աշխարհիկ կյանքից և ընդունում մայրապետի քողը: Անապահով հայ ընտանիքներից հավաքագրում է 17 աղջիկների և ձեռնամուխ լինում նրանց դաստիարակությանը: Նա նրանց ամեն ինչն էր՝ ուսուցիչը, քույրը, մայրը, բայց մանավանդ ոսկեթել ասեղնագործության միակ վարպետը:

Սրբուհու եռանդուն ու նվիրյալ ջանքերի շնորհիվ հիմնվում է Գալֆայան աղջիկների որբանոցը 1865թ: Տարիներ անց աղջիկներից շատերը հետևում են իրենց մեծանուն ուսուցչուհուն և դառնում միանձնուհիներ՝ շարունակելով նրա աստվածահաճո գործը: Այսպիսով հիմնվում է նաև Գալֆայան քույրերի միաբանությունը, որի ուխտապահ անդամուհիները մեր Եկեղեցու հովանու ներքո իրենց հոգևոր-կրոնական կյանքին զուգահեռ մինչև այսօր իրականացնում են բարեսիրական կարևոր ծառայություն՝ կրթելով ու դաստիարակելով հարյուրավոր հայ աշակերտների ու աշակերտուհիների:

Սրբուհի Մայրապետը և նրան հաջորդած մայրապետները որպես վանական միանձնուհիներ ունեին սարկավագի կամ կիսասարկավագի եկեղեցական աստիճան:

Գալֆայան քույրերի միաբանության ներկայիս մայրապետ քույր Հռիփսիմե Սասունյանն ստանձնել է Լիբանանում Հայ Եկեղեցու ղեկավարության ներքո գործող «Թռչնոց բույն» հայկական մանկական սաների հոգատարությունը, որի հարկից ներս ժամանակին ապաստան են գտել Հայոց Ցեղասպանությունից որբ մնացած շուրջ 4000 հայ երեխաներ:

Ահա որոշ կանոններ, որոնցով միանձնուհիներն ապրում էին.

- Ամեն միանձնուհի պետք է ստանձներ թշվառ երեխաների խնամատարությունը:
- Յուրաքանչյուր միանձնուհի պետք է պահեր աղոթքի կարգը և մասնակցեր ժամերգություններին:
- Յուրաքանչյուր միանձնուհի պատասխանատվություն էր կրում վանքի գոյատևման համար (խոհանոցում, պարտեզում, ճաշարանում և այլն):

Քո կարծիքով՝ ինչո՞ւ բոլոր վանքերն ունեն կարգապահական կանոններ ու հատուկ ապրելակերպ: Ի՞նչ ես կարծում, ինչպե՞ս սա կօգնի, որ վանականները նմանվեն Քրիստոսին:

## ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Այս դասը աշակերտներին գաղափար է տալիս, թե ինչպես էր Սբ. Պողոսը հորդորում մարդկանց ապրելու Քրիստոսի նման: Պողոսը թվարկում էր հստակ կանոններ այս տեսակ ապրելակերպի համար: Աշակերտները նաև փոքր-ինչ ծանոթանում են վանական կենցաղին, որ տղամարդիկ կամ կանայք համաձայնվում են ապրել շատ որոշակի կարգապահական կանոններով՝ ջանալով ապրել Քրիստոսի օրինակով:

Ընտանիքով զրուցե՛ք այն կանոնների շուրջ, որոնք կառավարում են ձեր պահվածքը: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ են դրանք կարևոր և ի՞նչ փարբերություններ են դրանք առաջացնում ձեր գործած կամ չգործած արարքներում:

Դասը նաև կենտրոնանում է Խորհուրդների վրա՝ մասնավորապես Մկրտության և Խոստովանության վրա (երբեմն վերջինս կոչվում է ապաշխարություն, որ անբաժան մասն է Հաղորդության խորհրդի): Այս երկուսը կարևոր եղանակներ են Աստծուն մոտենալու համար:

Եղե՛ք ջանասեր ընտանիքով եկեղեցի գնալու և Սուրբ Հաղորդության խորհրդին մասնակցելու մեջ:

ԴԱՍ 32

# ԽՈՍՔԸ ԼՍՈՂՆԵ՛Ր ԵՎ ԿԱՏԱՐՈՂՆԵ՛Ր ԼԻ՛ՆԵՆՔ

*«Ով Օրենքը լսելուց հետո չի մոռանում, այլ գործադրում է այն, այդպիսի մեկը երանելի կլինի օրենքը կատարելու համար»:*
*Հմմտ Հակոբոս 1.25*

## ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ



Կան բաներ, որ կարող են վնասել մեզ: Դրանք կարող են վնասել մեր մարմինները կամ մեր զգացումները, վիրավորել մեր ինքնասիրությունը կամ նույնիսկ մեր սրտերը: Իսկ այլ բաներ կարող են լինել օգտակար և քաջալերելի: Ապրղանի՛շ դիր ներքևի ցանկի առջևի գծերի վրա, որոնք օգտակար են քեզ, և X նշան՝ որոնք վնասակար են: Շատ օգտակարները նշի՛ր զույգ ապրղիկով, իսկ շատ վնասակարները՝ զույգ X-երով:

___ Գովասանք լսել ուսուցչից տնային աշխատանքի համար:

___ Թույլ տալ, որ ինձ վատ անուններ տան:

___ Թույլ տալ, որ մյուսները բամբասեն ինձնից:



___ Անակնկալ նվեր ստանալ:

___ Ետ մնալ մյուսներից:

___ Ծաղրվել:

___ Հիվանդ ծնող կամ բարեկամ ունենալ:

___ Նոր ընկեր ունենալ:

___ Երես առած լինել:



___ Լսել, որ ծնողդ կամ բարեկամդ գովում է քեզ մեկ այլ ծնողի մոտ:

___ Կարող լինել համոզել ընկերոջդ, որ իմ մասին ասված սուտ բաները ճշմարիտ չեն:

***Աստվածաշնչի** պատմության մեջ տե՛ս, թե Սբ Հակոբոսն ի՞նչ ասաց միմյանց հետ մեր վերաբերվելու ձևերի մասին:*

# ՍԲ ՀԱԿՈԲՈՍԸ ԳՐՈՒՄ Է ՍԻՐՈ ՕՐԵՆՔԻ ՄԱՍԻՆ

*Հմմտ Հակոբոս 1.22-2.8*



Մի՛ գոհացեք պատվիրանները լսելով, այլ կատարեցե՛ք դրանք, այլապես ինքներդ ձեզ խաբած կլինեք, որովհետև ով պարզապես լսում է պատվիրանը, բայց չի կատարում այն, նման է այն մարդուն, որ ուշադրությամբ ինքն իրեն դիտում է հայելու մեջ, բայց հազիվ հեռացած հայելուց՝ այլևս չի տեսնում իրեն և մոռանում է, թե ինչպիսի՛ն էր ինքը: Մինչդեռ ով իր աչքերը հառում է Աստծո ազատարար և կատարյալ Օրենքին ու դրա մեջ էլ հարատևում, նա լսելուց հետո չի մոռանում, այլ գործադրում է այն. այդպիսի մեկը երանելի կլինի օրենքը կատարելու համար:



Ով բարեպաշտ է համարում իրեն, և սակայն սանձ չի դնում իր լեզվին, նա խաբում է ինքն իրեն, որովհետև անօգուտ է նրա բարեպաշտությունը: Հայր Աստծո համար անկեղծ և իսկական բարեպաշտությունը կարոտության մեջ եղող որբերին և այրիներին այցելելն ու նրանց օգնելն է և աշխարհի մեջ ապրելով՝ ինքն իրեն անարատ պահելը:

Եղբայրնե՛ր իմ, մարդկանց միջև երբեք խտրություն մի՛ դրեք, դուք՝ որպես հավատացողներ Հիսուս Քրիստոսի՝ մեր Տիրոջ, որ միայն ի՛նքը գիտի մարդկանց փառավորել: Եթե պատահի, օրինակ, որ ոսկի մատանի դրած և փառավոր զգեստներ հագած մի մարդ գա ձեր հավաքույթին, և մյուս կողմից գա նաև աղքատ մի մարդ՝ մաշված զգեստներով, և դուք փառավոր հագուստներ ունեցողին մեծ հարգանքով ասեք՝ «Վերևո՛ւմ նստիր, խնդրեմ», մինչ աղքատին ասեք՝ «Դու այստեղ ոտքի՛ կանգնիր» և կամ՝ «Ե՛կ այստեղ գետնի՛ն նստիր՝ ոտքերիս մոտ», արդյոք դուք ձեր մեջ խտրություն դրած չե՞ք լինի և դատած չե՞ք լինի սխալ սկզբունքով:



Լսեցե՛ք, իմ սիրելի՛ եղբայրներ, Աստված ինքը չընտրե՞ց այս աշխարհի աղքատներին, որոնք հարուստ են հավատով և ժառանգելու են այն արքայությունը, որ Աստված խոստացավ իրեն սիրողներին: Մինչդեռ դուք արհամարհում եք աղքատներին: Իսկ հարուստները չե՞ն, որ հարստահարում են ձեզ. նրանք չե՞ն, որ քարշ են տալիս ձեզ դատարանից դատարան: Նրանք չե՞ն, որ վարկաբեկում են Քրիստոսի բարի անունը, որ դուք կրում եք ձեզ վրա:

Բայց դուք լավ կանեք, եթե իսկապես կատարեք Սուրբ Գրքի արքայական օրենքը, որ ասում է. «Սիրի՛ր քո ընկերոջը, ինչպես ինքդ քեզ»:

## Խորհենք պատմության շուրջ

1. Ո՞րն է առաջին պայմանը, որով բնորոշվում է որպես ամենաիրական և անարատ բարեպաշտությունը՝ ըստ Սբ Հակոբոսի:
2. Քո կարծիքով ինչո՞ւ է նա ընտրում դա որպես բարեպաշտ մարդու ամենակարևոր հատկանիշ:
3. Սբ Հակոբոսը գրում է մարդու լեզուն կամ խոսքերը վերահսկելու կամ «սանձահարելու» կարևորության մասին: Ինչո՞ւ է նա կարծում, որ մեր խոսքերն այդքան կարևոր են: Դու համաձա՞յն ես նրա հետ:
4. Քո կարծիքով ինչո՞ւ է Սբ Հակոբոսը «Սիրի՛ր քո ընկերոջը, ինչպես ինքդ քեզ» պատվիրանը կոչում արքայական օրենք: Ինչո՞ւ ենք մենք երբեմն հանդիպում դրան «Սիրո օրենք» բնորոշմամբ:

**Բառարան**

**ԲԱՐԻ ԱՆՈՒՆԸ, ՈՐ ԴՈՒՔ ԿՐՈՒՄ ԵՔ ՁԵԶ ՎՐԱ՝**

Հիսուս Քրիստոսի անունը, որով կոչվեցին մկրտության ժամանակ: Նրանք, ովքեր ատում էին քրիստոնեությունը և քրիստոնյաներին քարշ էին տալիս դատարան պատժելու, անարգում էին Նրա անունը, ինչպես ասում է Հակոբոսը:

## Ապրենք սիրո օրենքով

*Գծի՛ր մի նկար, որը պատկերի, թե ինչպե՞ս դու կգործադրեիր «Սիրո Օրենքը» քո կյանքում: Ինքնուրույն բառերով նկարագրի՛ր պատկերվածը, որն արտահայտի «Սիրո Օրենքը»:*

# Մենք փառաբանում ենք Տիրոջը սաղմոսներով

112-րդ սաղմոսը նախանշում է Սբ Հակոբոսի խոսքերը մեր այսօրվա դասում այն մասին, թե ինչպես է Աստված վերաբերվում աղքատներին: Կարդա՛ սաղմոսը և ներքևի գծի վրա գրի՛ր տողի համար(ներ)ը, որ հայտնում է նույն միտքը, ինչ Աստվածաշնչի դասի չորրորդ պարբերությանը:

_______________

Դասարանով փոխասացությամբ արտասանե՛ք սաղմոսը՝ հետևելով ուսուցչի ցուցումներին:

1 Օրհնեցե՛ք Տիրոջը, երիտասարդնե՛ր, օրհնեցե՛ք անունը Տիրոջ:
2 Թող Տիրոջ անունն օրհնյալ լինի այսուհետև մինչև հավիտյան:
3 Արևելքից մինև արևմուտք օրհնյալ լինի անունը Տիրոջ:
4 Բարձր է Տերը բոլոր ազգերից վեր, և երկնքում է փառքը նրա:
5 Ո՞վ է նման մեր Տեր Աստծուն, որ բնակվում է բարձունքներում:
6 Նա տեսնում է հեզերին երկնքում և երկրի վրա:
7 Բարձրացնում է աղքատներին գետնից, և տառապյալներին վեր քաշում աղբանոցից:
8 Նրանց որպես իշխան նստեցնում է իր երկրի իշխանների կողքին:
9 Ամուլ կնոջը բնակեցնում է ցնծալից տան մեջ՝ իբր մայր, որ հրճվում է զավակներով:

Սղմ.112





## Մենք աղոթքով հետևում ենք Սբ Հակոբոսի խոսքերին

Եկեղեցու հայրերից մեկի գրած ամենօրյա աղոթքներից մեկում կարդում ենք հետևյալ խոսքերը. «**Այսօր իմ հանդիպած բոլոր մարդկանց թող իմ արարքները չվիրավորեն և չնեղացնեն»:**

Նշի՛ր երեք եղանակներ, որոնցով կփորձես ապրել հիշյալ խոսքերի համաձայն տանը, դպրոցում կամ համայնքում:

1. ____________________

2 ____________________

3. ____________________

## Գլիկերիան սիրով էր վարվում բոլորի հետ



Եթե դու լինեիր աղջիկը հռոմեացի մի պաշտոնյայի, ինչպես Գլիկերիան էր, թերևս դու կհասկանայիր, որ ամենակարևոր մարդիկ եղել են նաև իշխանավորներն ու հռչակավորները: Իսկ Գլիկերիան, ով ապրում էր Անտոնիոս կայսեր ժամանակ, շատ տարբեր տեսակի անձ էր:

Երբ հայրը մահացավ, Գլիկերիայի կյանքը փոխվեց: Նա կորցրեց իր հարստության մեծ մասը, և այլևս չուներ նախկին բարձր դիրքը՝ իբրև երբեմնի հզոր կառավարչի դուստր: Նա հեռանում է Հռոմից և ապրում է Թրակիայում, որտեղ էլ զորացնում է իր քրիստոնեական հավատը:

Թրակիայից շատերը, ովքեր իմանում էին, որ նրա հայրը եղել է բարձրաստիճան պաշտոնյա, ասում էին.

-Նա հավանաբար կարծում է, որ ինքն առանձնահատուկ է և ակնկալում է, որ բոլորն իրեն այդպես վերաբերվեն: Երևի նա չի էլ խոսի մեզանից շատերի հետ, քանի որ մենք նրանց պես քաղքենի չենք, ովքեր ապրում են Հռոմում:

Սակայն Գլիկերիային չէր հետաքրքրում որևէ մեկի ունեցվածքը կամ սոցիալական դիրքը: Նա բոլորին վերաբերվում էր բարեկրթությամբ և քրիստոնեական սիրով: Նա իրեն հավասար էր դիտում մյուսների հետ՝ լիներ հարուստ, թե աղքատ, հռչակավոր, թե համեստ:

Վաղ դարաշրջանի շատ քրիստոնյաների նման Գլիկերիան իր հավատը փորձության ենթարկեց: Մի իրիկուն նա միացել էր մի խումբ մարդկանց, ովքեր պետք է զոհեր մատուցեին Զևս չաստծուն: Եվ քանի որ գիշերը վրա էր հասնում, նրանք բոլորն էլ ճրագներ էին վերցրել իրենց հետ՝ բացի Գլիկերիայից: Երբ խմբի ղեկավարը հարցնում է, թե ինչու նա լամպ չունի ձեռքին, նա խաչը դնում է ճակատին և ասում. «Սա է իմ ճրագը և լույսը»: Խաչը, կարծես թե, լույս էր փայլիս նրա ճակատին:



Ապա նա սկսեց աղոթել և ի զարմանս ամենքի Զևսի արձանը կայծակնահար եղավ և գետին փապալվելով փշրվեց մանր կտորների:

Գլիկերիան ենթարկվեց շատ չարչարանքների, բայց չնահանջեց իր հավատից: Նա ողնորեց ու քաջալերեց մյուսներին, ինչպես միշտ թե՛ հարուստներին և թե՛ աղքատներին, համբավ ունեցողներին և թե՛ չունեցողներին՝ պահպանելու հավատը ինչ էլ որ պատահի:

Նահատակ Գլիկերիան ի վերջո մահացավ 141թ.: Մինչև այսօր էլ քրիստոնյաները հիշում են, որ նա խաչը դրեց ճակատին և այն լուսափայլեց: Նրանք նաև հիշում են նրա համարձակ ու ողնորիչ խոսքերը. «Սա է իմ ճրագը, սա է իմ լույսը»:

## Շարական

Երկնավոր ձայներ լցվեցին երկիր, քանզի իբրև անուշ հոտ բուրեցիք Քրիստոսով, բանավոր ողջակեզներ և փրկության զոհեր և անարատ գառներ ընծայված Աստծուն:

Կանոն Հռիփսիմեանց
ՕՐՀ. ԴՁ դրծ.




## ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Դասի հիմնական թեման վերաբերում էր մեր դեռահաս երեխաների ընտրություն կատարելու անհրաժեշտությանը, թե ինչպես պիտի վերաբերվեն մյուս մարդկանց, ինչպես նաև լքված լինելու, բամբասանքի առարկա լինելու և այլնի ցավալի, բայց անխուսափելի փորձառությունների վրա:

Սբ Հակոբոս Առաքյալի գրած նամակը, որը քննարկվեց այսօրվա դասում, քաջալերում է մեզ յուրաքանչյուրի հետ վարվելու արդարացիորեն՝ առանց հաշվի առնելու որևէ մեկի դիրքը կամ հարստությունը, և ուժեղ լինելու մեր հավատի փարածման մեջ: Դասում նաև ներկայացվում էր նախապակ Գղիկերիան՝ երիտասարդ մի աղջիկ, ով ծնվել էր հարուստի ու պաշտոնավորի ընտանիքում, բայց քաջաբար պաշտպանում էր իր հավատը և քաջալերում մյուսներին նույնպես վարվել: Երբ նրան առաջարկեցին զոհեր մատուցել կուռքերին գիշերվա մթին՝ մյուսների նման ճրագներ տանելով, նա մերժեց և խաչը կապելով ճակատին ասաց. «Սա է իմ ճրագը, սա է իմ լույսը»:

Ընտանիքով զրուցե՛ք մարդկանց հետ վարվելու եղանակների մասին: Ապա վերցրե՛ք մի մեծ մոմ: Մի կտոր թղթի վրա գրե՛ք. «**Քրիստոսն է մեր ճրագը և լույսը**»: Միասին նկարազարդե՛ք այն և փակցրե՛ք մոմի ներքևի մասում: Մոմը դրե՛ք ճաշասեղանի վրա, որտեղ հավաքվում եք, և վառե՛ք, երբ միասին աղոթեք:

ԴԱՍ 33

# ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ՄԱՍԻՆ

*«Համբերո՛ղ եղեք մինչև Տիրոջ գալուստը»:*
*Հակոբոս 5.7*

## Հայտնագործենք

Ի՞նչ է նշանակում լինել համբերող: Մարդիկ գուցե տարբեր կերպ սահմանեն այն, և ոմանք էլ գուցե այն ավելի գնահատեն, քան մյուսները: Ահա մի հարցարան, որը կօգնի քեզ մտածել քո սեփական համբերության մակարդակի մասին: Ամեն զույգից ընտրի՛ր մեկ պատասխան:

Ինձ լավագույնս բնորոշող բառը կամ կապակցությունը հետևյալն է.




___ համբերատար սպասում եմ:
___ հենց հիմա եմ ուզում:

___ արագաշարժ եմ:
___ դանդաղաշարժ եմ:

___ վազում եմ:
___ քայլում եմ:




___ պատրաստ եմ ամեն ինչի:
___ ժամանակ է պետք պատրաստվելու համար:

___ անհապաղ պիտի հասնեմ ուզածս վայրը:
___ կգնամ ավելի երկար ճամփով, որը գեղեցիկ տեսարան ունի:

___ ժամանակ չունեմ:
___ ծով ժամանակ ունեմ:




___ սիրում եմ փոքրիկ, ավելի տնտեսող մեքենա:
___ սիրում եմ մեծ, հզոր մեքենա:

___ ուզում եմ ստեղծել իմ ապագան:
___ ուզում եմ տեսնել, թե կյանքն ինչ կբերի:

*Աստվածաշնչի պատմության մեջ տե՛ս, թե Սբ Հակոբոսն ի՞նչ է ասում համբերության և քրիստոնեական սիրո մասին:*

# ՀԱԿՈԲՈՍԸ ԿՈՉՈՒՄ Է ՄԵԶ ԱՊՐԵԼ ՈՐՊԵՍ ԱՍՏԾՈ ԺՈՂՈՎՈՒՐԴ

*Հմմտ Հակոբոս 4.11-5.12*



Եղբայրնե՛ր, մի՛ բամբասեք միմյանց: Ով բամբասում է իր եղբորը կամ դատում է նրան, նա բամբասում է Օրենքը կամ դատում է Օրենքը: Իսկ եթե Օրենքն ես դատում, նշանակում է, թե Օրենքը գործադրողը չես, այլ նրա դատավորը: Միակ Օրենսդիրն ու Դատավորը, որ իշխանություն ունի փրկելու կամ կորստյան մատնելու, Աստված է: Դու ո՞վ ես, որ դատում ես քո ընկերոջը:

Լսեցե՛ք ինձ նաև դուք, որ ասում եք. «Այսօր կամ վաղը կգնանք այսինչ քաղաքը, մեկ տարի կմնանք այնտեղ, առևտուր կանենք և կշահենք»: Մի՞թե գիտեք, թե վաղն ի՞նչ եք լինելու: Ձեր կյանքը նման է մշուշի, որ մի պահ երևում է և ապա անհետանում: Փոխանակ ասելու՝ «Եթե Տերը կամենա, կապրենք և կանենք այսինչ կամ այնինչ բանը», հոխորտում եք ամբարտավան կերպով: Բայց այդպես հոխորտալը սխալ է: Հետևաբար, ով որ գիտի ճիշտը և չի անում այն, մեղք է գործում:

Դո՛ւք էլ լսեցեք ինձ, հարուստնե՛ր: Լացե՛ք և դառնորեն ողբացե՛ք այն դժբախտությունների համար, որ գալու են ձեր գլխին, որովհետև ձեր հարստությունը փտություն է, ձեր հագուստները՝ ցեցերի կեր: Ձեր արծաթն ու ոսկին ժանգոտ են, և նրանց ժանգը ձեր դեմ վկայություն կլինի և կրակի պես կլափի ձեր մարմինները, քանի որ իր վախճանին մոտեցող այս աշխարհում դուք միայն ա՛յս գանձերը դիզեցիք: Ահավասի՛կ, ձեր արտերում աշխատող բանվորների վարձը, որ ձեզ մոտ պահեցիք՝զրկելով նրանց, բարձրաձայն աղաղակում է, և հնձվորների բողոքը հասավ Ամենակալ Տիրոջ ականջին: Ձեր կյանքը հաճույքներով և զվարճությամբ անցկացրիք երկրի վրա ու պարարտացաք՝ մորթվելու օրվան պատրաստվող անասունների նման: Այո՛, իրավազրկեցիք և սպանեցիք արդարին, որ չընդդիմացավ ձեզ:

Հետևաբար, եղբայրնե՛ր, համբերո՛ղ եղեք մինչև Տիրոջ գալուստը: Տեսե՛ք, թե մշակն ինչպես է համբերությամբ սպասում, մինչև որ աշնան ու գարնան անձրևներն իջնեն, և հողը տա իր թանկագին բերքը: Դո՛ւք էլ համբերեցեք և ամո՛ւր պահեցեք ձեր սրտերը, որովհետև մոտ է Տիրոջ գալուստը:

Մի՛ տրտնջացեք միմյանց դեմ, եղբայրնե՛ր, որպեսզի Աստծո դատաստանին չենթարկվեք, որովհետև Դատավորն ահա գալիս է: Նեղությունների մեջ համբերելու օրինա՛կ վերցրեք մարգարեներից, որոնք խոսեցին Տիրոջ անունով: Չէ՞ որ մենք երանի ենք տալիս նրանց, որոնք համբերեցին, ինչպես մարգարեները: Անշուշտ, լսել Հոբի համբերության մասին և գիտեք, թե Տերը վերջում ինչպե՛ս վարձատրեց նրան, որովհետև Տերը գթառատ է և ողորմած:

Բայց մանավանդ, եղբայրնե՛ր իմ, մի՛ երդվեք բնավ ո՛չ երկնքի, ո՛չ երկրի և ո՛չ էլ ուրիշ որևէ բանի վրա: Պարզապես ձեր այո-ն թող լինի՝ այո, և ոչ-ը՝ ոչ, որպեսզի չլինի թե դատապարտության ենթարկվեք:

## Խորհենք պատմության շուրջ

1. Հակոբոսը խրատում է քրիստոնյաներին՝ ասելով. «Եղբայրնե՛ր, մի՛ բամբասեք միմյանց»: Այս միտքը Տասը Պատվիրաններից ո՞ր մեկի հետ է առնչվում: Ընտրի՛ր ներքևի երեքից մեկը և նշո՛ւմ արա առջևի գծիկի վրա:

    ___ 6. «Մի՛ սպանիր»:

    ___ 8. «Մի՛ գողացիր»:

    ___ 9. «Մերձավորիդ դեմ սուտ վկայություն մի՛ տուր»:




2. Եթե ընկերներով արդեն որոշել եք արշավի գնալ, քեզ համար որքա՞ն դժվար կլիներ ասել. «Եթե Տերը կամենա, կգնանք արշավի»: Ի՞նչը կկանխեր քեզ «Եթե Տերը կամենա...» ասելուց:

______________________________

______________________________

3. Քո կարծիքով ինչո՞ւ է Հակոբոսն այդքան շատ գրում հարուստների դեմ: Կարծում ես նրա խոսքն ուղղված է բոլո՞ր հարուստ մարդկանց:

______________________________

______________________________

4. Քո կարծիքով՝ Հակոբոսն ինչպե՞ս կսահմաներ համբերությունը:

______________________________

______________________________

## Համբերող մարգարեն



Մարգարեներից շատերը փառապանքներ կրեցին, բայցև համբերատար կատարեցին Տիրոջից իրենց տրված հրահանգը, այսինքն՝ ժողովրդին փոխանցելու Աստծո կամքը: Երեմիան հաճախ ասում էր ժողովրդի համար անախորժ բաներ, և մի անգամ դրա պատճառով նրան գցեցին ջրհորը: «Ջրհորում ջուր չկար, այլ միայն ցեխ, և Երեմիան ընկղմվեց ցեխի մեջ»: (Երեմիա 38.6բ)



# Մայրը, որ համբերատար սպասեց



*Ի՞նչ կանեիր, եթե լինեիր այն մոր տեղը, ով հոգ էր տարել իր որդուն և լավ դաստիարակել նրան, որը, սակայն, տեսնում է իր որդուն մեկը մյուսի ետևից վատ արարքներ անելիս: Ի՞նչ կանեիր, եթե նա երբեք չլսեր քեզ, երբեք ուշադրություն չդարձներ քո աղերսալից խորհուրդներին ու խրատներին:*

Այսպիսի մի խնդրի առջև էր կանգնած Մոնիկա անունով մի կին: Նա ծնվել էր 322թ., Հյուսիսային Աֆրիկայի Տագաստե քաղաքում, ապա ամուսնացել Պատրիկիոս անունով մի մարդու հետ: Մոնիկան նվիրյալ քրիստոնյա էր, մեղմախոս և բարեհամբույր անձնավորություն: Նրա ամուսինը հեթանոս էր, սակայն տարիների իր աղոթքները և բարեսիրության օրինակը բերեցին նրան դեպի քրիստոնեություն, և նա մկրտվեց:

Բայց Մոնիկան տակավին անհանգստացած էր իրենց երեք զավակներից մեկի համար, ով չէր լսում իրեն և անհոգ կյանք էր վարում: Երիտասարդը մի կնոջ հետ ապրում էր Կարթագենում, որը մի երեխա ուներ, չնայած նրանք չէին ամուսնացել: Կարթագենում գտնվելու ընթացքում նա հանդիպում է մի խումբ մարդկանց հետ, ովքեր իրենք իրենց քրիստոնյա էին համարում, բայց նրանց հավատքը հեռու էր Եկեղեցու կողմից ընդունվածից: Մոնիկայի տղան խորապես ընդունում է այդ հավատալիքները, ինչն անվերջ անհանգստություն է պատճառում մորը:

Մոնիկան որոշեց գնալ Կարթագեն, տեսնել որդուն և զրուցել նրա սխալ հավատքի շուրջ: Այնուհետև Նա գնաց Հռոմ և Միլան, երբ որդին դասախոսում էր այնտեղ: Կրկին անգամ մոր՝ որդուն ճշմարիտ քրիստոնեություն վերադարձնելու ջանքերն ապարդյուն անցան: Նա ապավինում էր իր մտավոր կարողություններին, որոնք մեծ էին, և վստահ էր, որ ինքը ճիշտ է:

Ի վերջո Մոնիկան խնդրեց, որ քաղաքի եպիսկոպոսը խոսի իր որդու հետ: Այս եպիսկոպոսը ժամանակին նույնպես հարել էր այդ սխալ ուսուցումներին, որի մեջ հիմա նրա որդին էր ընկել: Եպիսկոպոսն ասաց Մոնիկային, որ չի կարող խոսել նրա որդու հետ այն գաղափարներից, որոնց ինքը ժամանակին կապված է եղել: Բայց նա հույս տվեց մորը՝ ասելով. «Այսքան շատ աղոթքներով ու արտասուքով մոր զավակը չի կորչի առհավետ»: Նա քաջալերեց մորը շարունակել համբերությամբ աղոթելու որդու համար:

Տարիներ անց Նոր Կտակարանն ընթերցելիս Մոնիկայի տղան հասկացավ, որ սխալ ճանապարհով է գնում: Նա վերադարձավ եկեղեցի՝ ճշմարիտ հավատքի: Եվ նա դարձավ աշխարհահռչակ ուսուցիչ և հավատքի մասին գրող մեծ հեղինակներից մեկը: Նրա անունը Օգոստինոս էր:

Մոնիկան որդու հետ միասին ճամփորդեց մի քանի տարի, մինչև որ մայրը մահացավ: Օգոստինոսը գրեց նրա մասին և մեծապես գնահատեց մորը, որ երբեք հույսը չկտրեց իրենից: Նա գիտեր, որ իր համար անդադար աղոթող մոր սերը, համբերությունը և պատրաստակամությունը, նույնիսկ երբ թվում էր, թե կորած է, Աստծո նախախնամության անբաժան մասերն էին, որպեսզի նա դառնա ճիշտ հավատքին և դրա մասին սովորեցնի շատերին:

1. Ենթադրենք՝ դու Օգոստինոսն ես և փարիներ հետո գիտակցել ես, որ պատրաստ ես վերադառնալու ճշմարիտ հավատի: Ի՞նչ կասեիր քո մորը, երբ նրան նորից տեսնեիր: Ինչպե՞ս շնորհակալ կլինեիր նրան ցուցաբերած համբերության համար:

2. Որո՞նք են այն ձևերը, որոնցով դու առիթ ես փալիս ծնողներիդ համբերությամբ աղոթելու և սպասելու կյանքում քո բարեփոխումներին:

## Սերմ ցանել և հետևել նրա աճին

Բնությունը փալիս է մեզ մեծ օրինակներ համբերության կարևորության մասին: Երբ հողագործները ցանում են սերմերը, պիտի սպասեն մինչև որ այն աճի և հասունանա: Երբ դու սերմ ցանես և պատրաստվես հետևել նրա աճին, ընթերցի՛ր արտերի օրհնության կարգի աղոթքից քաղված հետևյալ հատվածը.

Օրհնյալ ես, Տեր Աստված Ամենակալ, որ երկրի ծագերից վերածում ես ամպեր և կայծակներից անձրև ստեղծում, վերցնում ես ծովի ջրերը և ցողում երկրի երեսը:

Օրհնի՛ր, Տե՛ր, մեր երկրի արտերի և այգիների, ծառերի և խոտերի բերքը:

Օրհնի՛ր, Տե՛ր, մեր սերմերը և սերմանողներին, քանզի առատ ես Քո պարգևների մեջ, սերմ ես փալիս սերմանողներին և հաց մարդկանց ապրելու համար:

Աստվա՛ծ մեր, որ Քո խնամքով լցնում ես դաշտերը և լեռները պարարտությամբ, նայի՛ր մեր սերմերին և աճեցրո՛ւ Քո ծառաների աշխատանքի արդյունքը՝ մեր քաղցը հագեցնելու համար, քանզի բոլորի աչքերը հույսով Քեզ են ուղղված և Դու ես փալիս նրանց կերակուր ժամանակին:

Եվ մեզ արժանի՛ արա խաղաղությամբ վայելել Քո առատ ողորմության պարգևները և գոհանալով փառավորել Քեզ Որդուդ և Սուրբ Հոգուդ հետ այժմ և հավիտյանս, ամեն:

*Ո՞ր միտքն է հուշում մեզ, թե՝ ովքեր ուզում են բերք ստանալ, պետք է համբերատար սպասեն:*

*Ի՞նչ է նշանակում «...վայելել Քո առատ ողորմության պարգևները» արտահայտությունը:*

## Աղոթենք միասին

Սա Սբ Ներսես Շնորհալու *Հավատով խոստովանիմ* աղոթագրքի 24 տներից 9-րդն է: Այն օգնում է հավատացյալներին՝ հիշելու Սբ Հակոբոսի խրատը առաքինի կյանք ապրելու վերաբերյալ:

***Ամենախնա՛մ Տեր, քո սուրբ երկյուղը իմ աչքերին պահապա՛ն դիր, որ էլ պագշոտ չնայեն, և իմ ականջներին՝ որ չախորժեն լսել չարության խոսքեր, և իմ բերանին՝ որ սուտ չխոսի, և իմ սրտին՝ որ չար չխորհի, և ի ձեռքերին՝ որ չգործեն անիրավություն, և իմ ոտքերին՝ որ չգնան անօրինության ճանապարհով, այլ ուղղի՛ր շարժումը սրանց հետևելու ամեն ինչում քո պատվիրաններին. և ողորմի՛ր քո արարածներին ու նաև ինձ՝ մեղավորիս:***

## ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Դասը կենտրոնանում է Հակոբոս առաքյալի նամակի վրա, որում նկարագրվում է հավատացյալ քրիստոնյայի առաքինությունները: Նշված հատկանիշներից նա շեշտում է համբերությունը: Սա կարևոր էր, քանի որ այդ ժամանակներում քրիստոնյաները ենթարկվում էին հալածանքների (ինքը ևս հալածանքի զոհ եղավ նահատակվելով), և նա ուզում էր, որ քրիստոնյաներն սպասեին Տիրոջ վերադարձին՝ առանց հուսահատվելու, և հավատն ամուր պահելով:

Մոնիկան՝ Օգոստինոս երանելու մայրը, համբերության մի օրինակ է. նա տեսավ իր որդուն տարիների անառակ ապրելակերպից հետո, երբ վերջինս վերահայտնաբերեց հավատը: Աշակերտները նաև պիտի տնկեն սերմեր, որպեսզի համբերությամբ սպասեն դրանց աճմանը:

Ընտանիքով զրուցե՛ք այն մարդկանց մասին, ովքեր քո հանդեպ համբերատար են եղել (օրինակ՝ ծնողները, ուսուցիչները, հարազատներ, բարեկամներ և այլն) և թե ինչպե՞ս է նրանց համբերությունն օգնել քեզ: Աստծուն խնդրե՛ք, որ առաջնորդի ձեր ընտանիքը և համբերություն պարգևի մյուսների հետ հարաբերություններում, քանի որ նրանք սովորում են, սխալվում և աճում գիտելիքների ու շնորհների մեջ:

ԴԱՍ 34

# ԱՊՐԵՆՔ ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴՎԵՆՔ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՎ

*Օրենքը լրիվ գործադրած կլինենք այս մեկ պատվիրանով.*
*«Սիրի՛ր քո ընկերոջը քո անձի պես»:*
*Գաղատացիներին 5.14*

## Հայտնագործենք



Հրաչն ասում է. «Ես միշտ կռիվների մեջ եմ ընկնում: Երբեմն, ինչպես այսօր, ես սկսում եմ անհանգստանալ, որ մարմնիս հետ կապված ամեն բան կարգին չէ: Իմ ստամոքսն այսօր ահավոր ցավում է՝ բռունցքի հարված եմ ստացել փորիս, իսկ բերանիցս արյուն էր գալիս: Բայց կռվելը մարդուն մի տեսակ ուժեղ է դարձնում և ես ինձ իսկական փղամարդու պես եմ զգում: Ինձ թվում է՝ ես պիտի շարունակեմ այդպես ապրել: Եթե էլ այդպես չանեմ, հաստատ փխմար ու թույլ մարդու տպավորություն կթողնեմ»:



Մանեն ասում է «Ես վերջերս վատ սովորություն եմ ձեռք բերել՝ ուշ եմ քնում գիշերները: Երբեմն ես կարդում եմ անկողնում, երբեմն գրի եմ առնում մտքիս մեջ եղած հուշերը: Մեկ-մեկ էլ դուրս եմ վազում ընկերուհիներիս հանդիպելու համար. դա էլ այն ժամին, երբ ծնողներս աշխատանքի են լինում: Վատն այն է, որ դպրոցիս դասերը միշտ չեմ հասցնում և երբեմն էլ աչքերս փակվում են դասի ժամին այնքան հոգնած եմ լինում, որ հազիվ եմ աչքերս բաց պահում: Բայց ընկերուհիներս կարծում են, որ դա իրոք զվարճալի է»:

Անդրանիկն ասում է. «Ընկերս՝ Նշանը, հավանաբար այլևս ինձ ընկեր չի լինի: Նա մի հիմար բան ասաց, և ես ասացի նրան, որ ասածը հիմարություն է: Ապա նա մի ուրիշ բան ասաց, և ես իսկապես ջղայնացա: Հաճախ, երբ այդպես խելքդ թռցնում ես, կրակի նման բռնկվում ես, և մինչ դա հասկանաս, ասում ես խոսքեր, որ երանի երբեք ասած չլինեիր: Ահա հենց այդպես էլ պատահեց, և դրա համար Նշանն էլ չի խոսում հետս: Նա գուցե ժամանակի հետ մոռանա պատահածը, իսկ ես կփորձեմ ներողություն խնդրել նրանից: Բայց երբեմն բարկացած պահին ասածներդ բավական երկար է մնում դիմացինիդ մտքում»:



Նարեն ասում է. «Իրոք, երբեմն դժվարանում եմ ինքս ինձ գտնել: Մայրս միշտ ջանում է ինձ տալ լավագույն բաները, սակայն ընկերուհիներիցս շատերը հագնվում են ինձնից ավելի լավ և ունեն ավելի սիրուն իրեր: Մինչև այժմ հագնում մեծ քրոջս գործածած շորերը: Ես իսկապես նախանձում եմ և երբեմն ուզում եմ, որ մի վատ բան պատահի, և ընկերներս կորցնեն իրենց սիրուն իրերը: Այդպիսի բաներ ցանկանալն ահավոր է, քանի որ նրանք ամեն դեպքում իմ ընկերներն են»:

- *Կարդա՛ **Ասպվածաշնչի պատմությունը** և պե՛ս, թե ինչպե՛ս էր Սբ Պողոսն ասում, որ երբ անում ենք մի բան, որն իսկապես չենք ուզում անել, Սուրբ Հոգին կարող է օգնել մեզ այդ հարցում:*

# ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՄԵԶ ՀԵՏ Է

*Հմմտ Գաղատացիներին 5.1, 13-26*



Քրիստոսն ազատեց մեզ: Սա նշանակում է, որ մենք իսկապես ազատ ենք: Ուստի ամո՛ւր պահենք այդ ազատությունը, որ վերստին ստրկության լծի տակ չմտնենք:

Եղբայրնե՛ր, Աստված կանչեց ձեզ, որ ազատ լինեք. նայեցե՛ք միայն, որ այդ ազատությունը մարդկային ցանկություններ կատարելու պատրվակ չդառնա, այլ սիրով ծառայեցե՛ք միմյանց: Որովհետև Օրենքը լրիվ գործադրած կլինեք այս մեկ պատվիրանով. «Սիրի՛ր քո ընկերոջը քո անձի պես»: Իսկ եթե այդպես միմյանց վիրավորեք ու բզկտեք, զգո՛ւյշ, դուք ձեզ կկործանեք:



Առաջնորդվեցե՛ք Սուրբ Հոգով, փոխանակ ձեր մարդկային ցանկությունները կատարելու, որովհետև մարդկային բնությունը Սուրբ Հոգու ցանկացածի հակառակն է ցանկանում, իսկ Սուրբ Հոգին՝ մարդկային բնության ցանկացածի հակառակը: Սրանք միմյանց հակառակ են, և այդ է պատճառը, որ դուք չեք կարող ձեր ուզածը կատարել: Արդ, եթե դուք առաջնորդվեք Սուրբ Հոգով, նշանակում է՝ այլևս ենթակա չեք Օրենքին:

Մարմնի ցանկությունները մարդկանց մղում են անբարոյական քայլերի՝ պիղծ մտքերի և ամոթալի արարքների: Մարդիկ սկսում են պաշտել կուռքերի, զբաղվել կախարդությամբ, ատել միմյանց և անհաշտ ապրել, նախանձում են, բարկանում և դառնում եսասեր: Նրանք ոչ միայն վիճում են, հակառակություններ անում, այլ նաև չար նախանձում իրար: Նրանք հարբեցողության են տրվում, անառակություններով զբաղվում և անում սրանց նման ուրիշ բաներ: Եվ ես նախազգուշացնում եմ ձեզ, ինչպես նախապես էլ արել եմ, որ այսպիսի բաներ անողները չեն ժառանգելու Աստծո արքայությունը: Իսկ Սուրբ Հոգին դարձնում է մեզ սիրալիր, երջանիկ, խաղաղ, համբերատար, ազնիվ, բարի, հեզ և ժուժկալ: Այսպիսի բաների դեմ որևէ օրենք չկա:

Արդ, քանի որ այս նոր կյանքը Սուրբ Հոգով ենք ապրում, Սուրբ Հոգով էլ առաջնորդվենք: Չլինենք սնապարծ, չգրգռենք իրար, չնախանձենք միմյանց:





## Խորհենք պատմության շուրջ

1. Քրիստոնյաները կոչված են սիրով ծառայելու միմյանց: Գրի՛ր այն պահերի մասին, երբ դու սիրահոժար և կամ դժկամությամբ ես ծառայել մեկին: Համեմատի՛ր, թե ինչպե՞ս էիր ինքդ քեզ զգում յուրաքանչյուր դեպքում:
2. Մյուսներին քո սեփական անձի չափ սիրելու պատվիրանը Աստվածաշնչում ձևակերպվում է հետևյալ կերպ. «Սիրի՛ր քո ընկերոջը քո անձի պես»: Աշխարհն ինչպե՞ս կտարբերվեր, եթե բոլորս ապրեինք այս խոսքերի համաձայն:
3. Պողոսը նշում է մի շարք եսասիրական ցանկություններ կամ արարքներ: Ոչ բոլորն են, որ կարող են մասնակից լինել թվարկված բոլոր մեղքերին: Ինչևէ, կան որոշներ, որ մարդկային բոլոր էակներն անում են իրենց կյանքի ընթացքում: Քո կարծիքով՝ որո՞նք են դրանք:

**Բառարան**

**ՎԱՆԱԿԱՆ՝** այսպես են կոչվում վանքերում ապրող տղամարդիկ և կանայք:

## Սուրբ Հոգու պտուղները

Պողոսն օգտագործում է «Հոգու պտուղ կամ արդյունք» արտահայտությունը՝ որպես պատկեր նկարագրելով քրիստոնյաների ցանկալի վարքագիծը: Քանի որ պտուղն արդյունքն է աճման, որ հասունանում է ծառի վրա, նույն կերպ մենք ենք արդյունավորում բարի «պտուղ», ինչպես Պողոսի նշած պտուղները, երբ մենք թույլ ենք տալիս, որ

____ ____ ____ ____    ____ ____ գ ի ____ գործի մեր մեջ:

Վերևի նախադասությունը լրացնելու համար դո՛ւրս հանիր ճիշտ տառը յուրաքանչյուր «պտղից» և գրի՛ր կողքի գծիկի վրա: Ապա ճի՛շտ դասավորիր դուրս բերված տառերը վերևի դատարկ գծերի վրա, որպեսզի պարզես, թե ո՞վ է տալիս այդ պտուղները մեզ:

ՍԵՐ (1-ին տառը) ____

ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ (5-րդ տառը) ____

ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆ (2-րդ տառը) ____

ԲԱՐՈՒԹՅՈՒՆ (1-ին տառը) ____

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ

ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԲԵՐՈՒԹՅՈՒՆ (1-ին տառը) ____

ՀԵԶՈՒԹՅՈՒՆ (8-րդ տառը) ____

ԺՈՒԺԿԱԼՈՒԹՅՈՒՆ (2-րդ տառի առաջին մասնիկը) ____

# Աշխատեցեք ապրել հոգով



Տաթևի վանքը Սյունիքում

Տղամարդիկ և կանայք, ովքեր բնակվում են վանքերում, աշխատում են ապրել ասպվածահաճո կյանքով: Նրանք փնական աղոթում են աշխարհի բոլոր մարդկանց համար: Նրանք նաև անում են անհրաժեշտ ֆիզիկական աշխատանք՝ իրենց վանքերի բարեկեցությունն ապահովելու համար:

Ամեն ինչից վեր, վանականները ձգտում են հաղթահարել իրենց սրտի բոլոր տեսակի մեղքերը՝ նախանձը, անամոթ մտքերը, վիճաբանությունը և այն ամենը, ինչ մեզ հեռու է պահում Հիսուս Քրիստոսին նմանվելուց: Սա դժվարին պայքար է, և այն պահանջում է շատ տարիներ մեղավոր վիճակը նույնիսկ փոքր-ինչ հաղթահարելու համար: Սակայն վանականները շարունակում են պայքարը և աղոթում բոլորիս համար՝ մեր կյանքի յուրաքանչյուր օր Աստծուն ավելի մոտենալու համար:

*Եթե հնարավորություն ունենայիր մի վանականի խնդրելու, որ աղոթի քեզ համար, ո՞րը կլիներ քո խնդրանքը: Ո՞ր վատ սովորությունը կուզենայիր հաղթահարել: Կարող ես գրել կամ նկարել դրա մասին ներքևում:*

*Սուրբ Հոգու հինը պտուղներից ո՞ր մեկի կարիքը դու ամենաշատն ունես այժմ: Ինչո՞ւ:*

## ՆՐԱՆՔ ՉԿԱՐՈՂԱՑԱՆ ԿՌՎԵԼ



*Ահա մի «երկխոսություն»՝ հիմնված երկու վանականների մասին պատմության վրա, ովքեր տարիներ առաջ ապրում էին եղբայրների նման: Մենք կկոչենք նրանց Սիմոն և Փիլիպոս:*

**Սիմոն.** Եղբա՛յրս, դու գիտես, որ երբեմն ինձ թվում է, որ մենք նման չենք այլ մարդկանց:

**Փիլիպոս.** Դու ի՞նչը նկատի ունես:

**Սիմոն.** Այն, որ ուրիշ մարդիկ կռվում են իրար հետ և միշտ գտնում են վիճելու թեմաներ:

**Փիլիպոս.** Բայց ես ցանկություն չունեմ վիճելու քեզ հետ:

**Սիմոն.** Ոչ էլ ես եմ ուզում կռվել քեզ հետ: Բայց հարցը դա չէ:

**Փիլիպոս.** Դու երևի ուզում ես ասել, որ մենք պետք է փորձենք վիճաբանել և տեսնենք, թե ի՞նչ կստացվի. պարզապես հասկանալու, թե դա ի՞նչ է, որ մյուսներն անում են:

**Սիմոն.** Այո՛, ճի՛շտ այդպես: Չնայած ես վստահ չեմ, որ գիտեմ, թե ինչպես են կռվում:

**Փիլիպոս.** Լա՛վ, արի՛ փորձենք: Ինչպե՞ս պիտի սկսենք:

**Սիմոն** (մի պահ մտածում է). Ես գիտե՛մ: Մի աղյուս կդնեմ երկուսիս միջև և կասեմ, որ դա իմն է: Այնուհետև դու կասես՝ ոչ, դա քոնն է, և մենք այդպես կսկսենք կռվել:

**Փիլիպոս.** Այդ դեպքում ես գնամ աղյուս բերեմ: (Բերում է աղյուսը և դնում հատակին միմյաց միջև) Հիմա, եղբա՛յր, կարող ենք սկսել:

**Սիմոն.** Շա՛տ լավ: Այս աղյուսն իմն է:

**Փիլիպոս.** Ո՛չ, դա քոնը չէ: Դա ինձ է պատկանում:

**Սիմոն.** Լա՛վ, եթե դա քոնն է, արի՛ ու վերցրո՛ւ այն:

**Փիլիպոս** (շարժելով գլուխը). Եղբա՛յր, ինձ թվում մենք չենք կարող կռվել:

**Սիմոն.** Դու ճիշտ ես: Մենք ոչ մի պատճառ չունենք կռվելու: Ես կտայի քեզ աղյուսը:

**Փիլիպոս.** Ես էլ կտայի այն քեզ: Ուրեմն հենց սա՛ է կռվի վերջը:

# Սբ Եփրեմ Ասորու զորավոր աղոթքը

Սբ Եփրեմ Ասորու այս աղոթքը ջանա՛ հաճախ արտասանել հատկապես Մեծ Պահքի ընթացքում՝ Սուրբ Հոգու առաջնորդությամբ ապրելու համար:

*Ո՛վ Տէր իմ Հիսուս, հեռո՛ւ պահիր ինձ ծուլությունից, փառասիրությունից, ամբարտավանությունից, բամբասանքից, չար խոսքերից, գործերից ու խորհուրդներից և լցրո՛ւ իմ մարմինն արիությամբ և ժուժկալությամբ, հոգիս՝ երկյուղով և դողությամբ, սիրտս՝ սիրով և արդարությամբ և միտքս՝ Քո լույսով և իմաստությամբ, բերանս՝ անդադար Քեզ սաղմոսելու գոհությամբ և օրհնությամբ: Արքա՛ Երկնավոր, պարգևիր ինձ Քո ողորմության շնորհը, որ տեսնեմ իմ մեղքերը և չդատեմ մյուսներին, քանզի Քեզ է միայն վայելում օրհնությունն ու փառքը այժմ և հավիտյանս. ամեն:*

## ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Դասը հիմնված է Սբ Պողոս առաքյալի՝ Գաղատիայի քրիստոնյաներին ուղղված խոսքերի վրա: Նա հորդորում նրանց խուսափել մարդկային սխալ և վնասակար ցանկություններից, որոնց նա կոչում է «մարմնի գործեր» և թվարկում դրանք: Դրանց շարքում են այնպիսիք, ինչպիսիք են պղծությունը, կռապաշտությունը, կախարդությունը, թշնամությունը, կռիվը, նախանձը, բարկությունը, երկպառակությունը, սպանությունը, հարբեցողությունը, անառակությունը: Պողոսը չի խոսում մարդկային բոլոր ցանկությունների մասին, այլ միայն նրանց, որ վատ են մեզ համար և խանգարում են մեզ մերձենալ Աստծուն:

Նա այս վնասակար հակումներին հակադրում է Հոգու պտուղները, այն հատկանիշները, որ մարդիկ ձեռք են բերում, երբ թույլ են տալիս, որ Սուրբ Հոգին առաջնորդի նրանց ընթացքը: Ձեր աշակերտին հարցրե՛ք թվարկել այդ «պտուղները», որքան կկարողանա հիշել: Դրանք են՝ սերը, ուրախությունը, խաղաղությունը, համբերությունը, ազնվությունը, բարությունը, հավատարմությունը, հեզությունը, ժուժկալությունը:

**Ընտանեկան հանձնարարություն**

1. Պատրա՛ստ ունեցեք գունավոր թղթեր, մկրատ և մատիտներ: Երբ ձեր երեխան թվարկի «պտուղները», գրե՛ք այդ բոլորը, և թող ընտանիքի ամեն անդամ ընտրի դրանցից մեկը կամ երկուսը և այդ գործադրի հաջորդ մի քանի ամիսների ընթացքում: Յուրաքանչյուրդ կարող եք գծել և կտրել ձեր նախընտրած «պտուղ(ներ)ը»՝ օգտագործելով գունավոր թղթերը, և Սուրբ Հոգու պտղի անունը գրե՛ք դրա վրա՝ աչքի առջև պահելու որպես հիշեցում:
2. Զրուցե՛ք միասին, թե ինչպե՛ս ընտանիքի անդամներդ պիտի գործադրեք յուրաքանչյուր «պտուղը»: Օրինակ՝ «խաղաղությունը» կարող է նշանակել հատուկ ջանք թափել չզայրանալու համար: «Ուրախությունը» կարող է ենթադրել փորձել չլինել անտրամադիր կամ թախծոտ: «Հավատարմությունը»՝ վստահանալ, որ տնային գործերն արվում են անթերի և յուրաքանչյուրը գիտի իր պարտականությունն առանց հիշեցման: «Ժուժկալությունը»՝ փորձել ագահավարի չուտել կամ չափից ավելի ժամանակ չտրամադրել քնելուն կամ հանգստանալուն:
   «Պտուղներով» կարելի է նաև առաջնորդվել մյուսների հետ վարվելիս: «Հեզությունը» կարող է լավ գործել եղբայրների ու քույրերի համար՝ հեռու պահելով նրանց միմյանց հետ կռվելուց: «Ազնվության» կամ «բարության» գործեր կարելի է ծրագրել մյուսների համար:
3. Այս ջանքերը գործադրելիս խնդրե՛ք Սուրբ Հոգու առաջնորդությունը՝ միասին արտասանելով Սուրբ Հոգուն նվիրված ձեզ քաջ ծանոթ հետևյալ աղոթքը.

*Հոգի՛ Աստծո, Աստվա՛ծ Ճշմարիտ, որ իջար Հորդանան գետ և վերնատուն*
*և լուսավորեցիր ինձ սուրբ ավազանի մկրտությամբ. մեղանչեցի Երկնքի և Քո առաջ,*
*մաքրի՛ր ինձ վերստին աստվածային Քո հրով, ինչպես առաքյալներին՝ հրեղեն լեզուներով,*
*և ողորմի՛ր քո արարածներին ու նաև ինձ՝ մեղավորիս:*

ԳԼՈՒԽ 10

# ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ ՄԵՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ



Այս գլխի առաջին դասը նվիրված է այն պատմությանը, թե ինչպես քրիստոնեությունը մուտք գործեց Հայոց աշխարհ և թե ինչպես հաստատվեց Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին: Երկրորդ դասը ներկայացնում է Հայ Եկեղեցու քարոզչական առաքելությունը հարևան երկրների ու ժողովուրդների կյանքում, որով նրանք ընդունեցին քրիստոնեությունը:



## Ծնողների համար

Այս գլխում ներկայացվում են պատմական այն դեպքերը, թե ինչպես քրիստոնությունը մուտք գործեց Հայաստան և ինչպես հիմնադրվեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին: Միաժամանակ խոսվում է մեր Եկեղեցու առաքելության և գործունեության մասին Աստծո խոսքի տարածման, ծիսապաշտության, հոգևոր ծառայության և քարոզչության ոլորտներում:

ԴԱՍ 35

# ՄԵՆՔ ԵԿԵՂԵՑԻ ԵՆՔ ԳՆՈՒՄ ԵՎ ԱՇԽԱՏՈՒՄ ՄԻԱՍԻՆ

*«Այդպես էլ թող ձեր լույսը շողա մարդկանց առջև»:* *Մատթեոս 5.16*

## ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

Ծաղկին նայելիս մենք նկատում ենք նրա գույները և զգում բուրմունքը: Մենք հավանաբար շատ չենք մտածում ծաղկի մյուս հատկանիշների մասին: Մենք սիրում ենք նստել սիրուն ու հարմարավետ բազկաթոռի վրա, բայց սովորաբար չենք մտածում նրա բաղադրիչ մասերի՝ փայտի, կտորի, զսպանակների և սպունգի մասին:

Բայց մի բան աշխատում է միայն այն դեպքում, երբ նրա բոլոր մասերն աշխատում են միասին: Ի՞նչ մասեր ունեն հետևյալ առարկաներից յուրաքանչյուրը: Գրի՛ր ամեն առարկայի անունն իր բաղադրամասերի ներքևի գծերի վրա:

*ՏՈՐԹ, ԴԱՇՆԱՄՈՒՐ, ՆՎԱԳԱԽՈՒՄԲ, ՊԱՐՏԵԶ, ՅՈՒՂԱՆԿԱՐ*

Հող
Ջուր
Արև
Պարարտանյութ
Սերմեր

_______________



Շաքարավազ
Ալյուր
Փուռ
Յուղ/կարագ
Ձու

_______________



Պաստառ
Վրձին
Շրջանակ
Լույս
Ներկ

_______________



Ջութակներ
Շվիներ
Շեփորներ
Թմբուկներ

_______________



Լարեր
Սև ստեղներ
Սպիտակ ստեղներ
Պեդալներ

_______________



*Կարդա՛ **Աստվածաշնչի** հատվածները և տե՛ս, թե ի՞նչ «մասերից» է կազմված Եկեղեցին:*

## ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ ՊԱՏՄՈՒՄ Է ՄԵԶ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՍԻՆ

*Հվլ 2.15-16, Կղ 3.16, Ա Տմ 2.1-2, Ա Թս 5.25, Բ Կր. 9.7, Եբ 13.16, Մտ. 5.16, Կղ. 3.16*

Աստվածաշնչից քաղված ներքևի հատվածները նկարագրում են, թե ի՛նչ է Եկեղեցին՝ Քրիստոսի մարմինը, և թե նա ի՛նչ առաքելության է կոչված: Սրանք նրա անհրաժեշտ «մասերն» են: Ընթերցի՛ր Հին Կտակարանից և Նոր Կտակարանից ընտրված հատվածները և մտածի՛ր դրանց պատգամի շուրջ:

*Կոչված ենք պաշտելու*

«Փո՛ղ զարկեք Սիոնի մեջ, ծոմի օ՛ր նշանակեցեք, պաղատա՛նք քարոզեցեք, հավաքեցե՛ք ժողովրդին, սո՛ւրբ ժողով գումարեցե՛ք, ընտրեցե՛ք ծերերին, հավաքեցե՛ք կաթնակեր երեխաներին, թող փեսան դուրս գա իր սենյակից և հարսը՝ առագաստից: (Հովել 2.15-16)

«Սաղմոսներով, օրհնություններով ու հոգևոր երգերով ձեր սրտերում շնորհակալությամբ օրհներգեք Աստծուն»: (Կողոսացիներին 3.16բ)

*Կոչված ենք աղոթելու*

«Արդ, ամեն բանից առաջ խնդրում եմ, որ աղոթք, խնդրանք, աղաչանք և գոհություն մատուցեք բոլոր մարդկանց համար, որպեսզի խաղաղ ու հանգիստ կյանք վարենք՝ կատարյալ աստվածպաշտությամբ և պարկեշտությամբ»: (Ա Տիմոթեոս 2.1-2)

«Եղբայրնե՛ր, աղոթեցե՛ք նաև մեզ համար»: (Ա Թեսաղոնիկեցիներին 5.25)

*Կոչված ենք տալու*

«Յուրաքանչյուրը թող տա ըստ իր սրտի հոժարության և ոչ թե ցկամությամբ կամ պարտադրված զգալով, որովհետև Աստված սիրում է նրան, ով նվիրում է զվարթառատ կերպով»: (Բ Կորնթացիներին 9.7)

*Աշխատենք և կիսենք*

«Եվ մի՛ մոռացեք բարեգործություն անել և օգնել ուրիշներին, որովհետև դրանք են Աստծո կամեցած զոհերը»: (Եբրայեցիներին 13.16)

«Այդպես էլ թող ձեր լույսը շողա մարդկանց առջև, որպեսզի նրանք տեսնեն ձեր բարի գործերը և փառավորեն ձեր Հորը, որ երկնքում է»: (Մատթեոս 5.16)

*Ուսուցանենք*

«Թող Քրիստոսի խոսքը ձեր մեջ բնակվի իր ողջ հարստությամբ, որպեսզի կատարյալ իմաստությամբ ուսուցանեք և խրատեք միմյանց»: (Կողոսացիներին 3.16)

## Խորհենք սուրբգրային հատվածների շուրջ

1. Հովել մարգարեի խոսքն ինչպե՞ս էր արտացոլվում վաղ եկեղեցու կյանքում և ի՞նչ ենք մենք անում այսօր եկեղեցի գնալիս:

2. Տալու մասին կորնթացիներին ուղղված Սուրբ Պողոսի խոսքերն ինչպե՞ս կօգնի քեզ պատասխանելու մեկի հետևյալ կարծիքին. «Ես չեմ գնում եկեղեցի, որովհետև այնտեղ միայն փող են ուզում ինձնից»:

**Բառարան**

**ԽՐԱՏԵԼ՝**

խորհուրդ տալ կամ հիշեցնել մեկին կարևոր մի բանի մասին:

## Եկեղեցին ...

Գրատախտակից արտագրի՛ր համապատասխանող զույգ նախադասությունները ներքևի նկարների կողքի գծերի վրա, որոնց վերաբերում են խոսքերը:



______________________________

______________________________

______________________________



______________________________

______________________________

______________________________



______________________________

______________________________

______________________________

# ՀԱՅԱՍՏԱՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԱՌԱՋԻՆՆ Է ԸՆԴՈՒՆՈՒՄ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՈՆ 301թ.



Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման պատմության մասին ընթերցելիս մտածի՛ր քո կարդացած սուրբգրային հատվածների մասին, որոնցում նկարագրվում էր, թե ի՞նչ է եկեղեցին և ի՞նչ անելու է կոչված: Տե՛ս, եթե կկարողանաս նման օրինակներ գտնել ներքևի պատմության մեջ:

Սուրբ Տրդատն իրավամբ եղավ Քրիստոսին հավատացող մեր անդրանիկ մեծ թագավորը: Նրանից առաջ գուցե իշխաններ եղել են, որ անհատաբար կամ ծածուկ քրիստոնյա են եղել, սակայն Տրդատ արքան է վայելում առաջինը լինելու պատիվը բոլոր իշխանների մեջ, որ պաշտոնապես ու բացեիբաց հավատաց Քրիստոսին և պատմության մեջ առաջին անգամ լինելով քրիստոնեությունը մեր երկրում և ժողովրդի կյանքում պաշտոնական կրոն հռչակեց:

Տրդատը որդին էր հայոց մեծն Խոսրով թագավորի, որ 240-ական թվականներին պարսից թագավորի սադրանքով սպանվեց Անակ Պարթև իշխանի կողմից: Սրանից հետո պարսիկներն արշավում են Հայաստան: Բարեբախտաբար արքայորդի Տրդատը ողջ է մնում, և Արտավազդ Մանդակունին նրան փախցնում է արևմուտք:

Տրդատն իր երիտասարդությունն անցկացնում է հռոմեական բանակում, կրթվում է զինվորական ասպարեզում և մեծ անուն հանում քաջագործություններով: Ի գնահատություն կատարած սխրանքների՝ կայսրը Տրդատի գլխին թագ է դնում և զորք է տալիս, որպեսզի գնա և տիրանա իր հոր գահին: 287թ. նա դառնում է հայոց թագավոր և ամուսնանում ալանների թագավորի դստեր՝ իշխանուհի Աշխենի հետ:

Պատմիչները մեզ ներկայացնում են, որ Տրդատ արքան մինչ քրիստոնյա դառնալը Պողոս առաքյալի նման դաժանորեն հալածում էր քրիստոնյաներին: Նրա հրամանով սպանվեցին Հռիփսիմյանց կույսերը, իսկ Գրիգորը տանջանքների ենթարկվելով նետվեց Խոր Վիրապի գուբը: Բայց Աստված պատժում է Տրդատ արքային, և նա սկսում է մոլեգին կերպով տառապել անբուժելի հիվանդությամբ: Այս անմխիթար վիճակում Տրդատի քույրը՝ Խոսրովդադուխտը, երազ է տեսնում, և Տիրոջ հրեշտակը նրան հայտնում է, որ ոչ ոք արքային չի կարող բուժել բացի Գրիգորից: Սուրբ Գրիգորի աղոթքով բուժվում է հայոց արքան: Այս հրաշքից հետո Տրդատը դարձի է գալիս և իր կնոջ՝ Աշխենի և քրոջ՝ Խոսրովդադուխտի հետ մկրտվում Արածանի գետի ակունքներում: Տրդատ թագավորը ժողով է հրավիրում և ասում հայոց իշխաններին. «Եկեք Աստծուց մեզ կյանքի առաջնորդ շնորհված Գրիգորին հովիվ կարգենք մեզ վրա, որպեսզի լուսավորի մեզ մկրտությամբ և նորոգի Արարչի օրենքներով և խորհուրդներով»: Շուտով Գրիգորը ձեռնադրվում է և դառնում հայոց առաջին կաթողիկոսը:

Տրդատի մեծագործություններից մեկը եղավ իր անձնական մասնակցությամբ Հռիփսիմյանց վկայարանների և հատկապես Սուրբ Էջմիածնի տաճարի կառուցումը 303թ.: Տրդատը քրիստոնեությունը պաշտոնապես դարձրեց Հայաստանի պետական կրոն և վերացրեց հեթանոսությունը: Աստվածասեր թագավորը մեծապես նպաստեց Ավետարանի քարոզության և տարածման գործին: Նա նաև առաքելակից և լուսավորչակից եղավ Սուրբ Գրիգոր Հայրապետին, որի համար դասվեց հայոց սուրբերի կարգը: Նրա հիշատակը տոնվում է Հոգեգալստյան տոնին հաջորդող 5-րդ կիրակիի նախորդ շաբաթ օրը՝ կնոջ և քրոջ հետ:

## Շարական՝ նվիրված Սուրբ Տրդատ Լուսավորչակից արքային

1. *Որդի Աստծո, դու գերբնականորեն հրաշք գործեցիր հայոց թագավորի վրա, քո բարկության գավազանով նրա* ***հիմարությունը իմաստության*** *փոխեցիր:*

2. ***Բաբելոնի բռնավորի*** *նմանությամբ անբանների կերպարանքին փոխեցիր մեծն Տրդատ թագավորին՝ անբնական բռնությամբ նվաճելով նրան:*

3. *Սուրբ Գրիգորի մաղթանքների շնորհիվ մարդկային բնության վերածեցիր մեծն Տրդատ թագավորին՝ անասնական բնությունից* ***վերստեղծելով*** *նրան:*



*Կան երեք հատվածներ Սուրբ Գրքում, որոնք սերտորեն համեմատելի են շարականի յուրաքանչյուր տան թեմայի և նշված բառերի, կապակցությունների հետ:*

*Ընթերցի՛ր ստորև նշված հղումները քո Աստվածաշնչից և յուրաքանչյուրի կողքի գծիկի վրա գրի՛ր շարականի տան համարը:*

Երեմիա 50.1-3 ______

Փիլիպեցիներին 3.21 ______

Առակներ 9.6 ______

## Մտածենք՝ ինչո՞ւ



Ոմանք կարծում են, որ քրիստոնեական հավատը պարզապես կանոնների մի շարան է: Եթե մենք հետևենք կանոններին, կգնանք դրախտ: Այսպես մտածող մարդիկ հասկանում են, որ պարտավոր են եկեղեցի գնալ, աղոթել, բաժնեկից լինել, աշխատել, տալ և ուսուցանել. ահա այն բոլոր բարիքները, որոնցով Աստծո ժողովուրդն ապրում էր Քրիստոսից առաջ և շարունակում է ապրել Եկեղեցու հովանու ներքո այսօր:

Ահա Մաքսիմոս Խոստովանողի (7-րդ դար) խրատը մեր դրդապատճառների կամ գործելու շահագրգռությունների մասին:

*Բարի համարվող մարդկային արարքներից շատերը բարի չեն այն պատճառով, ինչի համար կատարվում են: Օրինակ՝ պահքը, խոկումը, աղոթքը, սաղմոսերգությունը, բարեսիրական գործերը և հյուրասիրությունը բարի բաներ են: Սակայն երբ նրանք արվում են ինքնագովության համար, դադարում են բարի լինելուց: Մեր բոլոր արարքներում Աստված փնտրում է մեր նպատակը՝ տեսնելու, թե արդյոք մենք դա անում ենք Տիրոջ համար, թե այլ դրդապատճառներով: Տերը մեզ օրհնում է, երբ որևէ բան կատարում ենք ճիշտ նպատակի համար միայն: Քանի որ Աստծո դատաստանը նայում է ոչ թե գործերին, այլ նրա խորքում թաքնված նպատակին:*

1. Հիմք ընդունելով վերևի քո ընթերցածը՝ ինչպե՞ս կարող ենք ստուգել որևէ բան անելու մեր դրդապատճառները կամ շահագրգռությունները:
2. Ի՞նչ է պատահում բարի գործերին, երբ դրանք արվում են «ինքնագովության» համար և ոչ թե Աստծո համար՝ ըստ Մաքսիմոսի:

## ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Դասն օգնեց աշակերտներին հասկանալ, որ Աստվածաշունչը՝ Հին և Նոր Կտակարանները, շատ բան են պատմում մեզ Եկեղեցու գոյության և գործունեության մասին: Աշակերտները ծանոթացան Աստվածաշնչում Եկեղեցու նկարագրություններին և ընթերցեցին սուրբգրային այն հատվածները, որոնցում խոսվում է Եկեղեցու առաքելության և նպատակի մասին:

Դասում ներկայացվում է նաև Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հիմնադրման պատմությունը Սբ Գրիգոր Լուսավորիչ Հայրապետի և Սբ Տրդատ արքայի ջանքերով, որոնց շնորհիվ հավատի լույսը տարածվեց Հայաստան աշխարհում, և մենք դարձանք քրիստոնեությունն առաջինը պետականորեն ճանաչած ազգը:

Ձեր երեխային հանձնարարե՛ք համառոտ պատմելու Սբ Գրիգորի և Սբ Տրդատ արքայի մասին: Շատ հանրահայտ մարդիկ են կոչվել այս անուններով, թվարկե՛ք նրանցից մի քանիսին, որով ձեր երեխան կգիտակցի, որ հիշյալ սուրբերն առանցքային դեր են խաղացել Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի պատմության մեջ:

ԴԱՍ 36

# ՄԵՆՔ ՀԱՄՆՈՒՄ ԵՆՔ ՄԱՐԴԿԱՆՑ ՀՈԳԵՎՈՐ ԿԱՐԻՔՆԵՐԻՆ

*«Գնացե՛ք և բոլոր ժողովուրդներին իմ աշակերտնե՛րը դարձրեք»:*
*Մատթեոս 28.19*

## ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

Մի քանի օր առաջ ես դպրոցից տուն էի գալիս: Ուրախ քայլում էի և վայելում ժամանակս: Ճանապարհին ես նաև ուտում էի իմ ամենասիրած քաղցրաբլիթները: Ամեն ինչ լավ էր, բայց տուն չհասած լսեցի փոքրիկի լացի ձայն: Ես ոչ ոքի չտեսա և սկսեցի նայել տան չորս կողմը:

Ահա նա՝ նստած գետնի վրա, արցունքները գլորվում էին աչքերից, խեղճացած վիճակով և ձեռքին գծերով նշված ինչ-որ թերթի մի կտոր:

Ասացի. «Այս կողմերո՞ւմ ես ապրում: Գուցե քեզ օգնեմ, ձեր տո՞ւն տանեմ, եթե մոլորվել ես»: Նա պատասխանեց, որ նոր են տեղափոխվել այս թաղերը, և ինքը շփոթվել է՝ փորձելով գտնել իրենց փողոցը: Տափիկի պատրաստած քարտեզը, որ բռնել էր ձեռքին, իրականում շատ օգտակար չէր եղել: Նա ասաց. «Վստահ էի, թե գիտեմ ճանապարհը, բայց երևի սխալվել էի»:

Այսպիսով, ես ցույց տվեցի նրան իրենց փողոց հասնելու ճիշտ ճանապարհը և համոզվեցի, որ հասկացավ: Սրանից հետո նա էլ չի անհանգստանա, այլ ինձ նման կվայելի քայլելը: Ես նրան նաև տվեցի քաղցրաբլիթներիցս մեկը:

Ես երբեմն մտածում եմ այդ օրվա մասին, քանի որ հասկացա, թե որքան կարևոր է մարդկանց հասնել իրենց նեղության մեջ և կիսել նրանց հետ քո իմացածը, ինչի կարիքը նրանք ունեն: Ես չէի դիմանա, եթե կորեի և չունենայի մեկին, որ ճանապարհս ցույց տար:

Հուսով եմ, որ այդ փոքրիկը մի օր նույնպես օգնության կհասնի մեկին: Հուսով եմ՝ նրան կասի իր իմացածը կամ կուղղորդի մոլորվածին: Այլ խոսքով՝ հուսով եմ, որ նա կօգնի մեկ ուրիշին վայելել քայլելը:



***Աստվածաշնչի*** *հատվածներում տե՛ս, թե ինչպե՛ս ենք կոչված օգնության հասնել և մեր իմացածը կիսել մյուսների հետ:*

## ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ ՀՈՐԴՈՐՈՒՄ Է ՄԵԶ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՆԵԼ ՄՅՈՒՍՆԵՐԻՆ

*Մտ 28.16-20, Հհ 14.2, Գրծ 8.27-38, Տտ 2.7-8, 11-15*



«Իսկ տասնմեկ աշակերտները գնացին Գալիլիա, այն լեռը, որտեղ Հիսուսը ժամադրվել էր իրենց հետ: Երբ նրան տեսան, երկրպագեցին նրան, բայց ոմանք տարակուսեցին: Հիսուսը մոտենալով խոսեց նրանց հետ: Ապա ասաց.

-Ամեն իշխանություն տրվեց ինձ երկնքում և երկրի վրա: Ինչպես որ Հայրն ինձ ուղարկեց, այնպես էլ ես ձեզ եմ ուղարկում: Գնացե՛ք, ուրեմն, և բոլոր ժողովուրդներին իմ աշակերտնե՛րը դարձրեք: Մկրտեցե՛ք նրանց Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով: Սովորեցրե՛ք նրանց այն բոլոր պատվիրանները, որ տվեցի ձեզ: Եվ ահա ես ձեզ հետ կլինեմ միշտ՝ մինչև աշխարհի վախճանը»: (Մատթեոս 28.16-20)

«Իմ Հոր տան մեջ շատ տեղ կա, եթե այդպես չլիներ, չէի ասի ձեզ, թե գնում եմ և ձեզ համար տեղ կպատրաստեմ»: (Հովհաննես 14.2)

«Եվ ահա եթովպացի մի ներքինի, եթովպացիների Կանդակի, այսինքն՝ թագուհու բարձրաստիճան պաշտոնյաներից մեկն էր, նրա գանձերի ընդհանուր վերակացուն և Երուսաղեմ էր եկել Աստծուն երկրպագելու, այնտեղից վերադառնալիս, իր կառքի մեջ նստած, Եսայի մարգարեի գիրքն էր կարդում: Սուրբ Հոգին ասաց Փիլիպպոսին.

-Մոտեցի՛ր և այդ կառքի կողքի՛ց քայլիր:

Երբ Փիլիպպոսը վազելով հասավ կառքին, լսեց, որ նա բարձրաձայն Եսայի մարգարե էր ընթերցում: Փիլիպպոսը հարցրեց.

-Հասկանո՞ւմ ես, ինչ որ կարդում ես:

Իսկ նա պատասխանեց.

-Ինչպե՞ս կարող եմ հասկանալ, եթե մեկն ինձ չբացատրի:

Ապա խնդրեց, որ Փիլիպպոսը բարձրանա և իր մոտ նստի: Նրա կարդացած հատվածը հետևյալն էր. «Մորթվելու տարվեց նա ինչպես մի ոչխար. և ինչպես անմռունչ գառն իր բուրդը խուզողի առաջ, այնպես էլ նա չբացեց իր բերանը: Նա նվաստացավ, և չգտնվեց մեկը, որ պաշտպաներ նրան. ո՞վ պիտի պատմի նրա սերնդի մասին, քանզի նրա կյանքն ահա վերացվում է այս աշխարհից»:

Ներքինին հարցրեց Փիլիպպոսին.

-Աղաչում եմ, ասա՛, մարգարեն ո՞ւմ մասին է ասում այս բաները. իՙր մասին, թե՞ մեկ ուրիշի:

Այն ժամանակ Փիլիպպոսը, Սուրբ Գրքի այդ հատվածից մեկնելով, սկսեց նրան ավետարանել Հիսուսի մասին: Եվ մինչ նրանք գնում էին, ճանապարհին հասան մի տեղ, ուր ջուր կար: Ներքինին ասաց.

-Ահա այստեղ ջուր կա. որևէ արգելք կա՞, որ ես մկրտվեմ:

Փիլիպպոսը պատասխանեց.

-Եթե քո ամբողջ սրտով հավատում ես, կարող ես մկրտվել:

-Հավատում եմ, որ Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է,- պատասխանեց ներքինին և կառապանին հրամայեց, որ կառքը կանգնեցնի:

Փիլիպպոսն ու ներքինին, երկուսը միասին մտան ջրի մեջ, և Փիլիպպոսը մկրտեց նրան»: (Գրծ 8.27-38)

«Քո անձով բարի գործերի օրինա՛կ եղիր բոլորին, իսկ քո ուսուցումներով օրինա՛կ տուր անկեղծության, մաքրության և պարկեշտության: Մի՛շտ խոսիր ողջամտությամբ՝ տեղիք չտալու համար պարսավանքի, որպեսզի հակառակորդն ամոթով մնա և մեր մասին չարախոսելու բան չունենա:

Քանզի Աստված իր շնորհը հայտնեց, որպեսզի բոլոր մարդիկ փրկվեն: Այդ շնորհը մղում է մեզ, որ հեռանանք անհավատ կենցաղից և աշխարհիկ ցանկություններից, այս աշխարհում ապրենք զգաստությամբ, արդարությամբ ու բարեպաշտությամբ և հույսով սպասենք այն երջանիկ օրվան, երբ մեր մեծ Աստվածն ու Փրկիչը՝ Հիսուս Քրիստոսը, հայտնվի իր փառքով, որովհետև Քրիստոսն իր անձը տվեց մեզ համար, որպեսզի մեզ ազատի մեր բոլոր անօրենություններից և մաքրելով մեզ դարձնի իր սեփական ժողովուրդը՝ նախանձախնդիր բարի գործերի: Այս բաները սովորեցրո՛ւ քո հավատացյալներին: Քաջալերի՛ր նրանց և ըստ հարկի հանդիմանի՛ր՝ գործածելով հեղինակություն, այնպես որ ոչ ոք քեզ չարհամարհի»: (Տիտոսին 2.7-8, 3.11-15)

## Խորհենք սուրբգրային հատվածների շուրջ

1. ***Առաջին հատված.*** մենք կարդում ենք, որ երբ աշակերտները տեսան Հիսուսին, երկրպագեցին նրան, բայց «ոմանք տարակուսեցին»: Եթե այդ օրը լինեիր աշակերտների մեջ, կուզեիր լինել նրանց շարքում, ովքեր պաշտեցի՞ն Քրիստոսին, թե՞ քեզ համար դժվար կլիներ հավատալ, որ Հիսուսը հարություն առավ մեռելներից: *Բացատրի՛ր:*

2. ***Երրորդ հատված.*** ո՞ր բառերն են հայտնում մեզ, որ Փիլիպպոսի ջանքերը եթովպացի պաշտոնյայի հետ կապված հաջողվեցին:

3. ***Չորրորդ հատված.*** ինչո՞ւ է Սբ Պողոսը կարծում, թե քրիստոնյա ուսուցիչների համար այդքան կարևոր է բարի օրինակով ապրելը:

## Հասնել և ուսուցանել մեկ ուրիշին

Փիլիպպոսը նվիրյալ հետևորդներից էր Հիսուս Քրիստոսի, որ ջանում էր ուսուցանել մյուսներին Տիրոջ մասին: Երբ նա հանդիպեց եթովպացի պաշտոնյային, «սկսեց Հիսուսին ավետարանել նրան»: Կա՞ արդյոք մեկը՝ քո ընկերներից կամ ուսուցիչներից, որին հիշում ես յուրահատուկ կերպով քեզ Հիսուսի մասին ավետարանելիս: *Կողքի շրջանակի մեջ գծի՛ր կամ գրի՛ր նրա մասին:*

**Բառարան**

**ՔԱՐՈԶԻՉ՝** աշակերտ կամ Յիսուս Քրիստոսի հետևորդ, ով Ավետարանի պատգամը հաղորդում է մարդկանց:

Ո՞րն է ամենակարևոր բանը, որ դու ուրիշներին կասեիր Հիսուս Քրիստոսի մասին ավետարանելիս:

# Երեք սուրբեր, որ քարոզեցին նաև Հայաստանից դուրս

## Սբ Գրիգոր Լուսավորիչ և Սբ Գրիգորիս



Սբ Գրիգոր Հայրապետը Հայ Եկեղեցու մեծագույն գործիչը և ավետարանիչն է այն ասփիճան, որ «փասներեքերորդ» հռչակված Պողոս առաքյալի հետևողությամբ կոչվեց «փասնչորսերորդ» առաքյալ հայ ժողովրդի համար: Նրանով սկսվեց Հայոց Կաթողիկոսությունը: Առաջին հայ եկեղեցիները, որոնց գլուխն է Էջմիածնի Մայր Տաճարը, իր նախաձեռնությամբ կառուցվեցին: Ու վերջապես, ամբողջ հայ ժողովուրդը՝ իր թագավորով, պալատականներով, իշխաններով, բանակով, քաղաքացիներով ու գյուղացիներով առաջնորդեց Ավետարանի լույսին՝ ժառանգելով արժանապես Լուսավորիչ պանծալի փիտղոսը: Պատմական աղբյուրները վկայում են, որ Սբ Գրիգոր Հայրապետը Ավետարանի լույսը փարածեց ոչ միայն հայոց, այլ նաև մեր հարևան ժողովուրդների կյանքում: Նա մեր Եկեղեցու միակ սուրբն է, որը համաքրիստոնեական ընդունելության և փոնակափարության է արժանացել:

Գրիգորը ծնվել է մոփ 240 թվականին: Որդին էր Անակ Պարթև իշխանի, որը ընտանիքով Հայաստան էր ուղարկվել պարսից թագավորի կողմից, որպեսզի նենգությամբ սպանի հայոց Խոսրով թագավորին: Անակին հաջողվում է սպանել Խոսրով արքային, բայց նա էլ իր ընտանիքով սպանվում է հայ իշխանների կողմից: Այս կոտորածից ազատվում են երկու մանուկներ. մեկը փախցվում է Պարսկաստան, իսկ մյուսը՝ Կեսարիա: Երկրորդ մանուկն է, որ մկրտվելով Գրիգոր անունն է ստանում և պիտի դառնար հայոց ապագա Լուսավորիչը: Կեսարիայում Գրիգորը մեծանում է քրիստոնեական շրջանակներում և ստանում քրիստոնեական հիմնական դաստիարակություն և հունական բարձր կրթություն: Չափահաս դառնալուն պես ամուսնանում է Մարիամ անունով օրիորդի հետ, որը ապագայում սուրբ հռչակված Սեբաստացի Աթանագինես Եպիսկոպոսի քույրն էր: Նրանք ունենում են երկու որդի՝ Վրթանես ու Արիստակեսը, որոնք երկուսն էլ դառնում են հայոց կաթողիկոսներ՝ հաջորդելով իրենցԼուսավորիչ հորը:

Նախորդ դասերից փեղյակ ենք, թե ինչպես է Գրիգորը գալիս Հայաստան, քարոզում քրիստոնեությունը և Տրդատ թագավորի կողմից դաժան չարչարանքների ենթարկվում՝ 13 տարի անցկացնելով Խոր Վիրապի ահավոր բանտում: Գիտենք նաև, որ Տրդատ թագավորին բժշկելուց հետո Գրիգորը մեկնում է Կեսարիա ձեռնադրվելու համար: Եպիսկոպոս ձեռնադրված Գրիգորը իր հետ վերցնելով Հովհաննես Մկրտչի մասունքների մեծ մասը և նահատակված Աթանագինես Եպիսկոպոսի նշխարները հոգևորականների մեծ խմբով վերադառնում է Հայաստան: Ճանապարհին առաջինը հանդիպում է Տարոն գավառը, այսօրվա Մուշ քաղաքը և շրջակա երկրամասը, ուր փակավին շարունակվում էր կռապաշտությունը, քրիստոնեական քարոզություն է իրականացնում, կործանում է կուռքերը և նրանց մեհյանները նորոգելուց հետո սրբագործելով վերածում է քրիստոնեական աղոթավայրերի: Այստեղ հիմնում է հայտնի վանք և նրանում ամփոփում Սբ. Հովհաննես Մկրտչի մասունքները, որով վանքը կոչվում է Սբ Կարապետ:

Մինչև հայոց մայրաքաղաք Վաղարշապատ հասնելը մեծ ամբողջ ճանապարհին հանդիպող քաղաքներում ու գյուղերում քրիստոնեություն է քարոզում և հոծ խմբերով շափերին մկրտում: Դարձի եկողների մեջ հայերից բացի կային նաև այլազգիներ՝ հույներ, ասորիներ, պարսիկներ, հրեաներ, որոնք ապրում էին Հայաստանի ծայրագավառներում կամ սահմանակից երկրներում:

Արածանի գետում Տրդատ արքայի գլխավորությամբ հայոց արքունիքին, պալատական իշխաններին, բազմահազար զորքին ու ժողովրդին մկրտելուց, Վաղարշապատում Աստծուց ունեցած տեսիլքի համաձայն Էջմիածնի Մայր Տաճարը կառուցելուց և 303 թվականին օծումը կատարելուց հետո Գրիգոր Կաթողիկոսը կրկին ձեռնամուխ է լինում ընդարձակ և ընդհանուր քարոզության՝ Ավետարանի լույսը և ճշմարտությունը տանելով ոչ

միայն Հայաստան աշխարհի բոլոր կողմերը, այլ նաև նրա սահմաններից դուրս շրջակա երկրները: Հյուսիսից՝ վրացիներին, հյուսիս-արևելքից՝ աղվաններին և այլ կովկասյան ցեղերին, հարավ-արևելքից՝ ատրպատականցիներին և կորդուքներին՝ քրդերին և այլ ցեղախմբերի: Այնպես որ Լուսավորչի քարոզությունը և գործունեությունը տարածվում է Կովկասից մինչև Միջագետք, Եփրատից մինչև Կասպից ծով:

Կովկասյան բարբարոսների իբրև քարոզիչ և Աղվանքի Կաթողիկոս է ուղարկում իր թոռանը՝ Վրթանեսի որդի Գրիգորիսին, որի վարքի մանրամասներին, Աղվանքում վայրի ցեղերին քրիստոնեություն քարոզելուն և եղերական նահատակությանն արդեն իսկ անդրադարձել ենք նախորդ դասերի ժամանակ (դաս 13):



## Սուրբ Մեսրոպ Մաշտոց

4-5-րդ դարի մեր նշանավոր ազգային ու եկեղեցական դեմքերից Սբ Մեսրոպ Մաշտոցին արդարև ճանաչում ենք որպես հայոց այբուբենի ստեղծողի: Սակայն այս մեծ գյուտը հեղինակելուն զուգահեռ նա աչքի էր ընկնում նաև իր հոգևոր-քարոզչական աշխույժ գործունեությամբ:

Ծնվել է 361 թվականին, Տարոն գավառի Հացեկաց կամ Հացիկ գյուղում: Որդին էր Վարդանի, որը սերում էր Մամիկոնյանների տոհմից: Կորյունը՝ իր աշակերտը և կենսագիրը, մեզ պատմում է, որ Մեսրոպը ստացել է բարձր և ընդհանուր դաստիարակություն և տիրապետում էր հունարեն, ասորերեն և պարսկերեն լեզուներին: Իր բարեպաշտության և բարձր դաստիարակության համար Մեսրոպը դիվանադպիր է նշանակվում Խոսրով Գ թագավորի պալատում: Իր պարտականությունն էր արքայական հրամանագրերը և հրովարտակները գրել հունարեն, պարսկերեն և ասորերեն, քանի որ այն ժամանակ հայերեն այբուբեն չկար: Բայց Մեսրոպն ավելի կատարյալ կյանքի կոչում է զգում իր մեջ: Թողնում է արքունիքը Աստծո ծառայության համար, եկեղեցական կարգ ստանում և քաշվում մի վանք՝ գիշեր-ցերեկ աղոթելով ու Սուրբ Գիրքն ուսումնասիրելով: Այսպիսի կյանքով նա ինքն իրեն նախապատրաստեց այն գործին, որ նախախնամությամբ իրեն էր վերապահված: Միաժամանակ վանքում ապրելիս պատրաստվում էր նաև քարոզչական կյանքի համար: Շամբիթ իշխանի պաշտպանությամբ Մեսրոպը Ավետարան է քարոզում Գողթն գավառում, Արաքսի մերձակայքում, դարձի բերելով շատ հերետիկոսների և հեթանոսների:

Սահակ Կաթողիկոսի օրհնությամբ և Վռամշապուհ թագավորի աջակցությամբ Մեսրոպը հորինում է հայոց այբուբենը՝ հնարավորություն տալով իր ժողովրդին Աստվածաշունչը կարդալու սեփական լեզվով:

Մեսրոպ Մաշտոցը հաջողությամբ քարոզում է նաև վրացիներին և աղվաններին՝ հարմարեցնելով հայոց այբուբենը նրանց լեզուներին: Կենսագիր պատմիչը գրում է, որ հայոց, վրաց և աղվանից բոլոր կողմերը իր կյանքի ամբողջ ժամանակը զբաղված էր թագավորների, իշխաններին և բոլոր հեթանոսներին ավետարանելով՝ Ամենափրկիչ Հիսուսի անունը կրելով իր անձի վրա: Եվ ամենքին Քրիստոսով զգեստավորեց և հոգեղեն շնորհներով զարդարեց: Ուր որ Ավետարանը քարոզեց, հաստատեց նաև դպրոցներ և նշանակեց ուսուցիչներ ու հոգևորականներ՝ շարունակելու իր գործը: Իր գիտական, գրական ու թարգմանական հսկա աշխատանքների մեջ անգամ Մեսրոպը չանտեսեց իր ժողովրդի հոգևոր կարիքները: Վերստին այցելեց այն գավառները, ուր որ Ավետարանը քարոզել էր ավելի վաղ տարիներին: Սահակ Հայրապետի մահից հետո նա ստանձնում է կաթողիկոսարանի հոգևոր-քարոզչական վարչության վերահսկողությունը:

Իր սիրելի Հայրապետի մահից 6 ամիս անց վախճանվում է երանելի սուրբը և մեծ քարոզիչը շուրջ 440 թվականին և թաղվում Օշական գյուղում, որի վրա փառավոր եկեղեցի է կառուցված:

*Յուրաքանչյուր քարոզիչ սուրբի անվան կողքի տողերի վրա գրի՛ր մի բան, որ սովորեցիր նրանց օրինակից, ինչը կարող ես օգտագործել քրիստոնեական քո հավատքը քո շրջապատի մարդկանց հետ կիսելիս, ովքեր չեն ճանաչում Հիսուս Քրիստոսին:*

**Սբ Գրիգոր Լուսավորիչ** ______________________________

______________________________

**Սբ Գրիգորիս** ______________________________

______________________________

**Սբ Մեսրոպ Մաշտոց** ______________________________

______________________________

## ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Դասն անդրադառնում էր մյուսների հոգևոր կարիքներին հասնելու սուրբգրային ուսուցումներին՝ դրանք կապելով 4-5-րդ դարերի հայոց պատմության մեծագույն երեք դեմքերի՝ Սբ Գրիգոր Լուսավորչի, Սբ Գրիգորիս Աղվանից կաթողիկոսի և Սբ Մեսրոպ Մաշտոցի հատկապես քարոզչական գործունեության հետ: Ձեր երեխային հանձնարարե՛ք պատմելու այդ երեք սուրբերի վարքը:

Աշակերտները քննարկեցին նաև այն ուղիները, որոնցով կկարողանան օգտագործել երեք սուրբերի օրինակները և հավատով հասնել ուրիշների հոգևոր կարիքներին: Թող նորից զրուցեն այս թեմայի շուրջ: Միասի՛ն արտասանեք կամ երգեք Սբ Գրիգոր Լուսավորիչ Հայրապետին նվիրված Մանկունք շարականի հետևյալ տունը, որը սովորաբար երգվում է ամեն անգամ, երբ Վեհափառ Հայրապետը թափորով մուտք է գործում տաճար: *Շարականի նոտաները տե՛ս հաջորդ էջում:*

*Հրաշափառ Աստված և միշտ բարեխնամող,*
*Քո կանխագիտությամբ հայոց ազգին փրկության սկիզբ դրիր,*
*Ու պարթևական մեղավոր ազգից մեզ լուսավորիչ շնորհեցիր.*
*Ուստի նրա բարեխոսությամբ, Ո՛վ Փրկիչ, կյա՛նք տուր մեզ*
*Այժմ և քո ահավոր գալստյան ժամանակ:*

## ՀՐԱՇԱՓԱՌ ԱՍՏՈՒԱԾ ԴՁ

(Ս. Գրիգոր Լուսաւորչի շարական)

*Ներսես Շնորհալի*




## ՇՆՈՐՀԵԱ ՄԵԶ ՏԷՐ
## «Բ Ձ»

*Չափաւոր*



# Աղոթքներ 10 տարեկանների համար

## 1. Առավոտյան աղոթք

Ո՜վ ամենակալ, ամենամեծ Աստված, ընդունի՛ր առավոտյան մեր աղոթքները և մեր բանավոր պաշտամունքը, սուրբ և երկնային խորաններում: Ծագեցրո՛ւ մեր մեջ քո արդարության և իմաստության լույսը, մեզ լույսի և ցերեկի որդիներ դարձրու, որպեսզի գալիք այս օրում երկյուղածությամբ վարենք մեր կյանքը և առանց գայթակղության վերջացնենք, որովհետև Դու ես մեր օգնականը և Փրկիչը և Քեզ վայել են փառքը, իշխանությունը և պատիվը, այժմ և միշտ և հավիտյանս. ամեն:

## 2. Մեկ այլ առավոտյան աղոթք

Շնորհակալ ենք Քեզանից, ո՜վ Տեր Աստված մեր, որ Քո տեսանելի լույսով ուրախացրիր Քո բոլոր արարածներին: Մեզ էլ զորացրո՛ւ , ո՜վ Տեր, Քո պատվիրանները պահելու համար՝ այս ցերեկը և ամեն ժամանակ, որպեսզի լուսավորված մտքով միշտ քո կամքը կատարենք և գալիք բարիքներիդ հասնենք Քո բոլոր սուրբերի հետ. մեր Տիրոջ Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի շնորհով և մարդասիրությամբ, որին վայել են փառքը, իշխանությունը և պատիվը, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

## 3. Աղոթք ճաշից առաջ

Խաղաղությամբ ճաշակենք այս կերակուրները, որ պարգևված են մեզ Տիրոջից, օրհնյալ է Տերը Իր տված պարգևների համար. ամեն:

### 4. Աղոթք ճաշից հետո

**Թող Աստված անհատ և անպակաս դարձնի այս սեղանի լիությունը, որով մեզ կերակրեց և կշտացրեց, և Նրան փառք հավիտյանս. ամեն:**

### 5. Աղոթք գործ սկսելուց առաջ

**Ուղղի՛ր մեր ձեռնարկած գործերը, Տե՛ր, և մեր ձեռնարկած գործերը հաջողությա՛մբ պսակիր. ամեն:**

### 6. Աղոթք դասից առաջ

**Հոր իմաստություն՝ ո՜վ Հիսուս, տո՛ւր ինձ իմաստություն, որ խորհեմ, խոսեմ և բարին գործեմ ամեն ժամ Քո առաջ: Փրկի՛ր ինձ չար խորհերից, խոսքերից ու գործերից. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս. ամեն:**

### 7. Աղոթք օգնության և պաշտպանության

**Օգնի՛ր մեզ, Տե՛ր, օգնի՛ր մեզ, Աստվա՛ծ, Փրկի՛չ մեր, Քո անվան մեծ փառքի համար, Տե՛ր, փրկի՛ր մեզ և քավի՛ր մեր մեղքերը Քո սուրբ անվան համար: Պարսպվա՛ծ պահիր Քեզ ապավինած և հուսացած ժողովրդին Քո սուրբ և պատվական Խաչի հովանու ներքո խաղաղության մեջ: Փրկի՛ր տեսանելի և աներևույթ թշնամուց, արժանի՛ արա գոհությամբ փառավորելու Քեզ, Հոր և Սուրբ Հոգու հետ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:**

## 8. Երեկոյան աղոթք

Կյանքի հույս, աղոթքներն ընդունող, մեղքերը քավող, խնդրանքները կատարող, Քրիստո՛ս Աստված մեր, ընդունի՛ր մեր պաղատանքները այս երեկոյան ժամին՝ բարեխոսությամբ Սուրբ Աստվածածնի և աղաչանքներով Քո բոլոր սրբերի: Լսի՛ր մեզ, Տե՛ր, և ողորմի՛ր, ների՛ր, քավի՛ր և թո՛ղ մեր մեղքերը, արժանի՛ արա գոհությամբ փառավորելու Քեզ, Հոր և Սուրբ Հոգու հետ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

## 9. Աղոթք քնելուց առաջ

Բոլորի պահապան Քրիստոս, թող Քո Աջը հովանի լինի ինձ վրա գիշեր և ցերեկ, տանը նստելիս, ճամփա գնալիս, քնած թե արթուն, որպեսզի երբեք չսասանվեմ. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս. ամեն:

Աղոթքը սնունդ է հոգու,
Աղոթքը զենք է մտքին,
Աղոթքը դեղ է մարմնին: